ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Յ Ո Ւ Ս Ի Ս Ա Փ Ա Յ Լ

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

2 (12)

2023

ԵՐԵՎԱՆ

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2023

Հրատարակության է երաշխավորել Հյուսիսային համալսարանի գիտական խորհուրդը

Խմբագրական խորհուրդ

Գլխավոր խմբագիր՝ **Արմեն Ճուղուրյան**, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, տնտեսագիտության և կառավարման ամբիոնի վարիչ, Հյուսիսային համալսարան

Խմբագրական խորհրդի անդամներ

Լուսինե Ֆլջյան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ուսումնահետազոտական և միջազգայնացման գծով պրոռեկտոր, Հյուսիսային համալսարան

Աստղիկ Աբրահամյան, բանասիրական գիտությունների թեկնածու, Հյուսիսային համալսարանի լրատվության և հասարակայնության հետ կապերի ուսումնապրակտիկ կենտրոնի ղեկավար

Արթուր Ղամբարյան, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր, պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ, Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարան

Վալերի Միրզոյան, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ազատ հետազոտող

Պիթեր Կոստա, բանասիրական գիտությունների դոկտոր. պրոֆեսոր, Սլավոնական լեզուների ամբիոնի վարիչ, Պոցդամի համալսարան, Գերմանիա

Ռադովան Ստոյանովիչ, էլեկտրական ճարտարագիտության և համակարգչային գիտությունների դոկտոր, էլեկտրական ճարտարագիտության ֆակուլտետի պրոֆեսոր, Մոնտենեգրոյի համալսարան

Վիտալիյ Կոպնով, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ռեկտորի խորհրդական, Ռուսական պետական մասնագիտական-մանկավարժական համալսարան, Ռուսաստանի Դաշնություն

Գոհար Պետրոսյան, իրավագիտության դոկտոր, դոցենտ «Միջազգային հանցագործություն և արդարադատություն» մագիստրոսական ծրագրի ղեկավար, Նյու-Յուրք Սիթի համալսարան ԱՄՆ

Սերգեյ Զմիյակ, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ, «Միջազգային տնտեսություն և միջազգային տնտեսագիտական

հարաբերություններ» ամբիոնի վարիչ, Դոնեցկի պետական տեխնիկական համալսարան, Դոնեցկի Ժողովրդական Հանրապետություն

Նինո Ապցիաուրի, պատմագիտության դոկտոր, դոցենտ, Իվանե Ջավախիշվիլիի անվան Թբիլիսիի պետական համալսարան, խորհրդական, Արտաքին գործերի նախարարություն, Վրաստան

Նինո Աբեզաձե, Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, Վիճակագրական տնտեսագիտության ամբիոն, Իվանե Ջավախիշվիլիի անվան Թբիլիսիի պետական համալսարան

Իլուտա Արբիդանե, Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, Ռեզեկնեի տեխնոլոգիական ակադեմիա, Լատվիա

© «Հյուսիսային համալսարանի հրատարակչություն», 2023 թ.

ЮСИСАПАЙЛ

(Северное сияние)

НАУЧНЫЙ ЖУРНАЛ СЕВЕРНОГО УНИВЕРСИТЕТА

2 (12) 2023

Редакционная коллегия

Главный редактор – **Армен Джугурян,** доктор экономических наук, профессор, заведующий кафедрой экономики и менеджмента, Северный университет

Члены редакционной коллегии

Лусине Флджян, доктор филологических наук, профессор, проректор по учебно-исследовательской работе и интернационализации, Северный университет

Астхик Абраамян, кандидат филологических наук, руководитель учебно-практического центра по связям с общественностью и СМИ, Северный университет

Артур Гамбарян, доктор юридических наук, профессор, заведующий кафедрой теории и истории государства и права, Российско-армянский (Славянский) университет

Валерий Мирзоян, доктор философии, профессор, свободный исследователь

Питер Коста – доктор филологических наук, профессор, заведующий кафедрой славянских языков, Поцдамский университет, Германия

Радован Стоянович, доктор инженерных и компьютерных наук, профессор факультета электрической инженерии, Университет Черногории, Черногорье

Виталий Копнов, доктор технических наук, профессор, советник ректора, Российский государственный профессионально-педагогический университет, Россия

Гоар Петросян, доктор юриспруденции, доцент, директор магистерской программы “Международная преступность и правосудие”, Городской университет Нью-Йорка, Университет, США

Сергей Змияк, доктор экономических наук, доцент, заведующий кафедрой "Мировая экономика и международные экономические отношения", Донской государственный технический университет, Донецкая Народная Республика

Нино Апциаури, доктор исторических наук, доцент, кафедра арменологии, Тбилисский государственный университет имени Иванэ Джавахишвили, советник, Министерство иностранных дел, Грузия

Нино Абезадзе, доктор экономических наук, профессор, кафедра экономической статистики, Тбилисский государственный университет имени Иванэ Джавахишвили, Грузия

Илута Арбидане, доктор экономических наук, профессор, кафедра экономики и менеджмента, Резюкненская академия технологий, Латвия

HYUSISAPAYL

(Northern Lights)

SCIENTIFIC JOURNAL OF NORTHERN UNIVERSITY

2 (12) 2023

Editorial Board

Chief Editor` **Armen Tshughuryan**, Doctor of Sciences in Economics, Professor, Head of the Chair on Economic and Management, Northern University

Members of the Editorial Board

Lusine Fljyan, Doctor of Sciences in Philology, Professor, Vice-Rector for Education, Research and Internationalization, Northern University

Astghik Abrahamyan, PhD in Philology, PhD in Philology, Head of Media and Public Relations Training Centre, Northern University

Artur Ghambaryan, Doctor in Law, Professor, Head of the Department of Theory and History of State and Law, Russian-Armenian (Slavonic) University

Valeriy Mirzoyan, Doctor of Philosophy, Professor, Freelancer

Peter Kosta, Professor Doctor phil. habil, Head of the Chair of Slavic languages, Potsdam University, Germany **Vitaliy Kopnov,** Doctor of Technical Sciences, Professor, Advisor to Rector, Russian State Professional Pedagogical University, Russia

Gohar Petrossian, PhD in Law, Associate Professor, Director of International Crime and Justice MA Program, City University of New York, USA

Vitaliy Kopnov, Doctor of Technical Sciences, Professor, Advisor to Rector, Russian State Professional Pedagogical University, Russia

Radovan Stojanović, Doctor in Electrical Engineering and Computer Sciences, Professor at the Faculty of Electrical Engineering, University of Montenegro, Montenegro

Nino Abezadze, Doctor of Sciences in Economics, Professor, Chair on Economic Statistics, Ivane Javakhishvili State University**,** Georgia

Iluta Arbidane, Doctor of Sciences in Economics, Professor, Chair on Economic and Management, Resekne Academy of Technologies, Latvia

Sergey Zmiyak, Doctor of Sciences in Economics, Professor. Head of the Chair on World Economy and International Economic Relations, Donetsk State Technical University. Donetsk People's Republic

Nino Aptsiauri, Doctor of History, Associate Professor, Chair on Armenology, Ivane Javakhishvili State University, Counselor, Ministry of Foreign Affairs, Georgia

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ ՍՈՑԻԱԼ-ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ

Վալերի Միրզոյան
փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, անկախ հետազոտող
valerimirzoyan@yahoo.de

Մարդու կյանքի և մահվան իմաստի, հայ մարդկանց համակեցության լուսավոր և ստվերոտ կողմերի, «անհատ–հանրություն» բարդ և հակասական փոխհարաբերությունների, հայ ժողովրդի պատմության մե՛ր հերոսական և պանծալի, մե՛ր ողբերգական և ամոթալի էջերի մասին բազում դատողությունների և գնահատականների ենք հանդիպում Պարույր Սևակի չափածո և արձակ ստեղծագործություններում: Որքան խորն ու հուզական են աշխարհի քնարական վերապրումը և վերարտադրությունը նրա բանաստեղծական խոսքում, այնքան էլ, իսկ թերևս առավել խորն ու ընդգրկուն են վերլուծական խոսքը, գրականագիտական ուսումնասիրությունները, սոցիալ-փիլիսոփայական բնույթի զանազան դիտարկումները:

Պարույր Սևակ մտածողի հզոր ինտելեկտը, գիտության և արվեստի տարբեր ասպարեզների, հայ և համաշխարհային պատմության վերաբերյալ լայնածավալ իմացությունը, մի փոքրիկ երևույթից կամ իրադարձությունից ամփոփ եզրակացություն անելու ընդոծին կարողությունը նրան, հիրավի, դարձրել են իր ապրած ժամանակի հանրային և անհատական կեցության էական առանձնահատկությունների լավագույն գիտակը, իր խոսքով ասած՝ «մի քիչ դատավոր»: Ահա թե ինչու Սևակ բանաստեղծը մարդուն բնորոշ ապրումների և խոհերի, մարդկային սիրո և տառապանքի, երջանկության և հուսահատության համամարդկային երգիչն է, իսկ Սևակ վերլուծաբանը՝ մեր ոչ հեռավոր անցյալի լավագույն «փորձագետը», հայոց կյանքի այդ շրջանի խորագետ պատմաբանը:

Գրողը և իր փիլիսոփայությունը

Ամեն մի հասուն մարդ, առավել ևս ստեղծագործողը՝ աշխարհին նայում, ընկալում և աշխարհը «վերարտադրում» է, այսինքն՝ իր ուրույն աշխարհն է ստեղծում սեփական ոսպնյակի միջոցով՝ արժեքային համակարգի, մարդու կյանքի իմաստի ըմբռնման, հանրության հանդեպ վերաբերմունքի, ամփոփ ասված՝ կենսափիլիսոփայության լույսով: Հենց այդ կարծիքին է Պարույր Սևակը. «Անհնար է երևակայել փոքրիշատե

լուրջ գրող, որ չունի իր փիլիսոփայությունը»[1]: Այս բանը նա ասում է Վիլյամ Սարոյանի վերաբերյալ և ավելի է որոշակիացնում ամերիկահայ նշանավոր գրողի փիլիսոփայությունը. «Ըստ այս փիլիսոփայության՝ մարդիկ ծնվում են լավ ու բարի: Եվ երբ, հակառակ դրան, աշխարհում այնքան շատ է չարն ու վատությունը, ապա ոչ այն պատճառով, որ մարդը ի բնե չար ու վատ է, այլ լոկ այն պատճառով, որ նա ստիպված է այդպիսին լինել»[2]:

Ինքնին հասկանալի է, որ գրողի փիլիսոփայությունը մեկեն չի գոյանում. փիլիսոփայական որոշակի հայեցակարգի առկայությունը վկայում է անհատի սոցիալական հասունացման մասին և, իհարկե, ձևավորվում է նրա ձիրքի, ընտանիքի, տարիքի, կենսափորձի, բնավորության, կրթության (ավելի ստույգ՝ իրական կրթվածության), շրջապատի անձանց, իր արժեքային համակարգի, գրողական հավատամքի, աշխարհի և մյուս մարդկանց հանդեպ վերաբերմունքի և բազում այլ՝ տեսանելի և անտեսանելի հանգամանքների ազդեցությամբ: Եվ ուրեմն, Վիլյամ Սարոյանի փիլիսոփայությունը չէր կարող այլ լինել. «Սարոյանն օժտված է մի այնպիսի ձիրքով, որ շատ քչերն են ունենում՝ մարդկանց սիրելու դժվարագյուտ տաղանդով: Նա մարդկանց չի դատապարտում, այլ սիրում է նրանց: Ահա թե ինչու նա բացասական կերպարներ չունի»[3]:

Իր՝ Պարույր Սևակի անձի և գործի վերաբերյալ ծավալուն գրականություն կա. գրականագիտական համակողմանի ուսումնասիրությունները[4], մտերիմների ու գործընկերների հուշերը[5], անտարակույս, շատ

---

[1] Տե՛ս **Պ. Սևակ**, Անսպասելի բան, որ սպասելի էր // Երկերի ժողովածու վեց հատորով, հատ. 5, Եր.: Հայաստան, 1974, էջ 108: Այսուհետև՝ ԵԺ:

[2] Անդ:

[3] Անդ, էջ 114:

[4] Տե՛ս **Ա.Վ. Արիստակեսյան**, Պարույր Սևակ: Մենագրություն. (վերահրատարակություն), Եր.: Սովետ. գրող, 1984, **Ն. Հովսեփյան**, Պարույր Սևակի ստեղծագործությունը, Եր.: Սովետ. գրող, 1983, **Կ.Ա. Դանիելյան**, Պարույր Սևակ բանաստեղծի սխրանքը, Եր.: Լույս, 1989, **Արտ. Պապոյան**, Պարույր Սևակի չափածոյի լեզվական արվեստը, Եր.: Լույս, 1970, **Արտ. Պապոյան**, Պարույր Սևակի չափածոյի բառարան, Եր.: Երևանի համալս. հրատ, հատ. 1, 1981, հատ. 2, 1982, **Արտ. Պապոյան**, Պարույր Սևակի աշխատությունների և թարգմանությունների բառարան, Եր.: Երևանի պետ. համալս., 1986, **Դ. Գասպարյան**, Պարույր Սևակ, Կյանքը և ստեղծագործությունը, Եր.: «Նոր դար», 2001, **Ս. Գրիգորյան**, Պարույր Սևակ: Արձագանքող անտառը, Եր.: Վան Արյան, 1998, **Շ. Գրիգորյան**, Հայ պոեզիայի Քուռկիկ Ջալալին, Եր.: Զանգակ-97, 1998, **Ս. Գրիգորյան**, Պարույր Սևակը և համաշխարհային պոեզիան, Եր.: «Արմավ» հրատ., 2018, **Լ.Ս. Արզումանյան**, Պարույր Սևակի պոեմները, Եր.: Նաիրի, 2001, **Ն. Դավթյան**, Պարույր Սևակ: Գրականագիտական հայացքները, Եր.: Պարույր Սևակ, 2002, **Ս.Ն. Սարինյան**, Պարույր Սևակ. բանաստեղծության գիտությունը,

օգտակար են բանաստեղծին և մարդուն հասկանալու համար։ Բայց, առանց մանրամասնելու, շիփ-շիտակ ասենք, որ որոշ, նույնիսկ լրջմիտ հեղինակներ երբեմն չեն կարողանում խուսափել իրենց սեփական ընկալման առանձնահատկություններից, իսկ անձնական հուշերի մի մասն ակամա հորինվածք է հիշեցնում[6]։ Ինչ վերաբերում է բանաստեղծի բովանդակ ստեղծագործությունը «մարգարիտների» վերածելուն[7], ապա դա այլ բան չէ, քան մակերեսային ընթերցման սիրահարներին «դյուրացված» Սևակ մատուցելուն. պարզ ասած՝ «արջի ծառայություն» թե՛ բանաստեղծին, թե՛ ընթերցողներին։

Արդ, հնարավորինս քննադատաբար (և պատշաճ հարգանքով ու երախտագիտությամբ) մոտենալով բոլոր հրապարակումներին, փորձենք հասկանալ մեր հեղինակին՝ որոնելով նրան իր արարումների մեջ։ Ի վերջո Պարույր Սևակն ինքն է ձևակերպել մեթոդաբանական այդ պահանջը իր նշանավոր գրականագիտական հետազոտության մեջ, այն է՝ «Սայաթ-Նովային պետք է հասկանալ Սայաթ-Նովայի միջոցով և Սայաթ-Նովայի օգնությամբ»[8]։ Այս պահանջի լույսով հասկանալի է դառնում սևակյան մի հակիրճ և անակնկալ ձևակերպում, թե Հովհաննես Թումանյանը «լավագույն թումանյանագետն է»[9]։

Ահավասիկ, ծանոթանալով վաղ շրջանի ինքնաբնութագրական բնույթի բանաստեղծություններին՝ դյուրին համոզվում ենք ոչ միայն Պարույր Սևակի տաղանդի, ամենից առաջ՝ աշխարհի զուտ բանաստեղծական ընկալման, այլև սեփական կենսական ուղուն, ստեղծագործական

Եր.։ Հայաստան, 2006, Թ. Մարության, Պարույր Սևակի պոեմների գրաքննադատական արձագանքները, Եր.։ Զանգակ-97, **Ա. Սարգսյան**, Պարույր Սևակը մանկագիր, Եր.։ Հեղին. հրատ., 2004, **Ա. Սարգսյան**, Պարույր Սևակը և ժողովրդական բանահյուսությունը, Եր.։ ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010։

[5] Տե՛ս **Լ.Հ. Հախվերդյան**, Պարույր։ Խոհագրություն, Եր.։ Սովետ. գրող, 1987, **Է.Ա. Մեհրաբյան**, Նորից քեզ հետ։ Ալբոմ-ուղեցույց (հայերեն, ռուսերեն լեզուներով), Եր.։ «Պարբերական», 1990, «Ղողանջ հիշատակի։ Պարույր Սևակի մահվան 20-րդ տարելիցին», Եր.։ «Նաիրի», 1991, **Գր. Չալիկյան**, Պարույր Սևակի ու մի քիչ էլ իմ մասին, Եր.։ ՀԳՄ հրատ., 2004, **Ա. Թադևոսյան**, Իմ Պարույրը, Եր.։ ՎՄՎ-ՊՐԻՆՏ, 2007, **Ա. Փաշայան**, Պ. Սևակի հետ, Եր.։ ՎՄՎ-ՊՐԻՆՏ, 2012», **Ռ. Կարապետյան**, Իմ հուշերը Պարույր Սևակի մասին, Եր.։ Հեղ. հրատ., 2019։

[6] Այդ բանը համարձակորեն և ավելի սուր ձևով նշում է հենց հեղինակներից մեկը. «Գիտենք, որ հուշագրությունների ժանրը, իբրև կանոն, իր վրա կրում է հեղինակի երեսպաշտության կնիքը» (**Խ. Բարսեղյան**, Պարույր Սևակի «Եղիցի լույսի» ոդիսականը և ոչ միայն..., Եր.։ ՀԲՀ հրատ., 1992, էջ 7, ծան.)։

[7] Տե՛ս «Մարգարիտներ Պարույր Սևակի մտքի գանձարանից։ Աֆորիզմներ, թևավոր խոսքեր, ասույթներ», կազմող՝ Վ. Սահակյան, Եր.։ ՎՄՎ-ՊՐԻՆՏ, 2004։

[8] **Պ. Սևակ**, Սայաթ-Նովա, Եր.։ Սովետ. գրող, 1987, էջ 82։

[9] **Պ. Սևակ**, Թումանյանի հետ // ԵԺ, հատ. 5, էջ 362։

ապագային առնչվող և զարմանալիորեն հասուն ու սպառիչ ձևակերպված հավատո հանգանակի առկայության մեջ:

Անտարակույս, կասկածն ու տատանումները բնական են ամեն մի սկսնակի համար, խոհերն ու խորհրդածությունները, իրարամերժ փնտրումները և լուծումները պաշարում են ամեն մի մտածողի, մանավանդ եթե նա աներկբայորեն որոշել է իր գեղարվեստական, գիտական, հոգևոր կամ քաղաքական խոսքով դիմելու հանրությանը՝ լինելով միանգամայն վստահ, թե ինքը, իսկապես, արժեքավոր ասելիք ունի:

Սա յուրատեսակ «Լինե՞լ, թե՞ չլինել» ընդոծին հարցադրում է, որը հաստատապես՝ հոգուտ լինելու վճռելու համար նաև որոշակի համարձակություն է հարկավոր, կարելի է նույնիսկ ասել՝ «հանդգնություն»: Իրոք, սա «Ռուբիկոնն անցնելու» պես մի ճակատագրական քայլ է. դարձի ճանապարհ չկա, ուստի արժանապատվության և պատասխանատվության զգացում ունեցողից պահանջում է լավ ծանրութեթև անել այդ քայլի մոտակա և հեռակա բոլոր հետևանքները: Բնավ պատահական չէ 17-ամյա պատանու խոստովանությունը, թե «Դարձել եմ ես խոհերի ավար.... Խոհերի առաջ՝ բարդ ու անմեկին»[10]:

Ընդամենը մեկ տարի անց տեսնում ենք վճռական հանգուցալուծումը. արդեն այդ տարիքում ապագա մեծ բանաստեղծը, թերևս, առավելապես ներքմբռնողաբար զգացել է իր առաքելությունը[11], ուստի և լեցուն է վստահությամբ ու պատրաստակամությամբ՝ ընթանալու իր սեփական ճանապարհով, և կարևոր չէ՝ կլինեն կենսական պայմանները, արտաքին հանգամանքները նպաստավո՞ր, թե՞ ոչ այնքան[12].

... Ես նոր մի պոետ, անհայտ տակավին,
Խոհերի անտես մակույկին նստած՝
Չգիտեմ արդյոք կլինի՞ քամի,
Որ առաջ մղի իմ առագաստը,
Թե ինքս պիտի շապիկն իմ՝ կայմին
Առագաստ շինեմ, նոր լինեմ վստահ,
Որ երգն իմ նորեկ, նավը իմ գանձի
Պիտի ընթանա օվկիաններն ի վեր
Եվ փոթորկածուփ ծովերում անծիր,
Որպես գալիքի անմարմին նվեր,
Պիտի շնչով իր անանձնապատկան

[10] Տե՛ս **Պ. Սևակ**, Փնտրումներ // ԵԺ, հատ. 6, Եր.: Հայաստան, 1976, էջ 11:

[11] «Անշուշտ, անտարակուսելի է, որ ես բանաստեղծ եմ», սրտամոտ ընկերոջը 1942 թ. հղած նամակում ասում է Սևակը (**Պ. Սևակ**, Նամակներ // Սևակ Պ., Մուտք: Բանաստեղծություններ, Եր.: Սովետ. գրող, 1985, էջ 188):

[12] Տե՛ս **Պ. Սևակ**, Անխորագիր // ԵԺ, հատ. 6, էջ 7:

Վառվի որպես վես, սրբազան պատգամ...

Իհարկե, մեր բանաստեղծի արտահայտման ոճը տարիների հետ դեռ շատ է փոխվելու. համենայնս դեպս՝ այսքան ճոխ մակդիրների նման կուտակումը հետագայում հազվադեպ երևույթ է դառնում: Նոր բան և նորովի ասողի խոսքի անկասելի պոռթկումը լույս աշխարհ է հանել Պարույր Սևակի բառակերտման հզոր տաղանդը՝ դիպվածային արտահայտությունների մի շքահանդես («արյունացոլք չարիք», «դառնապատիր զգվանք», «իրանապիրկ քղանցք», «արնակարոտ հատուցման ծով», «օրինածնիչ ներդաշնակություն», «աստվածային խրախճահաճույք», «ժանտաժանտ աշխարհ», «գալիքնահունձ մարգագետին», «արդարավաստակ հող», «ծիրանահագի առագաստ»)՝ որպես հաստատում հետագայում նրա առաջարկելիք ձևակերպման (լեզվափիլիսոփայական յուրատեսակ աքսիոմի), թե «բառեր միշտ կան, միայն գտնողներն են քիչ»[13]: Իսկ առհասարակ, Պ. Սևակի չափածոյի բառապաշարը (այսինքն՝ առանց նրա գիտական և հրապարակախոսական աշխատությունների) ներառում է 1150 նորաստեղծ բառ[14]: Բայց ավելի կարևորն այստեղ սկսնակ ստեղծագործողի վստահությունն է, սեփական ուժերի հանդեպ հավատը, իր ասելիքի արժեքի և հանրային կարևորության խոր գիտակցումը: Հավելենք երիտասարդ մարդու ընդոծին լավատեսությունը, գալիք դժվարությունները հաղթահարելու անսասան կամքը:

Իսկ քանի որ այս բանաստեղծությունը (որի միայն սկիզբն եմ մեջբերել) գրվել է շրջադարձային 1941 թ. հուլիսի կեսին, ապա պարզ է, թե սահմանային ի՛նչ վիճակում է գտնվել երիտասարդ մարդը, հոգեկան ի՛նչ ապրումներ է ունեցել, երբ կյանքի սովորական ընթացքը, առհասարակ առտնին ամեն ինչ մեկեն հետին պլան է մղվել: Չէ՞ որ անխուսափելիորեն առաջնահերթ են դարձել Հայրենիքի պաշտպանության գերխնդիրները, ուստի և ամեն ոք իր սեփական տեղն ու դերն է ուզում գիտենալ, աշխարհակործան իրադարձությունների ընթացքի մեջ իրեն արժանավայել անելիքն ու ասելիքը հասկանալու համար. «Գնում եմ այնտեղ և սարսում չունեմ // Ես մահվան հանդեպ՝ մոլի և անգութ. . . // Իմ անվախության սրտերն աճում են // Իրար հաջորդող օրերի հանգույն»[15]:

Առհասարակ, ամեն մի հասուն մարդու առջև էլ մշտապես դրվում է կենսական այդ խնդիրը՝ ճշտել մարդկանց համակեցության մեջ սեփական տեղն ու դերը, անելիքն ու ասելիքը՝ հաշվի առնելով թե՛ արտաքին իրողությունը, թե՛ սեփական կարողությունները: Իսկ կյանքի հարահոս

---

[13] Տե՛ս **Պ. Սևակ**, Ինչ-ը, ինչպես-ը և որպես-ը // ԵԺ, հատ. 5, էջ 400:

[14] Տե՛ս **Արտ. Պապոյան**, Պարույր Սևակի չափածոյի բառարան, հատ. 1, Եր.: Երևանի համալս. հրատ, 1981, էջ 9:

[15] Անդ, էջ 8:

ընթացքի անակնկալ շրջադարձերը, անխուսափելի ավարտի գիտակցումը նույնքան անխուսափելիորեն ամեն մեկիս ստիպում են մշտապես պատրաստ լինել ամփոփելու մեր արածն ու չարածը[16].

Ուրիշ ես դառնում ամեն օր –
Իրենն է անում տարիքդ.
Առնելիքդ ուրիշ է թվում,
Ուրիշ է թվում տալիքդ:
Խստադեմ գալիքն է նայում.
Քեզանից ի՞նչ պիտի մնա,
Երբ անցնի օրվա հետ մեկտեղ
Օրերի փրփուր ալիքը:

Հենց այս սկիզբն արդեն հուշում է ապագա մեծ բանաստեղծի և մտածողի գալիք հասունացման ընթացքի, պոեզիայի բարձունքները գրավելու համար հարկավոր արարչական ներուժի, նաև ազգային և հանրային խնդիրների խորքային ընկալման և արտահայտման անզուգական պաթոսի մասին: Հիրավի, միանգամայն ճիշտ է նկատված, որ Պարույր Սևակը ծնվել էր ճիշտ ժամանակին, ճշտորեն ըմբռնեց ժամանակի ոգին. «Բանաստեղծական բնատուր ձիրքով շռայլորեն պարգևված և գիտնականի քննական վերլուծական ունակություններով շնորհված գրող-մտածողը կարողացավ ըմբռնել քսաներորդ դարի 60-ական թվականների ոգին և գտավ այն մարմնավորելու գեղարվեստական սեփական եղանակները, ինչպես ասում են՝ ծիածանի գույների մեջ էլ պահելով իր անհատական երանգները»[17]:

Սակայն, ավա՜ղ, ճշմարտություն է նաև այն, որ չենք կարող ասել, թե նա կատարեց իր կենսական առաքելությունը. բնա՛վ, եթե միայն եղերական մահը չընդհատեր նրա ստեղծագործական թռիչքը...

Սևակի մարդաբանությունը

Տարբեր առիթներով, արձակ և չափածո խոսքում, Պարույր Սևակն անդրադարձել է մարդու հանրային կեցության առանձնահատկություններին, կենսական ընթացքի, պայմանական ասենք՝ որոշ օրինաչափություններին, ձևակերպել դրանք իրեն հատուկ սեղմ և հատու նախադասությունների ձևով.

❖ «**Ա**նհնար է ապրել առանց հիասթափման, ինչպես որ ընթանալ՝ առանց սայթաքումի, գործել՝ առանց սխալի, մեծանալ՝ առանց հագուստի

[16] Տե՛ս **Պ. Սևակ**, «Ուրիշ ես դառնում ամեն օր....» // ԵԺ, հատ. 1, Եր.: Հայաստան, 1972, էջ 267:
[17] Տե՛ս **Արտ. Պապոյան**, Պարույր Սևակի չափածոյի լեզվական արվեստը, էջ 8:

կարճությունն ու նեղությունը զգալու: Ճիշտ այդպես էլ՝ ստվեր չի լինում լոկ այնտեղ, որտեղ լույս չկա, որտեղ համատարած մթություն է, և տաքություն զգալու համար պարտադիր է առկայությունը սառնության»[18]:

❖ «Առանց հավատի հեշտ չէ մեռնելը, // Իսկ ապրելն... արդեն անտանելի է»[19]:

❖ «Մի՛ վախեցեք անկեղծ խոսքից. // Անկեղծ խոսքը չի սպանում, // Փակ խոցեր է միայն բանում»[20]:

Ամեն մի ընթերցողի, անտարակույս, քաջածանոթ է երկու արմատապես հակադիր կենսափիլիսոփայությունների հանրային դրսևորման վառ ու ցայտուն համադրումը Պ. Սևակի նշանավոր «**Մարդ էլ կա, մարդ էլ**» բանաստեղծության մեջ, իր թևավոր խոսք դարձած հանճարեղ կրկներգով՝ «Մարդ կա՝ ելել է շալակն աշխարհի, // Մարդ կա՝ աշխարհն է շալակած տանում»[21]:

Եվ նման դիտարկում-բնութագրումը բնավ միակը չէ: Մարդկանց վարքագծի տարբերակված գնահատման, հոգեվիճակների արտաքին դրսևորման արձանագրման տեսակետից դիպուկ, թարմ և ամբողջական մի պատկեր է «**Լաց էլ կա, լաց էլ**» բանաստեղծությունը[22].

Մեկը լալիս է նորածընի պես՝
Ճչում է, սակայն... արցունքներ չկան:

Մեկն էլ բերանից ծպտուն չի հանում,
Բայց արցունքներն են շիթ-շիթ լճանում:

Մեկն էլ, ինձ նման (գուցե նաև՝ քե՞զ),
Բարձր ճչալու սովոր չէ բնավ,
Եվ արցունքներն էլ աչքից չեն հորդում,
Այլ հոսում են ներս
Ու կիտվում դանդաղ
Չեչաքարի պես ծակծկված սրտում:

Զգայուն, մտախուզական ընդգրկուն հայացքի և վերլուծական հզոր մտքի տեր, մարդկային արարածի լուսավոր և ստվերոտ կողմերի մեջ անվարան խորացած բանաստեղծը հիմք և իրավունք ունի ասելու «Ինչո՞ւ

[18] Տե՛ս **Պ. Սևակ**, Ամենաերջանիկ մարդը // ԵԺ, հատ. 5, էջ 76:
[19] Տե՛ս **Պ. Սևակ**, Եվ այր մի Մաշտոց անուն // ԵԺ, հատ. 4, 1973, էջ 261:
[20] Տե՛ս **Պ. Սևակ**, Աղաչում եմ // ԵԺ, հատ. 1, էջ 417:
[21] Տե՛ս **Պ. Սևակ**, Մարդ էլ կա, մարդ էլ // Անդ, էջ 175:
[22] Տե՛ս **Պ. Սևակ**, Լաց էլ կա, լաց էլ // Անդ, էջ 337:

թաքցընեմ. // Ես ճանաչում եմ ու գիտեմ մարդուն: // Ի՞նչ ասես չկա նրա փակ սրտում»[23].

Իսկ այլ կերպ չի էլ կարող լինել. գաղտնիք չէ, որ մարդ արարածի մեջ թե՛ կենդանական սկիզբ կա, թե՛ բանական: Թումանյանական խորունկ բնութագրումը, թե «ու հեռու է մինչև Մարդը իր ճամփան»[24] յուրովի բացված է Պարույր Սևակի խոսքում[25].

Մենք դուրս ենք եկել մութ քարանձավից
Միլիո՛ն ու միլիո՛ն տարիներ առաջ:

Մենք դուրս ենք գալիս նո՛ւյն քարանձավից
Ամե՞ն ակնթարթ:

Նո՛ւյն քարանձավն է մեզ հետապնդում
Մեր ներսի՞ց արդեն:

Այո՛, ներսից, և մարդը դա պիտի գիտակցի և ոչ թե արտաքին հանգամանքները վկայակոչի, արդարացում որոնի: Բայց մինչ դատապարտելը հարկավոր է հասկանալ, պարզել դրա պատճառը. ծանրագույն մի խնդիր, որի լուծումը, երբեմն, թվում է, դուրս է մարդկային ըմբռնողականության հնարավորություններից, բայց խնդիր, որը մշտապես հառնում է մարդաբան-փիլիսոփայի առջև: Եվ, ուրեմն, զարմանալի չէ բանաստեղծի աղերսանքը Աստծուն՝ բացատրել, օգնել հասկանալու, թե ինչ է կատարվում նրա արարչագործության պսակի հետ՝ բանականությամբ օժտած, երկնառաք բազում շնորքների տեր մարդ արարածին[26].

Ինչի՞ց, տե՞ր Աստված, ինչի՞ց է, ինչո՞ւ
Որ ամենից շո՛ւտ և ամենից շա՛տ
Իրեն՝ մարդու մեջ հենց մարդն է կորչում:

---

[23] **Պ. Սևակ**, Հավատում եմ // Անդ, էջ 405: Հանրաճանաչ այս բանաստեղծության վերջին տողը Պարույր Սևակի մտերիմներից մեկը մեջբերում է այլ կերպ՝ «Ինչ ասես չկա նրա փափուկ սրտում» (**Ա. Թադևոսյան**, Իմ Պարույրը, Եր.: ՎՄՎ-ՊՐԻՆՏ, 2007, էջ 101): Կարծում եմ, սա զուտ հիշողությամբ մեջբերելուց առաջացած տարբերություն է. մինչդեռ տրամաբանորեն՝ հատկապես «փակ» սիրտն իմանալը, դրա ներսը թափանցելու կարողությունն է հիմք տալիս բանաստեղծին ասելու, թե ինքը «ճանաչում» է մարդուն, նրա հակասական բնույթն ու իրարամերժ արարքները (ու, այդ ամենով հանդերձ, հավատում է մարդուն):

[24] Տե՛ս **Հովհ. Թումանյան**, «Բերանն արնոտ Մարդակերը էն անբան....» // ԵԼԺ տասը հատորով (վերախմբ. հրատ), հատ. երկրորդ, Եր.: ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, 2018, էջ 36:

[25] Տե՛ս **Պ. Սևակ**, Հիմն քարանձավի // ԵԺ, հատ. 2, 1976, էջ 206:

[26] Տե՛ս **Պ. Սևակ**, Անարժեքության տապկնոցում // ԵԺ, հատ. 6, էջ 196:

Այդուհանդերձ, ասված է արդեն. «Ես ճանաչում եմ ու գիտեմ մարդուն»:

Սա, իհարկե, հույժ պատասխանատու հայտարարություն է, որի հիմքը և հենքը սևակյան ամբողջ ստեղծագործությունն է: Սա նաև գրողֆիլիսոփայի առաքելությունն է, նրա հոգևոր աշխատանքի գերնպատակը, այն է՝ հաղթահարել մարդու օտարումը մարդկայինից, մարդու մեջ ամենից առաջ հաստատել մարդկայնությունը: Ուստի հույժ հատկանշական է, որ սևակյան համակեցության վարքականոնի մեջ տեսնում ենք համապատասխան դիտարկումներ, անհատի և հաստատությունների վարվելակերպին ներկայացվող որոշակի պահանջներ.

✓ «**Ու**րիշներից արժանապատվության հարգանք կարող է պահանջել լոկ նա, ով արժանապատվության զգացում ունի ինքը»[27]:

✓ «**Մ**ենք ուզում ենք գործի լեզո՞ւն, // Բայց ո՛չ իբրև երկանք ստի // Ու ջրաղաց խաբեության»[28]:

✓ «**Եվ** մի՛ կարծիր իզուր, // Թե չբերեց բախտըդ // Բախտ բերելըս ո՛րն է, // Նրան ձե՛ռք են բերում...»[29]:

✓ «**Թ**ե ոստայնի պես ստեր են հյուսում, // Եվ դու կեղծիքը ճեղքել ես ուզում, // Պիտի սովորես ստողի լեզուն»[30]:

Մարդաբանական և վարքաբանական այդօրինակ ստույգ դիտարկումները երբեմն մատուցվում են սևակյան ուրույն երգիծանքով. «Իսկ հապա սրա՞ն, // Որ ասես լինի առածի պարան, // Հապա փո՛րձ արա ու ցա՞խ դիր վրան...»[31]:

Իսկ իր սեփական կենսադիրքորոշումը Պարույր Սևակը հաճախ արտահայտում է շիփ-շիտակ խոստումների և խոստովանությունների, ինքնաբացահայտումների և ինքնաբնութագրումների ձևով. դրանք օգտագործենք որպես Սևակին հասկանալու բանալի, ինչպես որ, հիշեցնեմ, հենց ինքն է վարվում Չարենցի ինքնաբնութագրումների վերլուծությամբ[32]: Եվ իր քնարական հերոսի շուրթերով սեփական հոգեվիճակն է բնութագրում. «Ես՝ պատրանազերծ, // Բայց և հուսազեն»[33], «Ինքնա-

---

[27] Տե՛ս **Պ. Սևակ**, Ազգային սնապարծություն և ազգային արժանապատվություն // ԵԺ, հատ. 5, էջ 299:

[28] Տե՛ս **Պ. Սևակ**, Դարակեսի հիմնը // ԵԺ, հատ. 2, էջ 79:

[29] Տե՛ս **Պ. Սևակ**, Ուշացած իմ սեր // ԵԺ, հատ. 3, 1973, էջ118:

[30] Տե՛ս **Պ. Սևակ**, Անլռելի զանգակատուն // ԵԺ, հատ. 4, 1973, էջ 65:

[31] Տե՛ս **Պ. Սևակ**, Չեմ հարգում // ԵԺ, հատ. 1, էջ 381:

[32] Տե՛ս **Պ. Սևակ**, Ե. Չարենցը և արդիականությունը // ԵԺ, հատ. 5, 1974:

[33] Տե՛ս **Պ. Սևակ**, Առավոտ լուսո // ԵԺ, հատ. 2, էջ 9:

դժգո՛հ, // Ինքնապարսա՛վ // Ու խռովո՛ւն»[34], «Ես՝ մի հեթանոս առայսօր ծպտյալ»[35]:

Եվ թեպետ ինքն էլ բացատրում է, թե չպետք է միամտորեն («նաև լաց լինելու չափ ծիծաղելի է չհասկանալ») նույնացնել հեղինակին և իր քնարական հերոսին («բանաստեղծությունը մի քիչ ավելին է, քան ինքնակենսագրությունը»[36]), այդուհանդերձ, Սևակի իրական «Ես»-ը ավելի քան անսքող է (հիրավի՝ **բանաստեղծը ափի մեջ**՝ ինքնաբացահայտման տեսակետից, թերևս, աննախադեպ մեր գրականության մեջ).

✓ «Հանուն գալիք վառ խարույկի ես պատրաստ եմ այսօր ծխալ»[37]:

✓ «Եթե շուրջս խավար լինի՝ // Մարդկանց համար փայլատակեմ, // Հասակով մեկ փռվեմ գետին // Վհատության ճամփեն փակեմ»[38]:

✓ «Ինչ որ անում եմ՝ // Կրքով եմ անում // Անում եմ թափով, // Եռանդով ամբողջ՝ // Վատնելով ավյուն, // Ծախսելով արյուն....»[39]:

✓ «Չե՞մ ուզում կռվել հիմարների հետ, // Չե՛մ ուզում կռվել. // Էլ ջիղ չմնաց»[40]:

✓ «Հրաժարվում եմ // Ինչից որ կուզեք՝ // Նույնիսկ սեփական հպարտությունի՞ց: // Բայց ո՛չ թանկ նստող ճշմարտությունից»[41]:

✓ «Աշխարհի մասին ինչպե՞ս մոռանամ, // Աշխարհի հոգսից ինչպե՞ս հեռանամ»[42]:

✓ «Օդում լավ ձե՞ռք է մնացել կախված՝ սիրո՛վ կսեղմեմ. // Անարատ մի սի՞րտ է զուր տեղը դաղված՝ ցա՛վը կմեղմեմ»[43]:

✓ «Խոստանում եմ // Բաց ճակատով զուր չխփվել հաստ պատերին: // Ինչի՞ համար. // Էլի՛ պատը կմնա պատ, // Կպակասի մի լավ ճակատ»[44]:

✓ «Խրատելը հեշտ է, դժվարը խրատվելն է: Եվ այս ճշմարտությունը հավասարապես վերաբերում է ինչպես գրողին, այնպես էլ ընթերցողին: Հավատացնում եմ, որ ես վարժ եմ խրատվելու դժվար գիտության մեջ»[45]:

---

[34] Տե՛ս **Պ. Սևակ**, Ճակատամարտ պատի հետ // Անդ, էջ19:
[35] Տե՛ս **Պ. Սևակ**, Անահիտ // ԵԺ, հատ. 6, էջ166:
[36] Տե՛ս **Պ. Սևակ**, Իմ ընթերցողներին // ԵԺ, հատ. 5, էջ 233:
[37] Տե՛ս **Պ. Սևակ**, Որդուս // ԵԺ, հատ. 1, էջ 174:
[38] Տե՛ս **Պ. Սևակ**, Ծնվել եմ // Անդ, էջ 361:
[39] Տե՛ս **Պ. Սևակ**, Անտարբերության թշնամի // ԵԺ, հատ. 6, էջ 100:
[40] Տե՛ս **Պ. Սևակ**, Խուսափում եմ // ԵԺ, հատ. 1, էջ 431:
[41] Տե՛ս **Պ. Սևակ**, Հրաժարվումեմ // ԵԺ, հատ. 6, էջ 44:
[42] Տե՛ս **Պ. Սևակ**, Ինքս ինձ հերքում եմ // ԵԺ, հատ. 1, էջ 360:
[43] Տե՛ս **Պ. Սևակ**, Հայտարարում եմ // Անդ, էջ 377:
[44] Տե՛ս **Պ. Սևակ**, Խոստանումեմ // Անդ, էջ 390–391:
[45] Տե՛ս **Պ. Սևակ**, Իմ ընթերցողներին // ԵԺ, հատ. 5, էջ 236:

✓ «Հաճախ լռում եմ, // Երբ ճիշտ ասածըս դիտմամբ ծռում են»[46]:

✓ «Իմ բախտը բերեց. // Ես գրչիս կո՛թը հաճախ ծծեցի // Ու հենց դրանո՛վ հաճախ կշտացա, // Բայց ո՛չ երբեք գրիչ ծախելով...»[47]:

Անհատի ինքնաճանաչումը բարդ, հակասական, երբեմն տանջալից ընթացք է. դա սոսկ սեփական անուն, ազգանունը, տարիքը, զբաղմունքը, միջավայրը գիտենալը չէ, ոչ էլ հայելու մեջ իր արտացոլումը տեսնելը կամ էլ արտաքուստ տրվող դրական կամ բացասական կարծիքներն ու գնահատումներն իմանալը (մանավանդ՝ դրանց կանխակալ դասդասումը). դա անվերջանալի ընթացք է, սեփական «ես»-ի մեջ մշտական ինքնաբնկղմում, ինքնազննում, ինքնադատաքննություն, որից հետո և որի հիմամբ անհատը վստահաբար այլոց է ներկայանում՝ ինքնամատուցվում:

Ի դեպ, Պարույր Սևակն ինքը, բարձր գնահատելով Սիլվա Կապուտիկյանի անկեղծ խոսքը, սեփական «Ես»-ի անսքող մատուցումը ընթերցողին, նկատում է, որ քիչ բանաստեղծներ են համարձակվում նման «հոգեկան մերկության», որովհետև միշտ չէ, որ անկեղծությունը պատշաճ կերպով է գնահատվում ընթերցողների և քննադատների շրջանում: Սևակի ամփոփումը աներկբա է. «Եվ պիտի ցավի ոչ թե բանաստեղծը, որ ոմանց դուր չի գալիս իր անկեղծության պատճառով: Պիտի ցավեն նրանք, որոնց դուր չի գալիս այդ անկեղծությունը»[48]:

Թերթելով Պարույր Սևակի ստեղծագործությունները, մենք երբեմն նկատում ենք նրա կենսափիլիսոփայության մի բնորոշ կողմը: Հիրավի, անցյալի մեծ մտածողների իմաստությունը, քանիցս կրկնված անբեկանելի, հավիտենական ճշմարտությունները, հանրահայտ տարբեր դիտարկումները այնքան նրբորեն են հյուսված սևակյան որևէ ասույթի մեջ՝ նորովի և տպավորիչ մատուցմամբ (և ինքն էլ դա շատ է կարևորում. «Հնագույն ճշմարտությունները հաճախ են վերստին արդարացնում իրենց»[49]).

✓ «Տառապանքից չեն մեռնում, չէ՛, այլ ավելի են պնդանում, // Ապաքինված սիրտը հետո գալիք ցավը հեշտ է տանում»[50]:

✓ «Մարդը մարդ է հենց այնքանով, // Որ մշտապես ելք է ճարում չընկճվելու»[51]:

---

[46] Տե՛ս **Պ. Սևակ**, Հավատում եմ // ԵԺ, հատ. 1, էջ 404:

[47] Տե՛ս **Պ. Սևակ**, Ճամփեզրի խոտը // ԵԺ, հատ. 2, էջ 191:

[48] Տե՛ս **Պ. Սևակ**, Ս. Կապուտիկյանի մտորումները ճանապարհի կեսին // ԵԺ, հատ. 6, էջ 385:

[49] Տե՛ս **Պ. Սևակ**, Այն տարիքում, երբ... // ԵԺ, հատ. 5, էջ 210:

[50] Տե՛ս **Պ. Սևակ**, Որդուս // ԵԺ, հատ. 1, 1972, էջ 173:

[51] Տե՛ս **Պ. Սևակ**, Փրկարար թվաբանություն // ԵԺ, հատ. 2, էջ 192:

✓ «**Բ**ոլո՛ր օրենքները նրա՛ համար են լոկ, // Որ պաշպանեն կյանքում մարդկայի՛նը, // Մարդո՛ւն»[52]:

✓ «**Շ**ատ անգամ նույնիսկ ատելությունը // Շուռ տված սիրո պատկեր է կրում»[53]:

✓ «**Կ**ան խայտառակ ժամանակներ, // Երբ մարդ եթե իր բերանին կապ չի դնում, // Ապա նրա ձեռք ու ոտքին // Ուրիշներն են դնում կապանք»[54]:

Խոհուն ընթերցողին մտորումների է մղում «Օրվա երգը» բանաստեղծությունը[55].

Մենք հասկանալով՝ հաճախ չենք զգում
Մեր ապրած օրվա իմաստը խորին.
Հաճախ մեզ օրը թվում է անգույն,
Թվում է՝ ոչինչ չփոխեց կյանքում
Ու չպարգևեց ոչինչ աշխարհին:

Ահա թե ինչու բանաստեղծը մերժում է «թթվադեմ փնթփնթոցը» և, ընդհակառակը, քարոզում կենսական լավատեսություն[56].

Իսկ շատ չեղա՞վ մեր այս տտիպ քմծիծաղը
Սրա՛-նրա՛
Ամե՛ն ինչի,
Կյանքի՞ վրա....
Թե չէ անվերջ փնթփնթալով կյանքի վրա՝
Արդեն կյանքն ենք վիրավորում շա՛տ ավելի,
Քան կյանքն է մեզ վիրավորել...

Շատ դիպուկ և տպավորիչ է ասված: Եվ ինքնին հասկանալի է, որ մի բան է անհիմն կամ չնչին առիթով փնթփնթոցը, բոլորովին այլ բան՝ տեղին ու արդարացի դժգոհությունը, հանրային կյանքում, մարդկային փոխհարաբերություններում արմատավորված կեղծիքի արձանագրումը[57].

Դժվար բան է սուտ ասելը,
Բայց սուտ ասելն ավելի է հեշտ ու դյուրին,
Քան թե անվերջ սուտ լսելը:
Ռետինաձև սուտ ծամելուց մենք զզվել ենք:

---

[52] Տե՛ս **Պ. Սևակ**, Ուշացած իմ սեր // ԵԺ, հատ. 3, Եր.: Հայաստան, 1973, էջ 136:
[53] Տե՛ս **Պ. Սևակ**, Բանաստեղծի բախտը // ԵԺ, հատ. 2, էջ 200:
[54] Տե՛ս **Պ. Սևակ**, Դարակեսի հիմնը // ԵԺ, հատ. 2, էջ 78:
[55] Տե՛ս **Պ. Սևակ**, Օրվա երգը // ԵԺ, հատ. 1, էջ 68:
[56] Տե՛ս **Պ. Սևակ**, Ծառերի օգնությամբ // ԵԺ, հատ. 6, էջ 143, 144:
[57] Տե՛ս **Պ. Սևակ**, Դարակեսի հիմնը // ԵԺ, հատ. 2, էջ 79:

Պարույր Սևակի ժամանակակիցներս, խորհրդային իշխանության օրոք ապրածներս լավ տեղյակ ենք այդ հարկադրական վիճակից, բայց քչերս էինք ունակ դրա մասին բացեիբաց ասելու: Եվ անիմաստ էլ էր թվում շիփ-շիտակ այդպես վարվելը. իրոք, այդ իրականությունը, ասես, բետոնե պատ լիներ, որին առճակատվելիս, բանաստեղծի խոսքով, սոսկ «կպակասեր մի լավ ճակատ»[58]: Չէ՞ որ «ռետինաձև սուտը» դարձել էր ապրելակերպ, մտածելակերպ, անհատին պարտադրված վարքականոն, ամենից վատթարը՝ հանրային միջավայր և արժեքային համակարգ, մարդու մեջ մարդկայինը ճնշող դաժան իրողություն: Բայց ոչ միայն առանձին անհատն է տուժում, զրկվում լիարժեք ինքնաբացահայտման և անկաշկանդ զարգացման հնարավորությունից. տուժում է նաև մարդկությունը, ինքն իրեն է կողոպտում, քանի որ այդկերպ՝ ստապատիր մթնոլորտում կորսվում է ամենամեծ հարստությունը՝ մարդկային ստեղծարար ներուժը:

Այդպես պիտի հասկանանք Պարույր Սևակի դառը արձանագրությունը[59].

Հարյուր տարին մեկ են ծնվում
մեծություններն այս աշխարհի,
Բայց ամեն օր հարյուր մեծ է գալիս աշխարհ.
Ծնվում են մեծ, բայց չեն թողնում, որ դառնան մեծ:

Պարույր Սևակի ամբողջ պոեզիան, հիրավի, մեզ համար կեղծիքի բացահայտում էր, անհատական, հանրային և ազգային ճշմարտության հաստատում, արդարության և մարդկային արժանապատվության հանդեպ հավատի վավերացում[60]: Նրա ձայնը բարձր ու համարձակ էր հնչում

[58] «1960-ական թթ. կեսերից սկսած Սևակը շատ սուր էր տանում հանրային կյանքի բարոյազրկումը, ինչը հասունացավ նրա մեջ որպես մեծ դժգոհություն և ծնունդ տվեց «Եղիցի լույս» գրքին: Իր ներքին մղումով նա ինքնաբերաբար գնում էր քաղաքացիական խիզախման: Մեծ դժգոհությունից ծնվում էր քաղաքացի բանաստեղծի բողոքի ձայնը: Բայց ժամանակները ուղիղ և շիտակ հարաբերության համար չէին, այլ ընդդիմության կամ... դիմակի: Ահա ժամանակի հանրային կյանքից ծնված ճշմարտությունը ժամանակի երեսին ասելու համար՝ նա ստիպված եղավ օգտագործել դիմակներ, այդ թվում՝ խեղկատակի ու ծաղրածուի: Դիմակը դարձավ նրա ներքին պայթյունի արտաքուստ քողարկված ներկայությունը ժամանակի մեջ» (**Դ. Գասպարյան**, Պարույր Սևակ. Կյանքը և ստեղծագործությունը, Եր.: «Նոր դար», 2001, էջ 284):

[59] **Պ. Սևակ**, Դարակեսի հիմնը, էջ 80:

[60] Այդուհանդերձ, չարժե, ըստ իս, կորցնել չափի զգացումը և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավորին, Հայաստանի գրողների միության վարչության քարտուղարին, պետական մրցանակի դափնեկրին ընթերցող հանրությանը մատուցել որպես հասարակարգի դեմ մարտնչող «այլախոհի» ավարտուն կերպար.

նաև այն պատճառով, որ հանրային կյանքում առկա մերժելի երևույթները նշում էր սեփական, գրողների միջավայրում, գրական հանրության մեջ եղածը մատնացույց անելով. «. . . . Այդպիսին է մեր գրական միջավայրը, որտեղ իշխում է հաշիվն ավելի, քան անկեղծությունը, որտեղ անհրեսներից ու լաչառներից վախենում են ավելի, քան հարգում ու գնահատում են տաղանդավորներին, որտեղ անձնական ցավը ծածանվում է դրոշակի պես, իսկ համընդհանուր շահը դրոշակի կոթի տեղ էլ չի դրվում»[61]:

Հասկացողը հասկանում էր (զուր չէր ասում՝ «փառք կարդացածը հասկացողին»), որը մասը ամբողջի արտացոլումն է, որ այդպես ապականված է ամբողջ հասարակությունը, և որ մարդու մեջ մարդկայինը պահպանելն ու հզորացնելը գրողի քաղաքացիական առաքելությունն է:

Ազգային սնապարծություն և ազգային արժանապատվություն

Այս վերնագրով հոդվածում զետեղված է Պարույր Սևակի նշանավոր ելույթը գրողների միության հերթական համագումարում, 1966 թվին: Մինչ այդ բացառիկ կարևորության հարցին հանգամանորեն անդրադառնալը, նկատենք, որ ինչպես ամեն մեկիս, Պարույր Սևակ մտավորականին նույնպես մտահոգել է հայոց պատմական ընթացքի անհասկանալի որոշ շրջադարձեր, դժվար բացատրելի իրադարձությունները, թվում է՝ ոչ անխուսափելի բազում կորուստներն ու զրկանքները: Եվ ամեն մեկս էլ, իսկապես, կարող է կրկնել Սևակի հռետորական հարցը. «Ո՞վ է հասկացել քմայքը բախտի, // Եվ այն էլ .... հայոց»[62]:

Ընդհանրապես, սեփական ժողովրդի հանդեպ բանաստեղծի տածած որդիական սիրո դրսևորումները սփռված են բազում բանաստեղծություններում, ոչ միայն հուզական խոստովանության, այլև խոհափիլիսոփայական հարցադրման ձևով: Եվ որքան խորն ես թափանցում հայոց պատմության իրադարձությունների մեջ, որքան ավելի ես քեզ նույնաց-

---

«Եվ նա լեռնացավ կեղծիքի ու ստի գրականության դեմ, պատնեշեց դրա ճանապարհը, փրկելով ժամանակակիցներիս պատիվը, մարդկային արժանապատվությունը: Նա ծառացավ մի հասարակության դեմ, որ նրան չէր կարող չկործանել, որովհետև Պարույր Սևակը զարկում էր նրա հիմքերի հիմքին՝ կեղծիքի ու ստի հիմնասյուներին» (**Կ.Ա. Դանիելյան**, Պարույր Սևակ բանաստեղծի սխրանքը, Եր.: Լույս, 1989, էջ 8):

[61] Տե՛ս **Պ. Սևակ**, Ազգային սնապարծություն և ազգային արժանապատվություն, էջ 302–303:

[62] Տե՛ս **Պ. Սևակ**, Անլռելի զանգակատուն // ԵԺ, հատ. 4, Եր.: Հայաստան, 1973, էջ 18:

նում տառապանքի ճանապարհով անցած հարյուրավոր հայ սերունդների հետ, այնքան ավելի հասկանալի են դառնում սևակյան տողերը[63].

Զարմանքով եմ ես միշտ նայում քո անցյալին,
Քո անցյալին և՛ տանջալից, և՛ պանծալի....
Ինչպե՞ս ես դու, մեղվի նման, անգամ թույնից
Նեկտար քաղել, մեղրը քամել դառնությունից....

Այո՛, զարմանք, գնահատում, հիացմունք և հպարտություն, որ տարիներ հետո կդառնա հայոց հարատևության հզորազոր մի բանաձև. «Քիչ ենք բայց հայ ենք....Կա՛նք: Պիտի լինե՛նք: Ու դեռ՝ շատանա՞նք»[64]:

Հայոց ողբերգական պատմությունը ինչ-որ չափով բացատրելու բանալիներից մեկը սեփական խելքով, սեփական փորձով, նախնիների պատվիրաններով չկողմնորոշվելն է, օտարինով հրապուրվելը, օտար վարդապետություններին անմնացորդ տրվելը, օտարի իշխանությանը հլու-հնազանդ ենթարկվելը. զուր չէ Պարույր Սևակի արձանագրումը, թե «մեր խելքն էր մեզնից խռովել»[65]: Իսկ չէ՞ որ մեր իսկ փորձառությունը մեզ շատ լավ հայտնի միանգամայն հստակ մարտավարություն էր թելադրում, մասնավորապես. «Քեզ հարվածողին որպեսզի զարկես // Եվ ունեցվածքդ ու կյանքդ փրկես, // Պիտի զարկողին իր զարկից զրկես»[66]:

Հայոց ազգային ոգու և բնավորության առանձնահատկությունները քաջ հայտնի են բանաստեղծին, ուստի բացեիբաց կարող է հայտարարել ամբողջ աշխարհին. «Ոչ մի ազգ ու ցեղ չի կարող մեզ հանդիմանել որևէ մեկի տունը քանդելու, որևէ մեկի գերեզմանոցը զբոսայգի դարձնելու, որևէ մեկին դավանափոխելու, որևէ մեկին բռնի ձուլելու հանցանքի մեջ»[67]:

Թվում է մի պահ, թե այդպես էլ պիտի լինի, դա այնքան բնականոն վիճակ է, որ ասվածը կարելի է վերագրել ամեն մի ժողովրդի. ավա՞ղ, այդպես չէ, իսկ այդպիսի ընկալումը հայերիս ավանդական միամտության հերթական վկայությունն է[68]: Թոմաս Հոբսի ձևակերպումը՝ «Մարդը մարդուն գայլ է» (Homo homini lupus est) մեր հարևան ազգերից ոմանց համար մինչև օրս բնականոն գործելակերպ է՝ և՛ տուն քանդել, և՛ գերեզ-

[63] Տե՛ս **Պ. Սևակ**, Իմ ժողովրդին // ԵԺ, հատ. 1, էջ 154:
[64] Տե՛ս **Պ. Սևակ**, Քիչ ենք, բայց հայենք // ԵԺ, հատ. 6, էջ 108, 110:
[65] Տե՛ս **Պ. Սևակ**, Անլռելի զանգակատուն // ԵԺ, հատ. 4, էջ 63:
[66] Անդ, էջ 65:
[67] Տե՛ս **Պ. Սևակ**, Ազգային սնապարծություն և ազգային արժանապատվություն // ԵԺ, հատ. 5, էջ 299:
[68] «Այնքա՞ն անկեղծ է ու միամիտ, որ անկասկածելի խորամանկի և կեղծավորի տպավորություն է անում» (**Դ. Դեմիրճյան**, Հայը // Երկերի ժողովածու տասնչորս հատորով, հատ. 14, Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987, էջ 462):

մանոցը զբոսայգու վերածել, և՛ դավանափոխել այլազգիներին ու բռնի ձուլել: Այնպես որ, այո՛, սևակյան արձանագրումը հայության գլխավոր արժանիքներից մեկն է, ամեն հայազգի մարդու ազգային արժանապատվության և հպարտության հիմքերից մեկը:

Հայ ժողովրդի բարոյական արժանիքներից մեկն էլ, որ ամրագրված է ժողովրդի իմաստության մեջ, անշահախնդիր լավություն, առանց ակնկալիքի բարեգործություն անելու հրամայականն է. «Եթե մեր ժողովրդին է պատկանում «Լավություն արա՝ ջուրը գցիր» առածը, ապա նույն այդ ժողովուրդը՝ որքան անգամ ջրատար ու ջրահեղձ՝ իրեն արված լավության համար ինքնահոս ջուր չի եղել. նա այդ լավությունը ափ է հանել՝ ի ցույց իր հետնորդների»[69]: Ըստ էության, Պ. Սևակը նրբորեն այլափոխել է ասույթի միտքը. վերջինիս սուբյեկտն արդեն ոչ թե լավություն անողն է, այլ ջուրը. սա, իր հերթին, ոչ թե չեզոք «ինքնահոս» է, այլ լավություն ստացածի երախտագիտության արտահայտումն իրականացնող:

Այո՛, թե՛ որպես անհատ, թե՛ որպես ազգային հավաքականություն, մենք ունակ ենք գնահատելու մեզ արված երախտիքը և արտահայտելու երախտապարտության մեր զգացումը: Բայց դա պիտի արվի ազգային արժանապատվության և հպարտության պատշաճ սահմաններում, երախտագիտությունը պետք է համարժեք լինի երախտիքին, այլապես բացառված չէ ինքնանվաստացման պահը՝ սեփական արժանիքների նսեմացումը: Վերջինս բացահայտում է անհատի թերարժեքության բարդույթը, որը, որպես կանոն, հետևանք է սեփական ազգի պատմության, մշակույթի, հոգևոր արժեքների չիմացության, թերատ հայակրթության, ընդոծին կամ արտաքուստ պարտադրված օտարամոլության: Թերարժեքության բարդույթի մյուս տեսակը ազգային պարծենկոտությունն է, սեփական ազգին չեղած բարեմասնություններ, բացառիկ առավելություններ և անզուգական վաստակ վերագրելը՝ չընդունելով մյուս ազգերի իրական առավելություններն ու մշակութային վաստակը: Պարույր Սևակի՝ վերը հիշատակված ելույթը հենց ազգային արժանապատվության առողջ զգացումի, օրինական հպարտության ձևավորման մասին է՝ զերծ թյուր հայրենասիրության սնապարծական դրսևորումներից:

Այստեղ տեղն է հիշեցնել, որ Պարույր Սևակն առաջին անգամ չէ շոշափում սույն թեման: Այդ ելույթից մի քանի տարի առաջ, Վահան Տերյանի նամականու լույս ընծայման առթիվ տպագրված «Տերյանը պահանջում է» պերճախոս վերնագրով հոդվածում նա իր մեծ նախորդի պահանջներից մեկը հատկապես ազգային պարծենկոտությունից ազատվելն է համարում. «Ազգային սահմանափակության ու սնամեջ պարծենկոտության հարցը շատ է զբաղեցրել Տերյանի միտքը: Նա, որ անզուգական երգեց իր «Երկիր Նաիրին», ազնիվ մետաղի փայլ տվեց մեր «ար-

[69] Տե՛ս **Պ. Սևակ**, Շնորհակալիքն ասենք մինչև վերջ // ԵԺ, հատ. 5, էջ 237:

քայական լեզվին», հարստացրեց մեր ազգային քնարերգությունը նոր մոտիվներով ու տաղաչափական ձևերով, նույնիսկ դուռ բացեց նոր հանգի համար, – նույն Տերյանը հասկանալի կրքոտությամբ է ամեն անգամ անդրադառնում իր ժամանակվա գրական հետամնացությանն ու կեղծ ազգայնությանը»[70]:

Արդ, անդրադառնանք այդ ելույթի սկզբին: Պարույր Սևակը գործադրում է ճարտասանական տպավորիչ հնարք. դիմելով ունկնդիրներին՝ ասում է, թե գիտի նրանք ինչ են ակնկալում իրենից, այսինքն՝ պիտի պատասխանի իր հասցեին վեց ամսից ավելի մամուլում «բացահայտ ու կիսաձածուկ» հնչող քննադատությանը[71]: Հռետորը հիասթափեցնում է նրանց՝ բացատրելով, որ թեպետ ինքը պատասխանելիք ունի, սակայն գերադասում է խոսել այլ՝ ազգային կարևորության հարցի մասին: Հիրավի, շատ տպավորիչ սկիզբ է. նեղ անձնական բնույթի հարցերի պարզաբանման, միջանձնային փոխհարաբերությունների խճճված հանգույցի մեջ խրվելու փոխարեն կոչ է արվում անցնել հանրային-ազգային առավել կարևոր հիմնախնդրի քննարկմանը:

Խոսքը հայոց անցյալի իրական վաստակի անքննադատ գնահատման և ուռճացված մատուցման, կեղծ ազգայնականության, պարծենկոտ հայրենասիրության, պոռոտախոս գլուխգովանության մասին է, մեզ բնորոշ ցավալի մի իրողություն, որը միայն ու միայն խանգարում է հայ մարդու առողջ արժանապատվությանն ու հպարտությանը, ավելին՝ վնասում հայոց մշակութային վերելքին: «Հայրենասիրության այս տեսակը մի փափուկ բարձ է, որ լցված է ոչ թե աղվամազով, այլ քնաբեր հաշիշով, և դա այն ժամանակ, երբ մեր շուրջ գնում է մրցություն, եթե ոչ պայքար: Եվ դա ա՛յն ժամանակ, երբ ո՛չ Նոյան տապան, ո՛չ էլ Նարեկացի ունեցող, երեկվա իսկապես անգիր ու անգիրք ազգերը մեր աչքերի առջև ստեղծում

[70] Տե՛ս **Պ. Սևակ**, Տերյանը պահանջում է... // Անդ, էջ 61:

[71] «Պարույր Սևակի դեմ իսկական գրական արշավանք կազմակերպվեց: Ճիշտ է, ընդունում էին նրա օժտվածությունը, տաղանդավոր լինելը, բայց մերժում էին նրա նորարարությունը որպես թե նրա բանաստեղծությունը՝ հանելուկային և երբեմն նույնիսկ ռեբուսային իր արտաքինով, հարում էր գրական «ստիլյագությանը» և ծանրացած էր անորոշության ու ռացիոնալիզմի թանձր շերտերով.... Մի խոսքով, գրական մթնոլորտը թաքուն, թե բացահայտ թշնամանք էր արտաշնչում՝ անընմբռնողություն, հետամնացության թշնամանք, որ բանաստեղծին հարկադրում էր ոչ միայն անքուն գիշերներ լուսացնել ու ոգեկան անասելի տառապանքներ կրել, այլև մարդկայնորեն հուսահատվել և երբեմն լաց լինել անզորությունից և անօգնականությունից» (Կ. Դանիելյան, Պարույր Սևակ բանաստեղծի սխրանքը, էջ 86, 88):

են համամիութենական (ու համաշխարհային) հնչեղություն և ստիպում մեզ՝ թարգմանել դրանք»[72]:

Ողջախոհության, ազգային սթափ ինքնագնահատական ունենալու սևակյան պահանջը այսօր, թերևս, ավելի քան հրատապ է: Մի՞թե դժվար է հասկանալ, որ մեր հարևան, բայց ոչ բարեկամ և մեր հանդեպ բնավ ոչ բարյացակամ տրամադրված ազգը, որին, սովորաբար (և, իհարկե, ոչ առանց իրական հիմքի), վերևից ենք նայել, վերջին տարիների իրադարձությունների ընթացքում շատ ավելի կազմակերպված հանդես եկավ՝ որպես ազգային հավաքականություն:

Մեծերի գնահատումը

Ամենայն պատասխանատվությամբ կարելի է ասել, Պարույր Սևակից կարող ենք սովորել, թե ինչպես է հարկավոր հասկանալ և գնահատել հայոց մեծերին: Գիտական վերլուծության և ազգային երախտագիտության համադրման օրինակներ են Մեսրոպ Մաշտոցին, Գրիգոր Նարեկացուն, Նահապետ Քուչակին, Պետրոս Դուրյանին, Սիամանթոյին, Մկրտիչ Պեշիկթաշլյանին, Հովհաննես Թումանյանին, Վահան Տերյանին, Կոմիտասին, Եղիշե Չարենցին նվիրված աշխատությունները: Ընդ որում ակնածանքով խոսելով մեր մեծերից ամեն մեկի անձի և ստեղծագործական վաստակի մասին, Պ. Սևակը իր մասին խոսում է որպես մեկի, որը «հպարտություն ունի իրեն համարելու Չարենցի հոգևոր որդիներից մեկը»[73]:

---

[72] Տե՛ս **Պ. Սևակ**, Ազգային սնապարծություն և ազգային արժանապատվություն // Անդ, էջ 296:

[73] Տե՛ս **Պ. Սևակ**, Ե. Չարենցը և արդիականությունը // Անդ, էջ 315: Այդպես է նաև «կողքից»՝ գրականագետների տեսանկյունից. «Սևակը մեր ժամանակակիցն է և մեր ժամանակի մտայնության արտահայտիչը, ինչպես իր ժամանակի մտայնության արտահայտիչն էր Չարենցը: Ահա սրանով էլ Սևակը շարունակում է չարենցյան ավանդույթները, որի առաջին պատգամը նախ և առաջ իր ապրած ժամանակի հետ սերտորեն կապված լինելն է, ներկայով ապրելը, այդ ներկայի պոեզիան պեղելն ու ներկայի նյութը պոեզիա դարձնելը: Այսպե՛ս պետք է դիտել բանաստեղծների առնչությունը և ոչ թե բառի կամ պատկերի նմանությամբ: Սևակը իր բանաստեղծական աշխարհընկալմամբ անչափ մոտ է կանգնած ստեղծագործական խառնվածքի չարենցյան նկարագրին: Ինչպես Չարենցը կարողացավ ստեղծել իր օրերի մարդու հոգեբանական կերպարը, իր օրերին հատկանշական հայրենասիրության կերպը, սիրո, թախծի, տառապանքի զգացողությունը, դրանով իսկ ամբողջացնելով իր օրերին հատկանշական բանաստեղծության հերոսի նկարագիրը, այնպես էլ Սևակը կարողացավ ի հայտ բերել զգայական-մտածական համակցության այն առանձնահատուկ կողմերը, որոնք բնորոշ են այսօրվա մարդուն: Սևակի հերոսի հայրենասիրությունը, սերը, տառապանքը, բարոյական նկարագիրը, աշխարհի հետ ունեցած հարաբերությունը

Մեսրոպ Մաշտոցի մասին հրապարակումներից մեկը «Թրի դեմ՝ գրիչ» ծրագրային հոդվածն է՝ «Մաշտոցի սխրագործությունը» ենթավերնագրով: Ո՞րն է դա: Չէ՞ որ մինչև այդ էլ քանիցս ասվել (և հարատև կասվի) հայոց այբուբենի համազգային բացառիկ կարևորության մասին, և ամեն տեսակի դրվատանքի է արժանացել մեծն Մաշտոցը: Հատկապես վերջինիս գործելակերպի համապարփակ էութենական բնութագրումն է Պարույր Սևակի գնահատականի առանձնահատկությունը. «Այսպես կարող էր գործել ո՛չ սոսկ տառաստեղծը, ո՛չ էլ մեծ լեզվաբանն անգամ. Այսպես կարող էր գործել միայն մեծ քաղաքագետը»[74]:

Իսկ Մաշտոց-քաղաքագետի մեծագույն սխրանքը, հիրավի, համեմատելի է միայն հայոց կորուսյալ պետության նորովի հիմնադրման հետ.

Այն, ինչ որ անել չկարողացան
Արշակ–Վաղարշակ,
Մուշեղ ու Մուշե,
Սա՛ արեց միայն՝ անզեն ու անզորք.
Մեզանից խլված մեր պետության տեղ
Ստեղծեց մի նոր՝
Չեղյա՞լ պետություն,
Թագավորություն մի հզորազոր՝
Ո՛չ թե մեզանից խլված հողերի,
Մեր բաժան-բաժան հայրենու վրա,
Այլ մեր անբաժա՛ն,
Մեր անկիսելի՛,
Երբե՞ք չխլվող հոգիների մեջ»[75]:

Դե, իսկ Պ. Սևակի «Սայաթ-Նովա» կոթողային ուսումնասիրությունը, ընդհանուրի կարծիքով, մինչ օրս մնում է բանասիրական գիտության գլուխգործոցներից մեկը: Խորապես ուսումնասիրելով Սայաթ-Նովայի կյանքը, համակողմանիորեն վերլուծելով նրա արվեստը՝ համաշխարհային քնարերգության համատեքստում, իմաստալից բազում

միանգամայն այլ որակի է, քան Չարենցինը: Սևակը շարունակեց Չարենցին և այն, ինչ Չարենցը արեց իր օրերի համար, նույնն արեց նաև Սևակը ի՛ր ապրած ժամանակի համար: Ահա սա է պոեզիայի ժառանգորդական կապը» (**Դ. Գասպարյան**, Պարույր Սևակ. կյանքն ու գործը // Է.Ա. Մեհրաբյան, Նորից քեզ հետ: Ալբոմ-ուղեցույց (հայերեն, ռուսերեն լեզուներով), Եր.: «Պարբերական», 1990, էջ 32–33):

[74] Տե՛ս **Պ. Սևակ**, Թրի դեմ՝ գրիչ (Մաշտոցի սխրագործությունը) // ԵԺ, հատ. 5, էջ 183:

[75] Տե՛ս **Պ. Սևակ**, Եվ այր մի Մաշտոց անուն // ԵԺ, հատ. 4, Եր.: Հայաստան, 1973, էջ 260:

զուգահեռների և համեմատությունների գործադրմամբ՝ Սևակը տվել է անզուգական երգիչ-բանաստեղծի հիրավի համապարփակ, անկրկնելի մի բնութագիր. «Սայաթ-Նովան սոսկական բանաստեղծ չէ, այլ **սահմանագծային** բանաստեղծ: Իր թիկունքով նա դարձած է դեպի այն բազմադարյան անցյալը, որի մեջ են մխված իր արմատները: Իր իսկ դեմքով՝ տրտմության մեջ էլ մշտապես պայծառ իր դեմքով, նա նայում է մեզ: Ուստի և նա ավելի նոր ժամանակինն է, քան հնինը: Նորինն է՝ իր լեզվով, որ պիտի ծնունդ տար հայոց նոր գրական լեզվին: Նորինն է՝ իր մտածողությամբ, որի մեջ ոչինչ չկա միջնադարյան: Նորինն է՝ իր մեծ սրտով, որ ունի ժամանակակից տրոփ. իր անտակ հոգով, որ ունի արդիական խորություններ. իր արդարախոս բերանով, որ կարող է ծառայել այսօրինն էլ. իր իմաստուն ուսուցչությամբ, որ ավելին է, քան «վաստակավոր» կամ «ժողովրդական» տիտղոսը, որովհետև գնալով չի հասնում պաշտոնաթողության կամ կենսաթոշակի, այլ հետզհետե նորանում է իր վսեմ և անգնահատելի ծառայության մեջ»[76]:

Արդ, Պարույր Սևակը նաև օրինական հիմք ու համարձակություն ունի ամփոփ գնահատականներ տալու. «Այսպես նայելով մեր ազգային անցյալին՝ պիտի պարտք ունենանք չժխտելու և պատիվ ունենանք հռչակելու, որ եթե **Խորենացին է մեծը** մեր բոլոր պատմիչների շրջապատում և **Կոմիտասն է մեծը** մեր բոլոր երաժիշտների միջավայրում, ճիշտ այսպես էլ եթե **Նարեկացին է** մեր **բանաստեղծության** հանճարների հանճարը, ապա **Թումանյանն է** մեր **գրականության** մեծերի մեծը»[77]:

Մեկ օրինակ ավելի հանգամանորեն դիտարկենք: Երբ կարդում ես Պ. Սևակի այն խոստովանությունը, թե ինքն ինչ երկյուղածությամբ է սկսել Վահան Տերյանի նամականու ընթերցումը, ակամա համակվում ես նույն զգացումով, նաև վերստին համոզվում, թե մեծը մեծին որքան խորն է հասկանում և գնահատում: Ահավասիկ. «Նամակները մի մարդու, որ հանդիպել է քեզ պատանության շեմին, ուղեկցել ամբողջ երիտասարդությունդ և այնուհետև դարձել մշտական բարեկամդ: Նրան ծանոթանալուց է սկսվել գիտակցական կյանքդ, որի թարգմանիչն է դարձել, երբ ինքդ տակավին եղել ես «անլեզու». սերդ ես խոստովանել՝ նրա՛ լեզվով, կարոտդ թեթևացրել՝ նրա՛ բառերով, թախծել ես՝ նա՛ քեզ հետ, երջանկությունդ ու բերկրանքդ է խոսել՝ նրա՛ բերանով: Նրա մտքերն ու խոհերը, ապրումներն ու հույզերը գիտես անգիր...»[78]: Սևակի շարադրանքն այնպես է գրավում միտքդ ու հոգիդ, որ ակամա ուզում ես ասել՝ ես էլ, ինձ էլ... Բայց մի՞թե այդպես է... Մեկ էլ կարդանք, երրորդ անգամ...

---

[76] Տե՛ս **Պ. Սևակ**, Սայաթ-Նովա: Մենագրություն, Եր.: Սովետ. գրող., 1987, էջ 292:

[77] Տե՛ս **Պ. Սևակ**, Թումանյանի հետ // ԵԺ, հատ 5: Ընդգծումը Պ. Սևակինն է՝ Վ.Մ.:

[78] Տե՛ս **Պ. Սևակ**, Տերյանը պահանջում է... // Անդ, էջ 59–60:

Տերյանի սևակյան ընկալումը, հիրավի, անզուգական է, առավել ևս անկրկնելի է, բայց միաժամանակ այնքան վարակիչ է այդ ընկալման մատուցման կերպը... Վերջինս, վստահ եմ, ամեն ընթերցողի ստիպում է վերհիշել, վերագնահատել տերյանական պոեզիայի իր սեփական ընկալումը, հոգեհարազատության իր չափը:

Սևակի առածանին

Իսկ որքա՜ն խորն է իմացել և գնահատել Պարույր Սևակը հայ ժողովրդի իմաստությունը. բանաստեղծի առածանին հայոց համակեցության սոցիալ-փիլիսոփայական մի ամբողջական վերլուծություն է՝ հին ու հայտնի մտքի նորովի մատուցմամբ: Ամեն մի առած և ասացվածք ոչ միայն որոշակի խոհափիլիսոփայական լիցք ունի, այլև վարքակարգավորիչ ներուժ: Տեղին գործածվելիս առած-ասացվածքը մեր ասելիքը դարձնում է ավելի պատկերավոր, տպավորիչ ու համոզիչ: Մի ասույթը երբեմն մի ամբողջ բարոյախոսություն արժե:

Առածանին, ավանդությունները, հեքիաթները, շեշտում էր Հովհաննես Թումանյանը, հայ ժողովրդի հավաքական խոսքն է, «պապական խոսքը», որ կարիք ունի ունկնդրի, խոսք հասկացող ամեն հայ մարդու. «Ժողովուրդը շատ նյութ ունի տալու ամեն մեկին»[79]: Մեկ այլ առիթով՝ սա արդեն ոչ թե հորդոր է այլ պահանջ. «Ահա թե որտեղ է հայոց գրականության աղբյուրը. ահա թե որտեղից պետք է խմի հայոց բանաստեղծը, հայոց վիպասանը, հայոց գրողը, որ զորանա»[80]: Այս պահանջը նաև համազգային բնույթի է, քանզի բանավոր մշակույթը ազգի յուրատեսակ այցեքարտն է, մշակութային ինքնության հավաստումը. «Ամեն մի ազգի բանաստեղծություն ժողովրդական լեգենդաներով, ազգային ոգու ստեղծագործություններով է զորանում ու ինքնուրույնության կնիք առնում, հաստատվում, առաջ գալիս, որպես մի ամբողջ ժողովրդի խոսք և դրանով էլ դառնում պատկառելի»[81]: Ի դեպ, նա տարիներ շարունակ ժողովել է հայ և օտար ազգերի առածներն ու ասացվածքները, ոչ միայն ժողովել. ասելիքն ագուցելով ժողովրդի այս կամ այն սեղմ խոսքին, Թումանյանն ուժեղացնում է իր խոսքի պատկերավորությունը[82]:

---

[79] Տե՛ս **Հովհ. Թումանյան**, Մի ավանդություն// ԵԼԺ, հատ. վեցերորդ, էջ 7:

[80] Տե՛ս **Հովհ. Թումանյան**, Բորչալվում// Անդ, էջ42:

[81] Տե՛ս **Հովհ. Թումանյան**, Նամակներ(1885–1904) // ԵԼԺ, հատ. իններորդ, Եր., 1997, էջ 212:

[82] Տե՛ս հանգամանորեն **Վ. Միրզոյան**, Հովհաննես Թումանյանի կենսափիլիսոփայությունը, 2-րդ, լր. հրատ., Եր.: Մեկնարկ, 2023, էջ 156–167:

Միով բանիվ, հայտնի է, թե մեր մեծերը որքան հմտորեն են գործածել հայոց առածանին[83]: Պարույր Սևակը, ահավասիկ, շարունակում է առածագործության այդ ավանդույթը՝ ճարտար կերպով ներհյուսելով դրանք չափածո խոսքի կառուցվածքին: Դրանք հատկապես առատ են «Ութնյակներ»-ի շարքում: Դիտարկենք մի քանիսը:

Սկսենք անսկզբունքային մարդու, պատեհապաշտի կիսատ-պռատ վարքը տպավորիչ ձաղկող ութնյակից[84].

Մեկ «հա» ես ասում, մեկ ասում ես «չէ».
Ու չեմ հասկանում՝ ո՞ր խոսքիդ կառչեմ,
Ու չեմ հասկանում՝ գլուխը առած
Ո՞ր սև-անտակը գնամ ու կորչեմ:

Ա՜խ, հավատայի՛ր գոնե Աստծուն,
Որ վրադ ազդեր առածը ծանոթ.
– **Ա**ստված «հա»-ն օրհնել,
Օրհնել է և «չէ»-ն,
Բայց անիծել է մեկտեղ «հա ու չէ»-ն...

Հաջորդ օրինակում Պ. Սևակը գործածում է ապաշնորհ մարդու ինքնաարդարացման պահն արձանագրող (և դատապարտող) առածը՝ ոչ միայն առաջարկելով մի նոր տարբերակ, այլև դրան տալով դատողության տրամաբանորեն միանգամայն համոզիչ զարգացում. չէ՞ որ, բացառված չէ ձախողման նաև տեղին բացատրությունը[85].

Ինքը հոպոպն է հոտած,
Կարծում է՝ բույնն է հոտած:
Սևջուր առուն ճահճացել,
Կարծում է՝ հունն է հոտած:
Եվ հակառակն է լինում.
Ի՞նչ ես ուզում խեղճ թխսից՝
Առողջ ճտեր ո՞նց հանի,
Թե տակի ձուն է հոտած:

---

[83]Մասնավորապես՝ Խաչատուր Աբովյանի, Պերճ Պռոշյանի, Ղազարոս Աղայանի, Հովհաննես Թումանյանի և Ջիվանու առածանիները տե՛ս **Վ. Միրզոյան**, Առածանին՝ գործնական փիլիսոփայություն, 2-րդ, լր. հրատ., Եր.: Մեկնարկ, 2022, էջ 486–514:

[84] Տե՛ս **Պ. Սևակ**, Ա՜խ, հավատայի՛ր գոնե Աստծուն // ԵԺ, հատ. 6, էջ 40:

[85] Տե՛ս **Պ. Սևակ**, «Ինքը հոպոպն է հոտած....» // Անդ, էջ 32:

Մեծամիտ, ցուցամոլ մարդու խաբուսիկ վարվելակերպը մերկացնող ասացվածքը հաջորդ բանաստեղծության նյութն է, և վերստին դրա խորհուրդը ստացել է շատ պատկերավոր մեկնաբանում-զարգացում[86].

Իսկ ինչո՞ւ, ինչի՞ համար
Այս մեկին ուշք չեք դարձնում.
Մի ասեղ պիտի առնի՝
Պողպատի փութն է հարցնում,
Իսկ կողքին թե մարդ չկա՝
Էլ ո՛չ հարց, ո՛չ պատասխան.
Թե հավը ձեռքից թռավ՝
Անփետուր ճուտն է վերցնում:

Կատակ-բառախաղ է դարձել անելանելի վիճակներն արտահայտող հանրահայտ ասացվածքը[87].

Եթե ասեմ՝
Բոց կլինի,
Եթե չասեմ՝
Խոց կլինի...
Ինքդ ասա.
Ես ի՞նչ անեմ,
Բա իմ բանը
Ո՞նց կլինի:

Իսկ այս մեկը զուրկ չէ քողարկված ինքնահեգնանքից[88].

Ինչ ասեմ խելքիդ.
Ժամանակից շուտ մի խոսք ասացիր,
Քեզ, դրա համար,
Մեղավորների շարքը դասեցին:
Բա ո՞նց մոռացար.
«Աքլորը կանչեց ժամանակից շուտ՝
Մորթեցին կերան,
Հետն էլ մատները լի լա՜վ լիզեցին»:

Ինչպես մեծերից շատերը՝ Պարույր Սևակը նույնպես իմացել է իր առանձնահատկությունը, իր առաքելությունը, և կյանքի տարբեր հանգամանքներում երբ հարկ է եղել լինել բոլորի հետ, այդ «բոլոր» համարվածի

[86] Տե՛ս **Պ. Սևակ**, «Իսկ ինչո՞ւ, ինչի՞ համար....» // Անդ, էջ 29:
[87] Տե՛ս **Պ. Սևակ**, «Եթե ասեմ....» // Անդ, էջ 33:
[88] Տե՛ս **Պ. Սևակ**, «Ինչ ասեմ խելքիդ....» // Անդ, էջ 29:

փուչ էության մասին չի վարանել իր կարծիքն արտահայտել ժողովրդական խոսքի միջոցով[89].

Իմ բախտը բանեց.
Ես բոլորի՞ հետ ու մեկտեղ էի,
Բայց ո՛չ նրանց հետ,
Ովքեր գոռգոռում
Ու բոռում էին բոլորի՞ անվամբ,
Բոլորի՞ն անվերջ վկա բերելով,
Մինչ այդ «բոլոր»-ի
Անունը թե կար՝ ամանում չկար...

Արդեն հանդիպել ենք «Լավություն արա՝ ջուրը գցիր» ասացվածքի նորովի իմաստավորմանը: Այս անգամ դա վերաբերում է մարդկային լեզվի հակասական գործածությանը՝ «Լեզուն ոսկոր չունի» առածին, որն ունի ավելի ընդարձակ տարբերակներ՝ «Լեզուն տակը ոսկոռ չունի, որ սուտ խոսելիս ծակե», «Լեզուն օսկոռ չունի, բայց շատ օսկոռներ ջարդե կու»[90]: Ինչպես տեսնում ենք, շատ տպավորիչ համեմատություն է՝ լեզուն ոսկոր չունի և հենց դրա շնորհիվ է այսքան հզոր: Մի կողմից՝ ոսկորն ամրության նշան է, մինչդեռ՝ լեզուն, զերծ լինելով ոսկորի պես ամուր հենարանից, պարզվում է, որ ավելի ամուր և զորեղ է, քան մյուս մկանները, մյուս կողմից՝ կաշկանդված չէ նույն ոսկրային հիմքով: Այս երկու հանգամանքն էլ ժողովրդական խոսքը լավ է արձանագրել՝ խաղարկելով լեզվի կազմախոսական առանձնահատկությունները, առավել ցայտուն դարձնելու համար փոքրաչափ այդ մարմնամասի վիթխարի զորությունը մարդկային գործերում: Առածի գործածությունը տեղին է, երբ բնութագրում ենք ստախոսի կամ զրպարտչի խոսքը՝ միաժամանակ ասվածի հանդեպ մեր բացասական վերաբերմունքի մասին ակնարկելով շրջապատի անձանց: Ի դեպ, նման մեկնաբանություն է բնորոշ նաև օտար լեզուներում եղած նույնիմաստ առած-ասացվածքներին[91]:

Իսկ այժմ վերադառնանք սևակյան տողերին[92].

Մենք մեր լեզվի կապն ենք կտրել,
Որովհետև, ճիշտ է, լեզուն չունի ոսկոր,
Բայց կարող է... ոսկոր ջարդել,
Նաև կապա՞նք ձեռք ու ոտքի:

---

[89] Տե՛ս **Պ. Սևակ**, Ճամփեզրի խոտը // ԵԺ, հատ. 2, էջ 191:
[90] Տես՛ **Ա.Տ. Ղանալանյան**, Առածանի, Եր.: ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1960, էջ 178–179:
[91] Տե՛ս Վ. Միրզոյան, Առածանին՝ գործնական փիլիսոփայություն, էջ 300–301:
[92] **Պ. Սևակ**, Դարակեսի հիմնը // ԵԺ, հատ. 2, էջ 78–79:

Հանրածանոթ ասացվածքի անսպասելի և տպավորիչ շարունակություն. լեզվի զորությունը, իրոք, երկակի է, և այս անգամ տրամաբանական շեշտը տեղափոխված է լեզուն գործածողի նպատակի վրա:

Գրող և ընթերցող

Ամեն մի երևույթի սևակյան ընկալմանն անդրադառնալիս՝ մենք հայտնաբերում ենք նրա մտածելակերպի ընդոծին հատկություններից մեկը՝ ամփոփել և իմաստավորել տվյալ երևույթը, կատարել աշխարհայացքային-մեթոդաբանական բնույթի ամփոփումներ: Օրինակ, այս կամ այն գրական գործը մեկնաբանելիս, քննադատաբար գնահատելիս՝ Պ. Սևակը չի բավարարվում միայն դրվատելին դրվատելիս և պախարակելին պախարակելիս՝ իհարկե, մշտապես չափի մեջ, պատշաճության սահմաններում, բայց նաև մշտապես հասկանալի ու համոզիչ:

Նա ավելին է անում, այն է՝ ոչ միայն քննադատում է, այլև քննադատում է քննադատի անելիքը, այսինքն՝ քննադատությունը՝ որպես ուրույն երևույթ, և դարձյալ հանգում որոշակի օրինաչափությունների ձևակերպմանը: Ահավասիկ. «Քննադատները նոր գիրք գրախոսելիս սովորաբար սկսում կամ վերջացնում են մի հարցադրումով. աճե՞լ է արդյոք հեղինակը, թե ոչ: Սա միանգամայն բնական հարցադրում է, թեպետ, ըստ իս, ոչ միշտ տեղին, եթե խոսքը վերաբերում է ոչ թե սկսնակին, այլ ճամփա կտրած, որոշակիորեն հասունացած բանաստեղծին, որի աճը այնուհետև հաճախ ստանում է այնպիսի ձևեր, ընդունում այնպիսի ուղիներ, որոնք շատ դեպքերում աննկատ են մնում գիրքը գնահատողից, եթե նա ընկել է «աճը» տեսնելու հետևից»[93]:

Եթե շարունակենք այս բնույթի ամփոփիչ դիտարկումները, ապա մենք կձևավորենք հիմնադրույթների այն ամբողջությունը, որը բնութագրում է ինչպես իր՝ Պ. Սևակի ստեղծագործական հավատամքը, այնպես էլ գրական գործերը քննելու և գնահատելու նրա ռազմավարությունը: Բայց, ըստ իս, մի հրաշալի հատված Սևակի ինքնակենսագրականից մեզ ամփոփ մատուցում է թե՛ Սևակ-գրողի և թե՛ Սևակ-գնահատողի, Սևակ-ընթերցողի դիրքորոշումը. «Ճիշտ է, որ գրողը դրսևորում է այն, ինչ ուրիշները նկատել՝ բայց չեն տեսել, զգացել, բայց չեն հասկացել, ապրել՝ բայց չեն կարողացել արտահայտել: Ճիշտ է, բայց թերատ է: Իսկական գրողը նա է, ով նաև տեսնում է բաներ, որ այլոք չենք տեսել, զգում է բաներ, որ ուրիշները չեն զգացել, ապրում է բաներ, որ ամեն ոք չի ապրել և չի կարող ապրել: Անցյալ և արդի գրականության տարբերությունը, ընդհանուր և կոպիտ սահմանագծումով, ըստ իս, այն է, որ եթե հները ասում էին այնպիսի բաներ, որ ամեն մարդ կարող է իմանալ, բայց

[93] Տե՛ս **Պ. Սևակ**, Բանաստեղծուհու սրտաբաց զրույցը // ԵԺ, հատ. 5, էջ 22:

չգիտի, ապա նորերը պիտի հոգ տանեն ասելու այնպիսի բաներ, որոնք, իրենց կարծիքով, մենք չգիտենք և չենք կարող իմանալ, եթե իրենք չլինեին: Ուստի և եթե որևէ մեկը ասում է այնպիսի բան, որ ես գիտեմ, կարող է ինձ իր ընթերցողը չհամարել, որովհետև ես՝ ընթերցողս, ավելի անճարակ չեմ, քան ռադիոունկնդիրը, կարող եմ «անջատել ռադիոն», այսինքն՝ փակել գիրքը»[94] :

Զարմանալի չէ, Պարույր Սևակի սոցիալ-փիլիսոփայական բնույթի դատողությունների մեջ «գրող–ընթերցող» փոխհարաբերությունը մշտական թեմաներից է: Իսկ ո՞րն է դրա էությունը հատկապես փիլիսոփայական իմաստավորման տեսակետից: Երկու բանական էակների մտավոր և հուզական հաղորդակցում, թեկուզ նրանք միմյանցից հեռու լինեն ժամանակի և տարածության մեջ: Առաջինը, իր ապրած օրերի ազդեցությամբ, զգացել է, մտորել, ըմբռնել, գտել է ինչ-որ իմաստություն (կամ էլ տառապել է, որոնել և հուսահատվել), ապա և իրեն անծանոթ զրուցակիցհոգեկից ընթերցողին է դա պատմում: Մեր բանաստեղծի դիրքորոշման մասին շատ բան է ասում նրա «Իմ ընթերցողներին» հոդվածը, որը գրվել է որպես յուրատեսակ արձագանք-ամփոփում «Ավանգարդ» թերթում «Մարդը ափի մեջ» գրքի հրապարակային քննարկմանը: Սևակը խմբավորում է ընթերցողների նամակները, դրվատական և պարսավական կարծիքները, անկեղծորեն պատասխանում է, ընդունում արդարացի քննադատությունը, քննարկում որոշ տեսակետներ, համոզում իր մոտեցման, բանաստեղծական լուծումների մեջ: Անվարան և անկեղծորեն՝ որպես հետադարձ կապ, Պ. Սևակը պարզում է իր վարվելակերպը. «Դրվատանքի բազմաթիվ ու բազմազան խոսքերը կուլ տալով նույնպիսի դժվարությամբ, ինչպես երեխան է կուլ տալիս դեղահատը, «ոչ» ասողների տպված ու անտիպ նամակները կարդացել եմ մի քանի անգամ, որովհետև իրեն հարգող ամեն մի հեղինակ չի կարող չգիտակցել, որ ինքը «ոչ» ասողներից կարող է շահել միայն»[95]:

Մեկ այլ հրապարակման մեջ՝ նվիրված Գևորգ Էմինի «Երկու ճամփա» գրքի հանգամանալից վերլուծությանը և գնահատմանը, Սևակը հիշյալ փոխհարաբերության բնականոն կարգավորման գաղտնիքը բացահայտում է գրողի կողմից. «Կարդացվելու հաճույքը շատ քիչ է գրողի համար, ինչպես որ գրականությունն էլ քնաբեր դեղահատ չէ, որ ընդունես քնելուց առաջ: Գրական երկը, եթե կուզեք, պիտի անքնություն հարուցի և ոչ թե քնեցնի: Գրական երկը պիտի միտք հուզի, հոգի խռովի և...

[94] Տե՛ս **Պ. Սևակ**, Անցյալը ներկայացած: Ինքնակենսագրություն // Է. Ա. Մեհրաբյան, Նորից քեզ հետ: Ալբոմ-ուղեցույց (հայերեն, ռուսերեն լեզուներով), Եր.: «Պարբերական», 1990, էջ 76:

[95] Տե՛ս **Պ. Սևակ**, Իմ ընթերցողներին // Անդ, էջ 228:

հոգի ճանաչեցնի: Այսպես մտածող և այսպես աշխատող գրողը ընթերցող չի՛ փնտրում, նա սպասո՞ւմ է ընթերցողի»[96]:

Ամեն գրագետ, գրիչ բանեցնող, առավել ևս գրող-մրող, դեռ գրող չէ: Սա հինավուրց և անհերքելի մի ճշմարտություն է, նաև՝ հատկապես մեր օրերում հույժ արդիական, երբ ամեն ոք հնարավորություն ունի համացանցում իր մտքին եկածը շարադրելու որպես գեղարվեստական խոսք, իսկ նյութական բարենպաստ հանգամանքներում՝ նաև հրատարակվել: Բայց ամեն մի հեղինակ իրավունք ունի՞ արդյոք իր ասելիքն ուղղելու ուրիշին, որքանո՞վ է նրա ԽՈՍՔԸ ինքնին արժանի ակնդրման և ունկնդրման: Պարույր Սևակը տեղին է հիշեցնում խոսքին տիրապետելու հրամայականը: «Անհնարին է գրող լինել՝ առանց դիտողականության: Միաժամանակ՝ կարելի է շատ սուր աչք ունենալ, բայց գրող չլինել: Հարկավոր է նկատածը նկատելի դարձնել, տեսածը տեսցնել: Իսկ դրա համար գրողը միայն մի գործիք ունի՝ խոսքը»[97]:

Ի՞նչ է խոսքը. յուրատեսակ մի կամուրջ է գրողի և գրվածի հասցեատիրոջ՝ ընթերցողի միջև: Այդ կամուրջի էությունը «միտք–խոսք–միտք» անցումն է՝ հեղինակի մտքում եղած ասելիքը արտաբերվում է՝ հնչում կամ գրառվում, ասություն կամ գրություն դառնում, որը ընթերցողը ընկալում է, վերծանում որպես միտք, ըմբռնում ասվածի իմաստը: Խոսքը բառաշար է, նպատակամետ գծային հերթականություն, որում թե՛ գործածվող ամեն մի բառը, թե՛ ընտրված կառուցվածքը (շարահյուսությունը) կարևոր են գրողի միտքը անխաթար տեղ հասցնելու համար:

Պատահական չէ, որ Պ. Սևակն այդքան կարևորել է բառերի ճիշտ ընտրությունը: Հիշեցնելով Հովհաննես Թումանյանի նշանավոր «բառը մի աշխարհ է» բանաձևը՝ Սևակը հավելում է, թե «բանաստեղծի համար բառը սոսկ բառ չէ, բառը մտածողություն է, կենսազգացողություն է», ուստի և հատկապես բառագործածության եղանակի մեջ զգացվում է հեղինակի «փիլիսոփայությունը», նրա կարողությունը ճիշտ ու տեղին, նոր ու թարմ խոսք ասելու:

Սկսնակ գրողներին ուղղված իր խոսքում Սևակը բացատրում է խնդրի կարևորությունը. «Խոսքն այն մասին է, որ մետաղների նման բառերն էլ են ժանգոտում, և բանաստեղծի բնազդն է՝ չընտրել հատկապես ժանգոտվածները, նրա կարևոր գործը՝ սրբել արդեն ժանգոտված բառերը: Իսկ սրանից էլ առաջ գտնել **նոր խոսքեր**»[98]:

Քանի որ Պարույր Սևակը դիմում է երիտասարդ գրողներին, ապա հարկ է համարում նրանց համար պարզելու «աքսիոմի ճշմարտությունը», հավելելով, թե ստիպված է դա «ապացուցել թեորեմի եղա-

---

[96] Տե՛ս **Պ. Սևակ**, Այն տարիքում, երբ... // Անդ, էջ 218:

[97] Տե՛ս **Պ. Սևակ**, «Գիրք պանդխտության» // Անդ, էջ 52:

[98] Տե՛ս **Պ. Սևակ**, ...Ինչպես մի կաթիլի մեջ // Անդ: Ընդգծումը Սևակինն է:

նակով»: Հարկավոր է տեսնել «ոտանավորի» տարբերությունը «բանաստեղծությունից»՝ ելնելով այդ բառերի ստուգաբանությունից: Ոտանավորը սարքվում է, ուստի կարելի է սովորել հանգավորում, «ինչպես որ սովորում են փայտ տաշել, կոշիկ կարել, մանգաղ շինել», իսկ բանաստեղծությունը ստեղծվում է, արարվում: Դրա համար էլ ոտանավորը հաճախ սովորական խոսք է՝ պարզապես քիչ թե շատ հաջող հանգավորված, մինչդեռ սևակյան անվերապահ պայմանն է՝ «պոեզիան սկսվում է այնտեղ, որտեղ վերջանում է սովորական խոսքը»[99]: Ապա աքսիոմատիկ այդ ճշմարտությունն ամփոփող օգտակար մի խորհուրդ. «Ով դժվարանում է ոտանավորը ջոկել բանաստեղծությունից, թող վարվի այս եղանակով՝ չափածոն «շուռ տա»՝ դարձնի արձակ, ջնջելով չափն ու հանգը, և անմիջապես կերևա՝ բանաստեղծությո՞ւն էր իր կարդացածը»[100]:

Պարույր Սևակը հորդորում է սկսնակ բանաստեղծներին որոնել թարմ համեմատություններ, մակդիրներ, փոխաբերություններ, խուսափել անիմաստ և անճաշակ կրկնաբանություններից (օրինակ՝ «հույզերն են լցվել առլեցուն», «մայր հողի կաթը մայրական», «արևը վառվում է որպես հուր»), ոչ թե կրկնել այլոց ասածը, այլ ասել միայն սեփականը՝ ապրածն ու զգացածը, շարադրել ինքնուրույն խոհերը: Բայց ամենակարևորը՝ ստեղծագործող մարդը պետք է խուսափի գերբարձր ինքնագնահատականից, սեփական ստեղծագործության մասին անհարկի ուռճացրած համարումից, ինչից էլ ածանցյալ՝ քննադատության հիվանդագին ընկալումից:

Պ.Սևակը հիշեցնում է ստեղծագործողի համեստության կարևորության մասին, ոչ թե խեղճության, սեփական կարծիքն ու դիրքորոշումը վախվորած թաքցնելու հոգեբանության մասին, այլ որպես իրական տաղանդի, տաղանդավոր մարդու «բնավորություն»: Ահավասիկ սևակյան հավատո հանգանակի սքանչելիորեն ընդգրկուն և խոր ձևակերպումը՝ որպես խրատ և պատվիրան ոչ միայն բանաստեղծներին, այլև ամեն մի մտածող մարդու, քանի որ ամեն մեկս ապրում է հանրության մեջ, մեր կյանքով և գործով մշտապես առնչվում ենք միմյանց, և մեր վարքագիծը, այլ կերպ ասած՝ մեր ինքնամատուցումը արձագանքվում է այլոց կարծիքի և վերաբերմունքի ձևով. «Համեստ լինել՝ նշանակում է ոչ միայն հավատալ իր հնարավորություններին, այլև կասկածել իր ստեղծածի վրա – և այս ճանապարհով է տաղանդը համալրում իր ուժերը. ավելի շատ դժգոհել իր արածից, քան թե գոհանալ – և այս եղանակով է տաղանդը գոհացուցիչ գործ անում. առավել նկատել ուրիշի լավը և սեփական վատը – և այս կերպ է տաղանդը զարգանում. ներքնապես մխալ և ոչ թե հրախա-

[99] Տե՛ս **Պ. Սևակ**, «Գիրք պանդխտության», էջ 46:
[100] Տե՛ս **Պ. Սևակ**, ...Ինչպես մի կաթիլի մեջ, էջ 82:

ղություն պահանջել – և այս միջոցով է հասնում բռնկումի ու հրդեհի պահը»[101]:

Ստեղծագործող մարդու համեստության մյուս պահանջներից մեկը Պ. Սևակը բխեցնում է հեղինակի հանդեպ ընթերցողի առավել զարգացվածության յուրատեսակ կանխավարկածից. «Աչք ենք փակում այն բանի առաջ, որ մեր ընթերցողն իր մտավոր զարգացմամբ կարող է մեզանից բարձր լինել և մեկ անգամ տեսնելով այդ՝ այլևս երբեք չդիմել մեր գրածին: Անտեսում ենք այն, որ ընթերցողը կարդում է ոչ միայն հայերեն, ու եթե միայն հայերեն՝ ոչ միայն հայ հեղինակներ, հետևապես՝ նա մեզ ոչ թե համեմատում է իրար հետ ու գերադասում մեկիս մյուսից, այլ մեզ դնում է ուրիշների կողքին, որոնք գրում են ուրիշ լեզուներով»[102]:

Բանաստեղծի այս հորդորն այսօր տասնապատիկ ավելի կարևորություն է ձեռք բերել. զուր չէ, որ ներկա քաղաքակրթությունը ստացել է «տեղեկատվական» բնութագիրը. տարատեսակ տեղեկությունների և հաղորդագրությունների ահագնացող հոսքի մեջ համացանցում հնարավոր է գտնել նաև գեղարվեստական արժեքավոր գրականություն, իսկ նոր սերունդի լեզվիմացության ընդլայնումը հնարավորություն է ընձեռում ընթերցելու նաև բնագրերը:

Սևակի լեզվափիլիսոփայությունը

Նախորդ շարադրանքի լույսով ինքնին հասկանալի են Պարույր Սևակի բացառիկ ուշադրությունը հայոց լեզվի անհատական և հանրային վերաբերմունքի դրսևորումներին, հատկապես գրողներին ուղղված լեզվական պահանջկոտությունը, լեզվասխալների մանրազնին դիտարկումը և առաջարկված շտկումները: Իսկ նրա սեփական լեզվական մակարդակի մասին մենք համոզվել ենք սույն հոդվածի հենց սկզբից:

Արդեն պատանի բանաստեղծը մեզ զարմացնում է ոչ միայն ճոխ բառապաշարով և ասելիքն անկաշկանդ արտահայտելու հասուն հմտությամբ, այլև հիրավի անզուգական մի ունակությամբ՝ անակնկալ ու տպավորիչ բառագործածությամբ, տվյալ տեղին, հույզին ու պատկերին սազական նոր բառի կամ արտահայտության զարմանալիորեն դյուրին արարմամբ: Միևնույն ժամանակ՝ ծայրահեղ պահանջկոտություն (ինքն իրեն և այլոց ուղղված) ամեն մի բառ ընտրելիս, նույնիսկ մշտական կասկած ամեն մի բառի գործածումից առաջ, «գունագեղ ու քաղցրաշունչ» բառերի անվերապահ մերժում. «Ճիշտ բառը՝ ճիշտ տեղում» պահանջի գրեթե իդեալական իրականացում: Հայոց լեզվի մի իսկական հաղթահանդես է Սևակի մարդաբանական դատողություններն ամփոփող ասույթների շարքը. փիլիսոփայական ընդգրկուն խոհեր և հարցադրումներ՝ պար-

[101] Անդ, էջ 89:

[102] Տե՛ս **Պ. Սևակ**, Տերյանը պահանջում է... // ԵԺ, հատ. 5, էջ 71–72:

փակված հակիրճ վճռակների ձևով։ Բանաստեղծի առածանին նրա խոսքի ժողովրդայնության լավագույն ապացույցն է, մանավանդ՝ հայոց առած-ասացվածքների ոճով ինքն էլ է անում բառախաղեր, օգտագործում նրբաբանության, չափազանցության, այլաբանության, ակնարկության և այլ հնարքներ։ Իսկ գրականագիտական և հրապարակախոսական բնույթի նրա հրապարակումները այսօր էլ անգերազանցելի դասագիրք են ամեն մեկի համար, ով ցանկանում է տեղյակ լինել հայերենի առասության անսպառ հնարավորություններին և թեկուզ մասամբ ունակ լինել դրանք գործադրելու։

Պարույր Սևակի ամեն մի ընթերցող, վստահ եմ, զգացել է ասվածը, թեպետ գուցե չի մտորել դրա շուրջ։ Ուստի ճիշտ կլինի մեր ընկալումը հաստատենք մասնագիտական անվիճարկելի մի կարծիքով (հրապարակված Սևակի օրոք). «Լեզվական իրողությունները այնքան ճիշտ են նկատված ու գնահատված, քերականական կարգերի ու իրակությունների համադրության ու հակադրության վերլուծական եղանակը այնքան հմտալից է կիրառված ու նպատակասլաց, ձևակերպումները՝ այնքան հստակ, որ մի պահ թվում է, թե ընթերցում ենք լեզվաբանական մասնագիտական ուսումնասիրություն և ոչ թե ինչ-որ բանաստեղծի ինչ-որ հոդված»[103]:

Անտարակույս, բանարվեստի նման գերազանց վարպետությունը միայն տեխնիկա չէ. դրա հիմքում լեզվի ազգային, մշակութային, պատմական, համահանրային և անհատական գործառույթների խոր իմացությունն է, լեզվական ամեն մի իրողության իմաստավորումը հատկապես այդ դիրքերից։ Հայությանը հավաքականությանը և անհատապես ամեն մեկիս ոգուն և մտքին է ուղղված սևակյան պատվիրանը. «Այո՛, մեր նախնիները մեզ և աշխարհին փոքր ժառանգություն չեն կտակել։ Բայց մենք պիտի հասկանանք և հասկանալով չմոռանանք երբեք, որ մեր **ժառանգության մեծագույն գանձը** մեր լեզուն է»[104]:

Պարույր Սևակի համար հայոց լեզուն մշակութային հարստություն է, պատմական փաստերն ամրագրող, պահպանող յուրատեսակ փաստաթուղթ, հայ մարդկանց բնորոշ մտածողությունը, հայերի գրավոր և բանավոր հաղորդակցման հիմնական գործիքը։ Իսկ չէ՞ որ գործիքն «ապրում է բանելիս և բանելով», մինչդեռ, իրոք, անժխտելի է (ինչպես Սևակի օրոք, այնպես էլ այսօր) գործածական հայերենի աղքատությունը, սեփական բառագանձից «կեսբուռ օգտվելու կամավոր մուրացիկությունը», հավելենք՝ գիտության, կրթության, արվեստի, քաղաքական կյանքում,

---

[103] Տե՛ս **Արտ. Պապոյան**, Պարույր Սևակի չափածոյի բառարան, հատ. 1, Եր.: Եր. համ. հրատ, 1981, էջ 306։

[104] **Պ. Սևակ**, Պահպանենք ու հարստացնենք մայրենին // հ. 5, էջ 155։ Ընդգծումը Պ. Սևակինն է՝ Վ.Մ.:

գործավարության մեջ օտարաբանությանը տուրք տալը, ժամանակակից Հայաստանում հայերենի՝ միակ պետական և պաշտոնական լեզվի դիրքերից նահանջը[105]: Նախկին և ներկայիս օտարամոլների ականջին օղ թող լինի սևակյան ստույգ ախտորոշումը. «Օտար բառերի գործածությունը դարձել է մի տեսակ կիրթ լինելու, զարգացածության, խելքի նշան, մինչդեռ դա պիտի ընկալվի իբրև **տգիտություն, կիսագրագիտություն, մտավոր խեղճություն**, որովհետև որևէ լեզվով քիչ թե շատ կարգին (ուրեմն նաև՝ մաքուր) խոսել չկարողանալը այլ բան չի նշանակում»[106]:

Հայերենի անաղարտության պահպանումը, անհարկի փոխառություններից ազատվելը, հանրությանն ուղղված ճոխ ու գրավիչ խոսքը ամենից առաջ գրողների սուրբ պարտականությունն է. «Գրողի առաջնահերթ խնդիրը լեզուն տիրապետելը չէ՞: Իսկ մենք, բացի թաքուն կամ բացահայտ խորշանքից, այլ մի վերաբերմունք ունե՞նք լեզվաբանական գրականության հանդեպ, զգո՞ւմ ենք մեր լրագրերի, մեր թարգմանական գրականության և մեր իսկ գրքերի լեզուն աղճատող օտարաբանությունները, նկատո՞ւմ ենք աղաղակող սխալները, տեսնո՞ւմ ենք այն չորուցամաքությունն ու աղքատությունը, որ քիչ է մնում օրինակելիության ուժ ստանան»[107]:

Պարույր Սևակի կատարած լեզվական մի շարք շտկում այսօր էլ հրատապ են և ուսանելի (ոչ թե «զգացնել տալ», այլ «զգալ տալ» կամ «զգացնել», ոչ թե «դնել սեղանի վրա», այլ «դնել սեղանին» և այլն), նույնը վերաբերում է «Հայ-ռուսերեն» բառարանի կազմողներին (ոչ թե «կիոսկ», այլ «կրպակ», ոչ թե «կոնտրաբանդիստ», այլ «մաքսանենգ» և այլն[108]):

Գրողի լեզվական պատասխանատվությունը աներկբա պահանջ է, որի խորքում ընթերցողին հասկանալի լինելու հրամայականն է. «Հայտնի է, որ լեզուն հղում-ողորկում-ճախարակում են գրողները, այսքանով՝ նաև «ստեղծում»: Բանը միայն նորակազմություններն ու նորաբանությունները չեն, որ նրանք են ստեղծում (այս անգամ՝ առանց չակերտների): Լեզվաշինարարի նրանց դերը ամենից ավելի դրսևորվում է և պիտի երևա տվյալ լեզվի բոլոր **կենսունակ** տարրերը համարձակորեն «հունցելու» գործում, ըստ որում «**հունցել**» այնպես, որ «հա՛ց դառնա»՝ բոլորին անհրաժեշտ, բոլորից «մարսվող հաց»: Միայն այս դեպքում է լեզուն **ճկուն**՝ ի

---

[105] Հայաստանյան ներկա լեզվավիճակի և լեզվաքաղաքական հրատապ խնդիրների մասին հանգամանորեն տե՛ս Ն. Բեժանյան, Վ. Միրզոյան, Լեզվական անկախության երեսուն տարին, Եր.: Մեկնարկ, 2023:

[106] Տե՛ս **Պ. Սևակ**, Պահպանենք ու հարստացնենք մայրենին, էջ 151: Ընդգծումը Պ. Սևակինն է՝ Վ.Մ.:

[107] Տե՛ս **Պ. Սևակ**, Տերյանը պահանջում է..., էջ 63:

[108] Տե՛ս **Պ. Սևակ**, Բաց նամակ «...բառարան»-ը կազմողներին // ԵԺ, հատ. 5, էջ 92–97:

վիճակի ոչ միայն արտահայտելու առավելագույնը, այլև արտահայտածը **մատչելի** դարձնելու»[109]:

Հայերենի խորագիտակ բանաստեղծի համար հատկապես զայրացուցիչ է, ինչպես իր օրոք, այնպես էլ այժմ որոշ գրողների, լրագրողների, հաղորդավարների, ճարտասանների, մեկնաբանների ելույթներում հանդիպող այն տրտունջը, որ կարող ենք անվանել բառերի յուրատեսակ... «սովի» արձանագրում: «Ինչպե՞ս թե բառեր չկան, ինչպե՞ս թե բառեր չեմ գտնում»[110]: Դեռ ավելին, ինչպես Սևակի օրոք, այսօր էլ ոմանք սեփական լեզվական տկարությունը վերագրում են հայոց մեծազոր ոսկեղենիկին, հայտարարելով, թե այս կամ այն հասկացությունը նշելու համար հայերեն բառ չկա: Բայց չէ՞ որ «չկա» չի նշանակում նաև, թե չի կարող ստեղծվել, եթե մենք տեղյակ ենք հայերենի բառակազմական անսպառ ունակություններին և գիտենք դրանք պատշաճ կերպով գործադրել:

Ահավասիկ, մեր օրերում, թերևս, առավել հրատապ է հնչում բառագործածության սևակյան լեզվափիլիսոփայությունը՝ ամփոփված չորս դրույթի ձևով՝ «քնած բառերին հարություն տալ, լռածներին՝ խոսեցնել և մաշվածներին՝ վերաթարմացնել», ապա, այսքանին ընդունակ լեզվագործածողը կկարողանա նաև չորրորդը՝ նոր բառեր ստեղծել[111]: Ինքը՝ Պարույր Սևակը, կատարելապես մարմնավորում է իր տված խորհուրդը, և մեծ գրողը բոլորիս համար լավագույն օրինակն է ազգային և լեզվական արժանապատվության:

Անտարակույս, Պարույր Սևակի սոցիալ-փիլիսոփայական դիտարկումներըն ավելի ընդգրկուն են, քան հնարավոր էր դա անել մեկ հոդվածի սահմաններում: Սևակը վիթխարի երևույթ է, հարատև ստեղծագործող հզոր միտք, ամենակուլ հույզ, հայոց ազգային ակունքներից եկող մի հսկա, սկզբունքային մտավորականի և քաղաքացու տիպար, մարդ, որը չհասցրեց բոլորել նույնիսկ հիսունամյակը, բայց թողեց մեզ անգնահատելի հոգևոր ժառանգություն:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Պարույր Սևակը (1924–1971) հայ բանաստեղծական լեռնաշխարհի գագաթներից է, խորունկ գրականագետ և գրաքննադատ, քաջահմուտ թարգմանիչ, հայոց լեզվի լավագույն գիտակներից մեկը: Քնարական տաղանդի և գիտական, վերլուծական հզոր մտքի համաձուլման շնորհիվ՝ Պ. Սևակը ստեղծել է ինչպես պատկերավոր և իմաստալից բանաստեղծությունների և պոեմների մնայուն շարք, այնպես էլ հրապարակա-

[109] Տե՛ս **Պ. Սևակ**, Տերյանը պահանջում է... // Անդ, էջ 67–68:
[110] Տե՛ս **Պ. Սևակ**, Ինչ-ը, ինչպես-ը և որպես-ը // Անդ, էջ 400:
[111] Տե՛ս անդ, էջ 400:

խոսական բազում աշխատություններ, որոնց ասելիքը այսօր նույնքան հրատապ է, որքան 20-րդ դարի կեսին: Սույն հոդվածում Պարույր Սևակի սոցիալ-փիլիսոփայական դիտարկումների վերլուծությունը սկսում է երիտասարդ բանաստեղծի արժեքային համակարգից, ինչն էլ վճռորոշ դեր է խաղացել հանրային կյանքի երևույթներն իմաստավորելիս և արտահայտելիս: Ուշագրավ է Պ. Սևակի մարդաբանությունը՝ հայոց համակեցության տարբեր կողմերի նկարագրությունը, ապա և յուրատեսակ վարքականոնի հիմնավորումը: Զարմանալիորեն դիպուկ է Պ. Սևակի առածանին՝ հայ ժողովրդի առածներն ու ասացվածքները ներդաշնակորեն հյուսվում են նրա բանաստեղծական խոսքին՝ նորովի մատուցվելով որպես խրատ, բարոյական վարքագծի կարգավորիչ: Հոդվածում բնութագրվում է «գրող–ընթերցող» փոխհարաբերությունների բովանդակ կարգավորման սևակյան ըմբռնումը, շարադրվում են գրողի և գրական աշխատանքի մասին նրա պատկերացումներն ու պահանջները, հատկապես լեզվագործածության հանդեպ խստիվ պահանջկոտությունը:

Հիմնաբառեր – Պարույր Սևակ, սոցիալ-փիլիսոփայական դիտարկումներ, մարդաբանական հայացքներ, առածանի, «գրող–ընթերցող» փոխհարաբերությունը, գրաքննադատություն, լեզվական պահանջկոտություն, բառագործածություն

Օգտագործված գրականություն

1. **Պ. Սևակ**, Անսպասելի բան, որ սպասելի էր // Երկերի ժողովածու վեց հատորով, հատ. 5, Եր.: Հայաստան, 1974:
2. **Ա.Վ. Արիստակեսյան**, Պարույր Սևակ: Մենագրություն. (վերահրատարակություն), Եր.: Սովետ. գրող, 1984:
3. **Լ.Հ. Հախվերդյան**, Պարույր: Խոհագրություն, Եր.: Սովետ. գրող, 1998:
4. **Արտ. Պապոյան**, Պարույր Սևակի չափածոյի բառարան, հատ. 1, Եր.: Երևանի համալս. հրատ, 1981:
5. **Հովի. Թումանյան**, «Բերանն արնոտ Մարդակերը էն անբան....» // ԵԼԺ տասը հատորով (վերախմբ. հրատ), հատ. երկրորդ, Եր.: ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, 2018:
6. **Ա.Տ. Ղանալանյան**, Առածանի, Եր.: ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1960

СОЦИАЛЬНО-ФИЛОСОФСКИЕ НАБЛЮДЕНИЯ ПАРУЙРА СЕВАКА

Валерий Мирзоян
доктор философских наук, профессор, свободный исследователь

Паруйр Севак (1924–1971) одна из вершин армянской поэтической мысли. В статье анализ социально-философских наблюдений Паруйра Севака начинается с ценностной системы молодого поэта, которая сыграла решающую роль при осмыслении им различных явлений общественной

жизни. Благодаря удачному сплаву лирического таланта и мощного аналитического интеллекта Паруйр Севак сумел создать как ряд образных и мудрых стихотворений и поэмов, так и множество публицистических статей, содержание которых сегодня также актуально, как в середине 20-ого века. Примечательна антропология П. Севака – критическое описание им разных аспектов армянского общества и обоснование необходимого поведенческого кодекса. В поэтическом слове он умело использует армянские народные пословицы и поговорки, преподносит их в качестве нравственных регуляторов. В статье рассматривается также концепция П. Севака о взаимоотношениях писателя и читателя, его понимание особенностей писательского труда и требования к использованию языковых средств.

Ключевые слова: Паруйр Севак, социально-философские наблюдения, антропология, поведенческий кодекс, пословицы и поговорки, взаимоотношения «писатель–читатель», языковая требовательсность

SOCIO-PHILOSOPHICAL OBSERVATIONS OF HOVANNES PARUYR SEVAK

Valeri Mirzoyan
SC. D. in Philosophy, Professor, Freelancer

Paruyr Sevak (1924–1971) one of the pinnacles of Armenian poetic thought. In the article, the analysis of Paruyr Sevak's social and philosophical observations begins with the value system of the young poet, which played a decisive role in his understanding of various phenomena of social life. Thanks to the successful fusion of lyrical talent and powerful analytical intelligence, Paruyr Sevak was able to create a number of imaginative and wise poems, as well as many publicizing articles, the content of which is as relevant today as in the middle of the 20th century. The anthropology of P. Sevak is noteworthy - his critical description of various aspects of Armenian society and the rationale for the necessary code of conduct. In his poetic words, he skillfully uses Armenian folk proverbs and sayings, presenting them as moral regulators. The article also examines P. Sevak's concept of the relationship between the writer and the reader, his understanding of the characteristics of writing and the requirements for the use of linguistic means.

Key words: Paruyr Sevak, socio-philosophical observations, anthropology, code of conduct, proverbs and sayings, writer–reader relationships, linguistic demands

Ներկայացվել է՝ 24,.10.2023 թ.
Ընդունվել է՝ 20.11.2023 թ.

ԱՇԽԱՐՀԸՆԿԱԼՈՒՄԸ՝ ՍԵՎԱԿՅԱՆ ՈՒԹՆՅԱԿՆԵՐԻ ԴԻՏԱՆԿՅՈՒՆԻՑ

Արմեն Ճուղուրյան
Հյուսիսային համալսարանի պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր
Jarmen1@yandex.ru
Սաթեն Ալավերդյան
ՀՊՏՀ «Տնտեսագետ» հրատարակչության խմբագիր
a_satenik@yahoo.com

Ո՛չ հարթագրություն, ո՛չ բարդագրություն,
այլ (այսօր և միշտ և հավիտենից հավիտյանս)
մարդագրություն…
Պարույր Սևակ[112]

Պարույր Սևակը դարձավ 100 տարեկան: Եվ եթե փիլիսոփա բանաստեղծին վիճակվեր ապրել այս հարյուր տարիները, ապա, պատկերացնո՞ւմ եք, որքա՜ն ավելի մեծ կլիներ նրա թողած ժառանգությունը՝ հարյուրապատիկ ավելի մեծ: Սակայն, միևնույն է, առանց այդ հարյուրապատիկի էլ, մեծ գրողի գրական գանձարանն անգնահատելի է:

Երիցս իրավացի է գրականագետ, գրաքննադատ, պրոֆեսոր Դավիթ Գասպարյանը, երբ նշում է, որ Սևակն արեց այն, «….ինչ իրեն էր վիճակված, արեց արարումով ու նվիրումով և, ի վերջո, վառվեց ու մոխրացավ այդ ճանապարհին: Սևակից հետո մեր գրականության գործը ոչ թե նրան կրկնելն է, այլ, որքան էլ առաջին պահին տարօրինակ թվա, նրան հաղթահարելը: Դա է գեղարվեստական մտքի զարգացման ճանապարհը՝ ինչպես երեկ, այնպես էլ այսօր ու վաղը. . . .»:[113]

«Ո՛չ հարթագրություն, ո՛չ բարդագրություն, այլ. . . մարդագրություն». սա էր Սևակի կարգախոսը: Եվ, հիրավի, Սևակի ողջ ստեղծագործությունը մարդու մասին է: Նա թափանցում է մարդու ներաշխարհը,

---

112 Հանուն և ընդդեմ ռեալիզմի նախահիմքերի/Պարույր Սևակ, «Գրական թերթ» (թիվ 2), 1966

113 Դ. Գասպարյան, Պարույր Սևակ. կյանքը և ստեղծագործությունը, «Նոր դար», 2001, http://lib.ysu.am/disciplines_bk/057f9aa10076a5f308d7a05995dbd7e8.pdf

բացահայտում նրա մտքերը, հույզերն ու հոգեբանությունը՝ իր ու իր ապրած դարաշրջանի հարաբերությունների լույսի ներքո։

Հրանտ Մաթևոսյանի բնորոշմամբ՝ «եզակի համաձուլվածք» էր Սևակը՝ գրող, քննադատ, բանաստեղծ, ընթերցող, ուսուցիչ, որի «խոսքի կեսը կռիվ է, հոդված»...

Մարդերգության հրաշալի նմուշներ են Պարույր Սևակի ութնյակները, որոնք, ըստ կառուցվածքի, տրոհված քառյակներ են։ Սրանք մարդու՝ մարդ մնալու ամենօրյա քննությունից, երբեմն էլ հիասթափությունից ծնված տողեր են։ Համոզմունք ունենք, որ յուրաքանչյուր գրող քառյակի կամ ութնյակի ժանրին անդրադառնալիս ընդամենը մեկ ակնթարթում է թղթին հանձնում իր ներքին հուզական փոթորիկը, որը կայծակի պես շանթահարում է իր միտքն ու հոգին։

Սևակն իր ութնյակներով, կարծես թե, շարունակում է Թումանյանի իմաստուն ու խորախորհուրդ քառյակների ավանդույթը՝ իհարկե, հավատարիմ մնալով մարդու դեմքն ու դիմագիծը ճշտող, նրա արատները խարազանող իր ոճին։ Եվ Թումանյանի, և՛ Սևակի դեպքում ընթերցողին ակնառու է դառնում նրանց հոգու և մտքի հուզական ու շանթահարող արտացոլանքը՝ անհատի տագնապային նեղ մտատանջությունից մինչև համամարդկային մտորումներ։

Սևակի ութնյակները սեփական աշխարհընկալման տարբեր դիտանկյուններն են՝ մարդու արատավոր հատկանիշների պարսավանքից մինչև ազգային հոգեկերտվածքի գրաքննություն։

«Մարդը ափի մեջ», «Ականջդ բեր ասեմ», «Անմահները հրամայում են» և այլ ժողովածուներում Սևակը բազմիցս անդրադառնում է անհատի վարքագծի արատավոր դրսևորումներին, որոնք բանաստեղծական կախարդական փայտիկի օգնությամբ, հիրավի, բյուրեղանում են նրա ութնյակներում։ Բանաստեղծն իր այս շարքում պատռում է դիմակներ՝ բացահայտելով մարդկային տարբեր կերպարներ և բնավորության ու կենսակերպի գծեր։

Որոշ ութնյակներ պարզապես հիասթափությունից ծնված տողեր են, ընդվզում կեղծիքի և երեսպաշտության դեմ.

Գողի հետ նա գառը աղում,
Տիրոջ հետ՝ իրեն է ճղում,
Գիշերը՝ լրբություն անում,

Ցերեկը՝ սրբություն խաղում:
Թե մեղուն աջ ոտքն է կծել՝
Ձախով էլ կաղում է այնպես,
Որ կարծեն՝ կռիվ էր մղում
Եվ հիմա... արյուն է հեղում:[114]

Մեկ այլ դեպքում էլ Սևակն այլաբանորեն փառաբանում է մարդու կատարած գործը և, կարծես, պահանջում, որ ըստ պատշաճի մեծարեն նրան և ոչ թե մոռացության մատնեն նրա վաստակը.

Ի՞նչ անենք,
Թե առուն բարակել է,
Բայց չէ՞ որ
Նա մի օր ոռոգել է,
Բայց չէ՞ որ
Ավերված այս դաշտերը
Նա մի օր՝
Մեռնելով՝ նորոգել է:[115]

Բանաստեղծն ու մեծ փիլիսոփան բնավ չի կարողանում հանդուրժել ինքնակայացման ճանապարհին գտնվող և, ավա՜ղ, իրենցից ոչինչ չներկայացնող շինծու քաղաքական գործիչներին, հանրային դիրքի ձգտող «երևելիներին»: Վերջիններս այսօր էլ մեր կյանքի մշտական ուղեկիցներն են, համառորեն չեն իջնում հեռուստաէկրաններից, սոցցանցերի էջերից: Տեսախցիկների առջև սեթևեթող այդ անտաղանդ «դերասանները», իրենց հոգու տկարությունը ներսում թաքցրած, փորձում են, մեկը մյուսին հերթ չտալով, տարբեր առիթներով հնարավորինս վայելուչ կերպով ներկայանալ շրջապատին և «հանրային ասպետ» ձևանալ.

Ի՞նչ ես պահանջում
Այս խեղճ հայելուց,
Հո չես փոխվելու

114http://sevak.am/poem
115 Պարույր Սևակ, Երկեր երեք հատորով, I հատոր, «Սովետական գրող» հրատ., 1982, էջ 480:

Երկար նայելուց.
Եթե հագինըդ
Քուրջ է, ցնցոտի,
Քեզ ո՞նց հայելին
Ցույց տա վայելուչ:[116]

Ագահության ախտը մտատանջության այլ փոթորկալից ալիքներ է առաջացնում մեծ գրողի ներաշխարհում: Սևակը բազմիցս է անդրադարձել է անհատի ընչաքաղցությանը՝ այն անուղղակիորեն բնորոշելով որպես մեծ արատ, ոչ միայն անհատական, այլև հասարակական չարիք: Ընչաքաղցությունը վնասում է անհատին և իր ճանապարհին փչացնում ու ավերում ամեն ինչ՝ մարդասիրություն, գթասրտություն, բարեվարքություն... Փողասիրությունը, ագահությունը և, վերջապես, ընչաքաղցությունն այսօր էլ չարիք են սերմանում մեր շրջապատում: Մինչ օրս էլ մարգարեական են հնչում Սևակի ուղերձները՝ հասցեագրված, այսպես կոչված, հանրային երևելիներին: Եթե մտովի հետ գնանք, կտեսնենք, թե վերջին ժամանակաշրջանում հանրությանը հայտնի քանի-քանի «երևելիներ» պարզապես լքեցին Հայաստանը՝ փախչելով արդարադատությունից և կորցնելով անօրեն ձևով դիզած իրենց հարստությունը.

Բեղերը քեզ քիչ են թվում -
Ուզում ես և լինի մորուք.
Հա՛մ ջահել մնալ ես ուզում,
Հա՛մ դառնալ իմաստուն ծերուկ,-
Դու շատի ետևից ընկած՝
Քիչն էլ ես բաց թողնում ձեռքից...
Ա՜խ, հիմա՛ր, այդ ո՞վ է բռնել
Մի ձեռքով երկու ձմերուկ:[117]

Սևակը, թերևս, նույնքան խորագետ էր պաշտոնյաներին քծնողների վարքագծային դրսևորումները վերլուծելիս: Իր դիտանկյունից քննելով այս շողոքորթներին՝ նա առանձնացնում է վերջիններիս բնորոշ

116 http://sevak.am/poem
117 Պարույր Սևակ, Երկեր երեք հատորով, I հատոր, «Սովետական գրող» հրատ., 1982, էջ 484:

գործելաձևի երկու փուլ. առաջինը պաշտոնյայի մեծարման փուլն է, քանի դեռ նա «գործի գլուխ» է, մինչդեռ պաշտոնից հեռացվելուց հետո քծնողը կտրուկ շրջադարձ է կատարում, քանի որ, բանաստեղծի խոսքով, «իր գործից» նա լավ է հասկանում: Ցավոք, այս վարվելակերպը բնորոշ է բոլոր ժամանակներին, և պատահական չէ, որ դա մեծ ցավ է պատճառում բանաստեղծին.

Գործի գլուխ ես՝
Գլուխդ է տանում,
Գլխիցդ էլ դուրս տաս՝
Գլխով է անում:
Գործից հանեցի՞ն –
Էլ գլո՞ւխ կտա...
Իր գործից լավ է
Նա գլուխ հանում:[118]

Ժողովրդի ծոցից ելած հանճարը՝ Պարույր Սևակը, գրեթե ամեն օր իր թիկունքին զգում էր պաշտոնյա չինովնիկների ատելության շունչը՝ միայն այն բանի համար, որ անհաշտ էր շրջապատում տիրող անարդարության ու անգործության մթնոլորտի հետ: Պարզապես չկարողանալով լռել՝ նա անընդհատ բարձրաձայնում էր իր բողոքը: Սակայն, այդ ընդվզումների նկատելի դառնալով՝ դրանք ոչ թե ընկալվում ու ընդունվում էին, այլ հակադարձվում բանաստեղծի նկատմամբ «վերնախավի» անհանդուրժողականությամբ, ընդդիմությամբ և անգամ՝ չարակամությամբ: Եվ այս առիթով Սևակը մերթընդմերթ ինքնաքննդատական ելույթներով էր հանդես գալիս՝ ընդգծելով, որ անարդարության նկատմամբ իր բարձրաձայն ընդվզումները պատժելիության մթնոլորտ են ձևավորում, ինչի համար ինքը երբեմն թանկ է վճարում.

Ի՞նչ ասեմ խելքիդ.
Ժամանակից շուտ մի խոսք ասացիր,
Քեզ, դրա համար,
Մեղավորների շարքը դասեցին:

118 Պարույր Սևակ, http://sevak.am/poem/%D5%88%D5%92%D4%B9%D5%86%D5%85%D4%B1%D4%BF%D5%86%D4%B5%D5%90/%D4%B3%D5%B8%D6%80%D5%AE%D5%AB-%D5%A3%D5%AC%D5%B8%D6%82%D5%AD-%D5%A5%D5%BD

Բա ո՞նց, մոռացա՞ր.
-Աքլորը կանչեց ժամանակից շուտ՝
Մորթեցին, կերան,
Հետո էլ մատները մի լա՛վ լիզեցին[119]:

Կամ՝

Հիմար ժպիտով
Ծածկում եմ վերքըս -
Ներսից սև՛-սև՛ է,
Դրսից է ներկըս...
Ինքս ո՞նց դառնամ
Հեքիաթի տղան
Եվ ինձ ո՞նց ասեմ.
-Արքա՛, դու մե՛րկ ես...[120]

Ու գալիս են պահեր, երբ համարձակ ու ընդվզող բանաստեղծը, թվում է՝ ուզում է նահանջել, փորձել ինչ-որ ձևով մարել անարդարության դեմ իր հոգու խորքում բռնկվող բողոքի մոլեգնող բոցը՝ համարելով, որ այդ ամենը խաթարում է իր անդորրը և, ավելին, երբեմն էլ դառնում անօգուտ ու անիմաստ: Անշուշտ, հենց նման պահերին են ծնվել որոշ ութնյակներ.

Իմաստուն էր, բայց շատ ձգեց
Ու քաշքշեց այս պարանը,
Մոռանալով, որ պարան է -
Ճիշտ է, հաստ է, բայց գերա՞ն է:
Է՛հ, թող նույնիսկ գերա՛ն լինի,-
Միևնույն է, ո՛վ իմաստուն,
Պիտի հատվեր՝ թե պարան է,
Պիտի ջարդվեր՝ թե գերան է:[121]

Կամ՝

Եթե ասեմ՝
Բոց կլինի,
Եթե չասեմ՝

119 Պարույր Սևակ, Երկեր երեք հատորով, I հատոր, «Սովետական գրող» հրատ., էջ 488:
120 Պարույր Սևակ, Երկեր երեք հատորով, I հատոր, «Սովետական գրող» հրատ., էջ 498:
121 Պարույր Սևակ, Երկեր երեք հատորով, I հատոր, «Սովետական գրող» հրատ., էջ 489:

Խոց կլինի...
Ինքդ ասա.
Ես ի՞նչ անեմ,
Բա իմ բանը
Ո՞նց կլինի: [122]

Երբեմն էլ բանաստեղծին թվում է, որ ընդվզող հոգու ճիչը ոչ միայն չի իմաստավորվում, այլև վտանգավոր ազդակներ է ձևավորում իր իսկ համար, և, միգուցե, զգուշավորությունը երբեմն տեղին է.

Մեղուն ինքն էլ չգիտե,
Թե խայթելիս կսատկի:
Ցողունն ինքն էլ չգիտե,
Որ կթոշնի՝ թե ծաղկի:
Դու, որ մարդ ես՝ ոչ մեղու,
Ոչ էլ ցողուն մի անշունչ,
Ամեն «սխալ» մի՛ ձաղկիր,
Ամեն «սխալ» մի՛ շտկիր: [123]

Այդուհանդերձ, Սևակ բանաստեղծն ու քաղաքացին չի ընկճվում բարոյահոգեբանական ճնշումներից և, բնականաբար, նահանջը համարում է իր բարոյական արժեհամակարգից դուրս մի երևույթ: Նա փայլուն կերպով գիտակցում է, որ իր ժողովրդի կողքին է, ապրում է վերջինիս ցավերով՝ փորձելով չընդհատել ու վերջնակետին հասցնել իր բռնած գործը.

Անհարմար է բոբիկ քայլել,
Այս կոշիկն էլ շատ է նեղում:
Ինչպե՞ս քայլել առանց ուղու,
Այս ճամփան էլ շատ է շեղում:
Դոփել տեղո՞ւմ: Բայց դրանից
Ո՛չ կոշիկդ կլայնանա,
Ո՛չ էլ ցավը կմեղմանա...
Ցա՛վն է հաճախ առաջ մղում: [124]

122 Պարույր Սևակ, Երկեր երեք հատորով, I հատոր, «Սովետական գրող» հրատ., էջ 492:
123 Պարույր Սևակ, Երկեր երեք հատորով, I հատոր, «Սովետական գրող» հրատ., էջ 479:

Արդիական են այն ութնյակները, որոնցում արտացոլվում է հայ ժողովրդի հավաքական հոգեկերտվածքը: Եթե զուգահեռներ տանենք մեր օրերի հետ, ապա կտեսնենք, որ այսօր էլ, անցնելով Արցախյան գոյամարտի դաժան ուղիներով, հայ մարդը լույս է փնտրում թունելի վերջում, ապրում լավատեսական սպասումներով, սակայն միշտ չէ, որ այդ սպասումների իրագործումը տեսնում է սեփական հողի վրա, իր հայրենիքում՝ բռնելով տարագրության ճանապարհը, ինչպես նկարագրված է այս ութնյակում.

Գարունն է գալիս, դիմավորեցե՛ք,-
Ահա և նրա պարզ «հեռագիրը»՝
Հին աշտարակին, մի ոտքի վրա
Տնկվել է նորից ծեր արագիլը:
Գարունն է գալիս: Վերադարձել է
Եվ արագիլը օտարությունից,
Իսկ սրա հոգին չի բացակայել,
Չի չվել երբեք, բայց... տարագիր է: [125]

Մեր օրերում հատկապես պետք է արժեքավորել Սևակի հուսադրող մեկնաբանությունները հայ ժողովրդի միասնական լինելու, վիշտն ազգովի հաղթահարելու, խոստումնալից գալիքի և, ի վերջո, կուտակված ազգային ցավին, ընկճախտին հաղթելու հաստատակամության մասին: Հայրենասեր բանաստեղծը հորդորում է երբեք չընկճվել, և եթե անգամ ծիծաղել չի հաջողվում, փորձել տարբերվել մեր ծիծաղով ու ազգային վերելքին սպառնացող վտանգները հաստատակամորեն հաղթահարել հավաքական ուժ դառնալով.

Մեր տունը մեկ չէ,
Մեր հալը մեկ է,
Գնալը՝ տարբեր,
Բայց գալը մեկ է:
Թող որ ծիծաղով
Տարբերվենք մեկ-մեկ,

124 Պարույր Սևակ, http://sevak.am/poem
125 Պարույր Սևակ, http://sevak.am/poem

Ի՞նչ տարբերություն -
Մեր լալը մեկ է: [126]

Սևակը ոչ միայն իր ժամանակի, այլև մեր օրերի մեծ մտածողն է, որի համար մարդը մեծագույն արժեք է: Նրա կյանքը, գործունեությունն ու ստեղծագործությունը ներշնչանքի աղբյուր են դարձել ու դառնում շատերի համար: Ուստի վստահաբար կարող ենք ասել, որ մեծ բանաստեղծի «հաղթարշավը» շարունակվում է մինչ օրս ու կշարունակվի դարերում . . .

ԱՄՓՈՓՈՒՄ

Պարույր Սևակի ութնյակները կարելի է վերլուծել տարբեր դիտանկյուններից, սակայն, ամեն դեպքում, դրանցում վեր է հառնում ընդվզող մարդ-քաղաքացու կերպարը, որն անհանդուրժող է քծնանքի, երեսպաշտության, ընչաքաղցության ու այլ արատավոր երևույթների հանդեպ: Մյուս կողմից՝ բանաստեղծ փիլիսոփան լավ է գիտակցում, որ այդ բարձրաձայն ընդվզումներն այնքան էլ աներկբայորեն չեն ընկալվում շրջապատի կողմից, և երբեմն ինքն է դառնում թիրախ կամ քավության նոխազ: Նա ժամանակ առ ժամանակ հանդես է գալիս ինքնախոստովանությամբ՝ փորձելով ընդգծել անարդարության դեմ իր ընդվզումների հասարակական արձագանքները, որոնք, մեղմ ասած, բարյացակամ չէին: Դրանց դիմակայելու համար նա փորձում է լինել ավելի զգուշավոր, բայց և այնպես, երբևիցե չի դավաճանում իր դավանած սկզբունքներին:

Սևակն իր ութնյակներում չի շրջանցում հայ ժողովրդի ապագային միտված սպասումների թեման: Նա կոչ է անում ժողովրդական ցավը հաղթահարել հավաքական ուժ դառնալով, հայրենի հողի վրա ազգանվեր գործունեություն ծավալելով, չլքելով հայրենիքը, գնահատելով մարդուն ու նրա գործը. սրանք թեմաներ են, որոնք հուզում են բոլորիս մինչ օրս:

Հիմնաբառեր. Պարույր Սևակ, ութնյակներ, ազգային հոգեկերտվածք, անհատի վարքագծային արատներ, ինքնախոստովանանք, հոգու ընդվզում

126 Պարույր Սևակ, http://sevak.am/poem

Օգտագործված գրականության ցանկ

1. Պարույր Սևակ, http://sevak.am/digest/currentdigest/%D5%88%D5%92%D4%B9%D5%86%D5%85%D4%B1%D4%BF%D5%86%D4%B5%D5%90?fbclid=IwAR3__WRfoPDvh665wAeFnOv4GpGCLbeqHa_boFPo5VDwyj9A-bYXLGiIJdo
2. Պարույր Սևակ, Երկեր երեք հատորով, I հատոր, «Սովետական գրող» հրատ., 1982:
3. Դ. Գասպարյան, Պարույր Սևակ. կյանքը և ստեղծագործությունը, «Նոր դար», 2001, http://lib.ysu.am/disciplines_bk/057f9aa10076a5f308d7a05995dbd7e8.pdf
4. http://sevak.am/kensagrutyun

ВОСПРИЯТИЕ МИРА С ТОЧКИ ЗРЕНИЯ СЕВАКСКИХ ОКТЕТ

Армен Джугурян
Профессор Северного университета, доктор экономических наук
Сатен Алавердян
Редактор издательства «Тнтесагет» АГТУ

Анализ октетов Паруйра Севака с разных точек зрения свидетельствует о непокорном человеческом гражданине, не терпящем лести, лицемерия и индивидуальной слабости, стремящемся возвысить их в своих октетах. Однако, с другой стороны, поэт-философ прекрасно осознает, что эти громкие протесты не так однозначно воспринимаются в действительности, а иногда становятся непереносимыми для окружающих. И в таких случаях Севак самопровозглашенно появляется в своих восьмерках, пытаясь подчеркнуть злобную общественную реакцию, возникающую в результате его протестов против несправедливости, чтобы противостоять им, он выражает в своих произведениях некоторую осторожность, но не отступление.

Октеты Севака не обходят стороной и тему будущих ожиданий армянского народа. В октетах поэта отражены вопросы коллективного преодоления народной боли, необходимости националистической

деятельности на родной земле, предотвращения отчуждения, которые еще ждут своего решения.

Ключевые слова: Паруйр Севак, октеты, национальная психика, поведенческие недостатки личности, самоисповедание, сопротивление души

PERCEPTION OF THE WORLD FROM THE PERSPECTIVE OF SEVAK'S OCTETS

Armen Tshughuryan
Professor of Northern University, doctor of economics

Saten Alaverdyan
Editor of "Tntesaget" publishing house of ASUE

Keywords: Paruyr Sevak, octets, national psyche, individual behavioral shortcomings, self- confession, rebellion of the soul.

The analysis of Paruyr Sevak's octets from different perspectives is a testimony on a rebellious human citizen, who does not tolerate flattery, hypocrisy and individual weakness trying to raise them in his octets. However, on the other hand, the poet-philosopher is well aware that these loud protests are not clearly perceived in reality and sometimes they become intolerable by those around them. And in the case of such occasions, Sevak self-confessedly appears in his octets, trying to emphasize the malicious public reactions resulting from his protests against injustice, in order to face them, he expresses some caution, but not retreat, in his works.

Sevak's octets do not bypass the topic of the future expectations of the Armenian people. In the poet's octets, the problems of collective overcoming of popular pain, the need for nationalistic activities on the native soil, and the prevention of alienation, which are still waiting for their solutions are reflected.

Ներկայացվել է՝ 04.10.2023 թ.
Ընդունվել է՝ 15.11.2023 թ.

«ԽԱՂԱ ԼԻՆԵԼԸ»՝ ՍՏԵՂԾԱԳՈՐԾ ԳՈՅԱԿԵՐՊԻ ՀԻՄՆԱՐԱՐ ԽԹԱՆ

Լեյլի Կարապետյան
Հյուսիսային համալսարանի Ալավերդու բաժանմունքի դասախոս
Leyli.karapetyan@mail.ru

Անխաղալիք մանկության երկունքի արդյունք են ժողովրդական խաղերը՝ «Ճղլախտի», «Քարկտիկ», «Կոճի», «Յոթքարանի» և այլն: Խաղի առարկաները ձեռքի տակ գտնվող սովորական առարկաներ են՝ քար, գոտի, բիզ, դանակ և այլն: Այս խաղերի ընթացքում թիմային աշխատանքը մշակել է արժեհամակարգ՝ ընկերություն, ազնվություն, հանդուրժողականություն, դիմադրողականություն, պարտությունից չչարանալու բնական իրավիճակ և այլն: Այսինքն՝ դժվարին կացությունը՝ պատրաստի գնված խաղալիք ունենալու անհնարինությունը, երեխային, պատանուն մղել են ստեղծագործության՝ այդ խաղերում անբռնազբոս ներդնելով բնության, տիեզերքի, մարդկային հարաբերությունների ընկալման բովանդակություն , որ դարերի ընթացքում զարգացել, զուլալվել ու իմաստուն է մնացել մինչ այժմ: Այդ խաղերը սովորեցնում են դժվարին իրավիճակից չերկնչել, անձնատուր չլինել անելանելիությանը, այլ փնտրել ու գտնել ելքը: Ուշագրավ է, որ այս մոտեցումը անբռնազբոս կամրջվում է ուսուցման ժամանակակից՝ խթանող ձևին, որը առանցքային է համարում գիտելիքների յուրացման հիման վրա անձի ստեղծագործական ուժերի զարգացումն ու կատարելագործումը, ներքին հնարավորությունների բացահայտումը[1]: Այս նպատակի իրագործման համար կրթության ժամանակակից մեթոդները կարևորում են ուսուցման գործընթացի կազմակերպումը ուսումնական խաղերի օգնությամբ: Ի՞նչ է սա մեզ՝ հայերիս համար. դա՞րձ ի շրջանս յուր…

Հարցի պատասխանը գտնում ենք Հովհաննես Թումանյանի մանկավարժական դիտարկումներում:

Խոսելով խաղերի կարևորության մասին՝ Հ.Թումանյանը «վերակենդանացնում է» մի դարձվածք՝ «ուժերը խաղս լինել». «…Էսպես է բնության սքանչելի օրենքը. կյանքն ու կենդանությունը, ուժեղ հոգին ու առողջ սիրտը **խաղով** են արտահայտվում: Խաղը մի հեշտ ու հաճելի միջոց է, որ նպաստում է մարդու թե՛ ֆիզիկական, թե՛ մտավոր և թե՛ բարոյական զարգացմանը: Խաղը առանձնապես անհրաժեշտ պահանջ է երեխաների

[1] Ուսումնառությունն ու դասավանդումը կրտսեր դպրոցում, Ձեռնարկ ուսուցիչների համար, ԱՅՌԵՔՍ, Երևան, «Լուսաբաց» հրատարակչություն, 2007 թ., էջ 238

ու պատանիների համար, էն դալար հասակի համար, որ մեր լեզուն որոշում է մի բառով՝ **մանկություն**»[2]:

Հ. Թումանյանը ընդգծում է, որ պետք է գտնել մանկությանը սնունդ տալու ճիշտ ձևը: Նա հույժ կարևոր բանալի է տալիս բոլոր ժամանակների մանկավարժներին: Նրա հակիրճ խոսքը մի ամբողջ մեթոդական ձեռնարկ է, տեսություն, որին, ինչպես գիտենք, հաջորդել են իր իսկ գործնական քայլերը. «Մենք տքնում ենք այդ հանելուկի վրա, իսկ ինքը՝ մանուկ հասակը, ցույց է տալիս էն հրաշալի ձևը ու ամեն տեսակի սնունդ էլ պահանջում է իր ուզած ձևով՝ **խաղով**: Խաղը նրա՝ մանուկ մարդու բնական, օրգանական պահանջն է, նրա լրջությունն է, նրա էությունն է: Խաղում է նրա մատաղ կյանքի ամեն մի մասնիկը, խաղում է նրա թրթռուն սիրտը ջահել կրծքի մեջ, ու կյանքում ամեն բանի նա խաղով է մոտենում, խաղով է քննում, խաղով է ճանաչում ու ընդունում: Դա նրա ձևն է, դա նրա մեթոդն է: ԵՎ ամեն բան, ինչ որ նրան տրվում է խաղով, ուրախությունով ընդունում է, հեշտ էլ յուրացնում է՝ առանց ձանձրանալու, առանց հոգնելու»[3]:

Կրթության կազմակերպման մեջ խաղի կարևորության մասին բանաստեղծի խոհերը կարծես մի երկունքի սքանչելի զավակ լինեն ՝ բանաստեղծություն, հեքիաթ, կտավ (անվանեք, ինչպես կուզեք), և այդ երկունքի սքանչելի պտուղը ուսուցանում է **ինչպես ուսուցանել**: Դա մեր օրերի աշակերտակենտրոն ուսուցումն է, որը կարևորում է երեխային ուսուցման օբյեկտից սուբյեկտ դարձնելը, որպեսզի նա փորձի և կարողանա ինքնուրույն հաղթահարել գիտելիք ձեռք բերելու ճանապարհը, իսկ ուսուցիչը ճիշտ կատարի ուղղորդողի իր կարևորագույն դերը[4]: «Ուժերի խաղս լինելը» գիտակցության գարունն է: Պատկերացրեք՝ ինչ կկատարվի, եթե «խաղս եղած», արթնացած հողին երկինքը անձրև չուղարկի: Ուսումնական խաղը գարուն մանկության ծիլն է հողում, կարկաչն է սառցե կապանքից ազատված առվի շուրթին: Արև-ուսուցիչը պիտի ուսումնական գործընթացը կազմակերպի այնպես, որ ծիլերը չմեռնեն հողում: «Ուսուցումը պետք է լուրջ ընկալել» հոդվածում 20-րդ դարի համաշխարհային մանկավարժության նվաճումներում բացառիկ դեր ունեցող Լի Շուլմանը ուսումը բնութագրում է որպես երկու գործընթացների միահյուսում՝»ներքին գիտելիքների մղում դեպի դուրս և արտաքին գիտելիքների ընկալում դեպի ներս»: Լի Շուլմանը բացատրում է, որ դա ամենևին չի նշանակում, որ «նախորդ գիտելիքը պետք է դուրս մղվի՝ տեղ ազատելով հաջորդների համար»: Մեկնաբանելով, որ անվերջ

---

[2] Տե՛ս **Մելքումյան Մ.Ս.,** Թումանյանը կրթության և դաստիարակության մասին, «Լույս» հրատարակչություն, Երևան, 1969 թ. էջ 262-263

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 263

[4] Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Ձեռնարկ ուսուցիչների համար, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, Երևան, 2005 թ., էջ 46-48

է դրսից ներս և ներսից դուրս շարժը՝ Լի Շլիմանը շարունակում է. «Ուսուցումը արագացնելու համար հարկավոր է սկսել ներսից դուրս գործընթացից: Ուսուցման առաջին ազդեցությունն այն չէ, ինչ տալիս է ուսուցիչը մանկավարժորեն, այլ աշակերտի ներսում գտնվող էության ուսումնասիրումն է»[5]: Նույն գաղափարն է ընկած նաև Ռ. Մարզանոյի՝ ուսուցման ծրագրի հինգ չափանիշների հիմքում.»Ուսուցիչը պետք է խրախուսի ուսումնառությունը և կենտրոնանա… այն բանի վրա, թե ինչպես օգնի աշակերտներին՝ բացահայտելու իրենց ներուժը: Սովորողները կարիք ունեն զարգացնելու իրենց ինքնուրույնությունը և ոչ թե կախվածությունը»[6]: Ներսից դուրս և դրսից ներս անվերջ շարժի բանալին շատ ավելի վաղ տվել է Հ.Թումանյանը. նա հենց խաղն է համարում այն զորեղ միջոցը, ճանապարհը, որ օգնում է երեխային՝ **ինքնուրույն** արթնացնելու իր ներսի առողջ ուժերը: Հ. Թումանյանի մեկնության հանգույն՝ խաղն է նպաստում ներուժի «խաղս լինելուն»: Խորապես հասկանալի է, թե ինչու հենց 1915 թ, իրադարձություններից հետո «խաղս եղան» Թումանյանի՝ խաղեր ստեղծելու ներքին ուժերը . ապրել ու ապրեցնել էր պետք մանուկ սերնդին՝ մահաշունչ այդ օրերին փրկելու ազգի ապագան: Մինչև գոյության արմատները թափանցող ցավին դարման դեղատոմսի այս ժայթքումը ծնունդ է ամբողջ կյանքում հայ դպրոցի, կրթության մասին գրողին փոթորկած մտորումների, ուստի ընդերքից բխող մաքրամաքուր ջրի նման հստակ է նրա գործունեությունը. 1915թ. Հ.Թումանյանի տանը հիմնարկեք էր՝ «Մանուկ» ընկերություն, որ յուրատեսակ «Վերնատուն» դարձավ՝ միտված մանուկ սերնդի կրթադաստիարակչական կարևորագույն խնդիրների բացահայտմանը և լուծմանը: Ընկերության կողմից հրատարակվող «Ազդ»-ում Հ. Թումանյանը մանկավարժի հմտությամբ համոզում է ընթերցողին, որ իր ստեղծած հայրենագիտական խաղերը կրթադաստիարակչական մեծ նշանակություն ունեն: Հ. Թումանյանը լրջագույնս էր արժևորում խաղերը և լրջագույն վերաբերմունքով նախապատրաստում դրանք՝ ուսումնասիրելով եվրոպական երկրների փորձը՝ խարսխելով դրանք ազգային հենքին, հավատարիմ մնալով մեծին ու փոքրին սիրելի ժողովրդական խաղերին: Նրա խաղերը հստակ նպատակամիտված են՝ **հայրենաճանաչողություն**, ուստի և խորապես ազգային են: Նրա «Հայոց գետերը» հայրենաճանաչողական խաղը զարմացնում է ուսումնասիրողներին թեմայի՝ Թումանյանի խորագիտակու-

[5] Տե՛ս Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, 20-րդ դարի մանկավարժական տեսություններ, Ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար, Նոյյան տապան, Երևան, 2005, էջ 374-375

[6] Տե՛ս Ուսումնառությունն ու դասավանդումը կրտսեր դպրոցում, Ձեռնարկ ուսուցիչների համար, ԱՅՌԵՔՍ, Երևան, «Լուսաբաց, հրատարակչություն, 2007թ., էջ 102

թյամբ: Խորարժեք է նաև խաղի դաստիարակչական նպատակը՝ հայրենիքը ճանաչելը հայրենիք սիրել է:

Հեղինակելով շուրջ 10 խաղ՝ «Աստղերի խաղը», «Դդում», «Թանկագին քարեր», «Հայկական առածներ», «Հայոց գետերը», «Սրամիտ հովիվը» և այլն, տալով դրանց մեթոդիկան՝ **Ամենայն հայոց բանաստեղծը** դառնում է ոչ այնքան աշակերտի, որքան **ուսուցչի ուսուցիչ,** բացահատում ու սովորեցնում նրան մտավոր խաղեր ստեղծելու, դրանք ուսումնական գործընթացում ճիշտ ու նպատակասլաց կիրառելու կարևորագույն սկզբունքները, կանոնները:

Հ.Թումանյանի մանկավարժական դիտարկումները, ուսումնական խաղերը ուրույն ներքին շարժառիթներ են ուսուցչի համար՝ իրազեկվելու և ինքնուրույն գործելու: Այդ խաղերին ծանոթությունից, ճշմարիտ, «խաղս են լինում» ուսուցչի ներքին ուժերը: Մենք ևս հնարավորինս փորձեցինք Մեծ լոռեցու հետևորդը լինել կրտսեր դպրոցում իր իսկ ստեղծագործությունների ուսուցման ընթացքում: Մեր քերթության անհաս Արարատը, անշուշտ, կխրախուսեր ապրեցնող խաղերի ստեղծման մեր փորձը այնպիսի դժվարին մի ժամանակաշրջանում, որ, ցավոք, աղերսներ ունի իր ապրած տագնապային ժամանակաշրջանի հետ, որ դրդեց նրան, մղեց խաղաստեղծման, մանուկ սերնդին ապրեցնող խաղաստեղծման:

Ճեպընթաց

Խաղը ներկայացվում է 3-րդ դասարանի համար, ցանկության դեպքում կարելի է կիրառել մյուս դասարաններում՝ վերանվանելով վագոնները:

Խաղի ուսուցողական նպատակը՝ Հ. Թումանյանի ստեղծագործությունների կրկնություն և ամփոփում:

Խաղի դաստիարակչական նպատակը՝1. սեր հայրենիքի, հայրենի բնության և այդ բնության մեջ ապրող մարդկանց նկատմամբ, 2. գիտելիքն է հաղթանակի գրավականը:

Խաղի ընթացքը

Դասարանը բաժանվում է փոքր խմբերի (4 կամ 5 հոգի): Բոլոր խմբերին տրվում է նույն հանձնարարությունը՝ «ուղևորներին» ճիշտ նստեցնել ճեպընթացի վագոններում, որպեսզի

տրված ժամանակում ճեպընթացը հնարավորինս քիչ կանգառներով և անվթար հասնի նշանակված վայրը:

Երեխաներին բաժանվում են ծրարներ, որոնցում տվյալ ստեղծագործության հատվածներով քարտեր են: Հանձնարարվում է ճիշտ հաջորդականությամբ հավաքել բնագիրը և «նստեցնե»լ համապատասխան վագոնում՝1. «Ամենից լավ տունը»,2. «Իրիկունը», 3. «Թռչունի մտածմունքը»,4. «Գետակը»,5. «Անհաղթ աքլորը»,6. «Սասունցի Դավիթ»,7. «Կացին ախպեր»,8. «Սուտլիկ որսկանը»:

Կարելի է նաև հանել 2-րդ, 3-րդ, 5-րդ վագոնները՝ նայած խաղի համար տրվող ժամանակին:

Ամրագրում ենք , թե որ խումբը երբ հասավ նշանակված վայրը: Խաղի ավարտին միասին ստուգում ենք բնագրերը, ուղղում սխալները, որպեսզի որոշվի հաղթող խումբը:

Առանց կանգառների ժամանակին տեղ հասած խումբը բոլոր խմբերի կողմից արժանանում է ծափողջույնների:

Լոտո դարձվածքներով

Խաղը նախատեսված է 3-րդ դասարանի համար: Ստուգում ենք դարձվածքների իմացությունը: Դասարանը բաժանվում է յոթհոգանոց խմբերի: Խմբերին տրվում են լոտոյի մեկական թերթիկ, դարձվածքները բացատրող յոթ խաղաքար, ևս յոթ դատարկ խաղաքար; Լոտոյի թերթիկը բաժանված է հորիզոնական 3 և ուղղահայաց յոթ մասերի: Առաջին հորիզոնական 7 վանդակներում գրված են 3-րդ դասարանում անցած դարձվածքները՝ աքլորակռիվ տալ, թևեր պարզևել, համբերությունը կորցնել, օձի լեզու թափել, կռվախնձոր դառնալ, քրտինք թափել, շունչը փչել:

Խաղի համար տրվում է ժամանակ այն հաշվով, որ հաղթող թիմը որոշելիս ամենայն հավանականությամբ կարիք կլինի լրացուցիչ հանձնարարության, ուստի և՝ լրացուցիչ ժամանակի:

Նույն խաղաքարերը խաղավարի պարկում են: Նայած դասարանի պատրաստվածության՝ խաղավարի պարկում կարող են լինել նաև լրացուցիչ 2-3 այլ դարձվածքներ: Խաղավարը պարկից հանում է խաղաքարը, հնչեցնում խաղաքարին գրված բացատրությունը, և թիմերը լոտոյի երկրորդ շերտի բաց վանդակներում տեղադրում են համապատասխան դարձվածքը:

Հաղթում է այն թիմը, որը ամբողջությամբ ճիշտ է տեղադրել քարերը և վաստակել յոթ միավոր: Եթե մեկից ավելի թիմ է վաստակում յոթ միավոր, հաղթող թիմերի միջև սկսվում է երկրորդ մրցափուլը. նրանք պետք է հնչեցնեն, ապա դատարկ խաղաքարերին գրեն դարձվածքներ և տեղադրեն լոտոյի 3-րդ շերտի դատարկ վանդակներում: Հաղթում է այն թիմը, որը ավելի շատ լրացուցիչ դարձվածքներ է գրում (կարելի է նաև ներառել դրանց բացատրության իմացությունը կամ կիրառումը բառակապակցության, նախադասության մեջ):

Ճանաչի՛ր հեքիաթը

Խաղը բաղկացած է 7 խաղաքարտից և գլխավոր շրջանաձև պատկերից: Քարտերին բնորոշ հատվածներ են Հ.Թումանյանի հեքիաթներից: Համապատասխան հեքիաթներից նկարազարդ պատկերներ են գլխավոր շրջանաձև պատկերին:Այս խաղը կարող են խաղալ յոթ խաղացող կամ դասարանը բաժանել յոթ թիմի՝ ըստ դասարանում աշակերտների քանակի: Յոթ խաղացողից յուրաքանչյուրը կամ յոթ թիմից մեկական խաղացող վերցնում է մեկ խաղաքարտ: Մտածելու համար տրվում է ժամանակ՝ մինչև երեք րոպե: Թիմը, կարդալով հեքիաթի հատվածը, գտնում

է համապատասխան նկարը գլխավոր շրջանաձև պատկերին և ամրակի օգնությամբ քարտը փակցնում համապատասխան նկարին: Թիմը բարձրաձայնում է, թե ինչ է սովորեցնում տվյալ հեքիաթը: Բոլոր թիմերը հերթականությամբ փակցնում են իրենց ընտրած ճիշտ տարբերակները: Եթե թիմերից մեկը սխալվում է, խաղավարի կողմից ստանում է տուգանային քարտ: Այդ թիմին հնարավորություն է տրվում մինչև խաղի ավարտը ուղղել իր սխալը. Այս դեպքում թիմի անդամները , մեկը մյուսին շարունակելով, պատմում են այդ հեքիաթը՝ ապացուցելով, որ սխալի ուղղումը մեխանիկական չէ: Հաղթող թիմը խաղավարի կողմից ստանում է մրցանակ. Խրախուսելի է, որ դա լինի այն հեքիաթը, որը բաժին է ընկել հաղթող թիմին:Կարելի է ունենալ մեկ ավելորդ քարտ, որի համապատասխան նկարը չկա գլխավոր շրջանաձև պատկերին.շփոթեցնող խաղաքարտը կստիպի մտածել և ավելի աշխույժ կդարձնի խաղը : Խաղի ավարտին ուսուցիչը կարող է դրվատանքի խոսք ասել առանձին աշակերտների հասցեին, եթե նրանք հետաքրքիր մտքեր են հայտնում, գրագետ կառուցում խոսքը և այլն:

Խաղի միջոցով երեխաները հավաստում են, որ ճանաչում են Հ. Թումանյանի հեքիաթները, գիտեն այդ հեքիաթների ուսուցողական արժեքը, հմտանում են թիմային աշխատանքում, համախմբվում են, գնահատում արագ մտածելը և ժամանակը ճիշտ օգտագործելը:

Խաղը կարելի է կիրառել նաև մայրենիի ամփոփիչ այլ թեմաների ժամանակ՝ համապատասխանաբար փոխելով քարտերի բովանդակությունը և գլխավոր շրջանաձև պատկերի նկարները: Լեզվական ամփոփիչ դասի դեպքում դրանք կարող են լինել համապատասխանաբար տեսական հարց քարտին և գործնական օրինակ գլխավոր շրջանաձև պատկերին:

Նկարի՛ր մարդուկ դարձվածքներով

Խաղը նպատակահարմար է կիրառել միջին դասարաններում, երբ երեխաները կուտակել են դարձվածքների որոշակի պաշար:

Խաղի ընթացքը

Երեխաները հերթով մոտենում են գրատախտակին, ասում և գրում դարձվածք, ապա նկարում մարդու մարմնի այն մասը, որի անվանումը կա դարձվածքում: Օրինակ՝ 1-ին աշակերտ՝ գլուխ տալ (նկարում է գլուխ), երկրորդ աշակերտ՝ աչքի ընկնել (նկարում է մեկ աչքը), երրորդ աշակերտ՝ ականջ դնել (նկարում է մեկ ականջը) և շարունակաբար՝ հոնքերը կիտել, քթի տակ, ականջի ետև գցել, քթի ծակ ունենալ, վիզ ծռել, մազերը բիզ-բիզ կանգնել, մատը մատին չտալ, ոտք մեկնել, սիրտը թրթռալ և այլն, մինչև ավարտվի մարդուկի պատկերը: Ի դեպ, նկարը ստացվում է մի քիչ անհամաչափ՝ ոչ այնքան կլոր գլուխ, մեկ մեծ և մեկ փոքր ականջ և այլն, և սա ավելի ուրախ ու արդյունավետ է դարձնում խաղը: Սխալվող աշակերտը զրկվում է նկարելու իրավունքից և տեղը զիջում հաջորդ աշակերտին, մինչև պտույտով հերթը դարձյալ իրեն

հասնի: Խաղի ընթացքում երեխաները համոզվում են, որ մարդը իր զգացողությունները արտահայտել է մարմնի մասերով, որովհետև հենց այդպես էլ զգացողություններ է ապրել: Այսպես դյուրին է մտապահել դարձվածքները: Խաղը կարելի է դարձնել թիմային: Այս դեպքում յուրաքանչյուր թիմ նկարում է իր մարդուկը՝ ստեղծելով դարձվածքների շարք: Հաղթող թիմը կարող է որոշվել պայմանավորված ժամանակում անսխալ դարձվածքների քանակով: Կարելի է որպես հաղթանակի պայման ավելացնել դարձվածքը նախադասության մեջ կիրառելու պահանջը՝ ամրապնդելով դարձվածքների իմացությունը: Խաղը շատ աշխույժ է ընթանում՝ դրսևորելով խմբային աշխատանքում յուրաքանչյուր մասնակցի կարևորությունը:

Դարձվածքներով կարելի է այլ խաղեր ևս կազմակերպել: Օրինակ՝ **Ստեղծի՛ր կենդանաբանական այգի դարձվածքներով** (կրիայի քայլերով, լուն ուղտ դարձնել, հավի հիշողություն, ուղտի ականջում քնած և այլն):

Իմաստուն մեկ հնչյունը

Խաղը նախատեսված է առաջին դասարանի աշակերտների համար: Նպատակը հնչյունի իմաստազատիչ գործառույթի ընկալման ամրակայումն է և հայրենասիրության դաստիարակումը: Արկղիկում հայոց հնչյուն-տառերն են (պետք է կանխատեսել և որոշ հնչյուն-տառեր՝ հատկապես ձայնավոր, մեկից ավելի ունենալ): Մասնակիցները հերթով մոտենում են, արկղից վերցնում մեկ տառ և փորձում դրանով փոխարինել տրված բառի մեկ տառը այնպես, որ նոր բառ ստացվի, գրում գրատախտակին «Բառասկիզբ», «Բառամեջ» կամ «Բառավերջ» սյունակում, կանգնում համապատասխան խմբում: Օրինակ՝ **սար**: 1. Բար, դար, լար,…քար, 2. Սուր, սեր, 3. Սագ…սան: Խաղի ընթացքում դասարանում բնականաբար ձևավորվում է 3 խումբ, և երեխաները ավելի շոշափելի են ընկալում, որ փոխվող հնչյունը կարող է լինել երեք դիրքում՝ բառասկզբում, բառամիջում կամ բառավերջում: Ուսուցիչը աշակերտների օգնությամբ հանում է բառաշարքերից իմաստ չարտահայտող հնչյունախմբերը, օտար կամ բարբառային բառերը, ավելացնում բաց թողնվածները և բացատրում, եթե անծանոթ են: Խաղի ավարտին ուսուցիչը փոքրիկ զրույց է ունենում յուրաքանչյուր հնչյուն-տառի կարևորության և այն մասին, որ հայոց գրերը մեր զինվորներն են և հայրենիք են պահում, իսկ հաղթանակի համար խիստ կարևոր է յուրաքանչյուր զինվոր, ինչպես յուրաքանչյուր հնչյուն բառում: Խաղի ավարտին կարելի է խմբով արտասանել հայոց այբուբենը կամ երգել: Խաղը նաև օգնում է բառապաշարի հարստացմանը, լեզվի մաքրությանը:

Բնությունից անհատին տրված ներքին առողջ ունակությունները շատ կարևոր են կյանքում: Դրանք սովորաբար ինքնաբուխ ժայթքում են, երբ մարդը կանգնում է լուծման կարոտ խնդրի առջև:Այդ ակնթարթը դառնում է մտքի աստեղային՝ ստեղծագործական պահը, եթե անհատը «ներսից դուրս և դրսից» ներսհավերժական շարժման արդյունքում ունի

անհրաժեշտ ներուժ՝ ինքնուրույն արթնացնելու ներքին ուժերը: Այդպես եղել է միշտ և կա այժմ: Հ. Թումանյանը խաղեր մշակելիս հավատարիմ է մնացել ժողովրդի իմաստնությանը, որ, ինչպես միշտ, հյութեղ ամփոփվել է դարձվածքում՝ «ուժերը խաղս լինել»: Իսկ «խաղս լինելու» համար խաղ է հարկավոր: Այստեղից՝ ուսումնական խաղերի կարևորությունը մանուկ սերնդի կրթության ու դաստիարակության գործընթացում: Եվ, անշուշտ, գիտակցումն այն բանի, որ իսկական ուսուցիչը խաղաստեղծ լինելու պատվիրակումն ունի ի սկզբանե, երբ «խաղս են եղել ուժերը» ուսուցչի նվիրական մասնագիտությունն ընտրելիս: Հոդվածի ավարտին ներկայացված ինքնաբուխ խաղերից «Ճանաչի՛ր հեքիաթը» խաղը հեղինակել է Հյուսիսային համալսարանի Ալավերդու բաժանմունքի «Ընդհանուր մանկավարժություն (Տարրական մանկավարժություն և մեթոդիկա)» մասնագիտության երկրորդ կուրսի ուսանողուհի Իռա Քիքանյանը, և սա վկայումն է այն բանի, որ Թումանյան ուսուցչին աշակերտում ենք սերնդեսերունդ:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հոդվածում ներկայացվում են ժողովրդական խաղերի՝ ստեղծագործական մտքի արդյունք լինելը, և հակառակը՝ խաղերով այդ միտքը խթանելու առանձնահատկությունը: Պարզաբանվում է, որ ժողովրդական այս ակունքի փիլիսոփայությամբ՝ Հ. Թումանյանը բնության օրենքով ուժերի «խաղս լինելը» ուսուցման հիմնարար խթան է համարել և ստեղծել դրան միտված ուսումնական խաղեր, որոնք օգնում են երեխաներին՝ ինքնուրույն վեր հանելու իրենց ներուժը և նպատակաուղղելու նոր գիտելիքների ձեռքբերմանը, հայրենաճանաչողությանը: Նշվում են ազգային հենքով թումանյանական մոտեցումների աղերսները աշակերտակենտրոն ուսուցման ժամանակակից մեթոդներին: Կարևորվում է Հ. Թումանյանի խաղերի ուսուցողական արժեքը ոչ միայն աշակերտների, այլև ուսուցիչների համար. նրանք կարող են ստեղծագործաբար մոտենալ ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպմանը, ստեղծել և կիրառել խաղեր և ուսումնառությունը դարձնել անհոգ մանկության գիտելիքահեն բնական շարունակություն: Հոդվածի ավարտին ներկայացվում են ինքնաստեղծ խաղերի նմուշներ:

Հիմնաբառեր - մանկություն, ուսումնական խաղ, ներուժի բացահայտում, ներքին շարժառիթ, խաղաքարտ, թիմային աշխատանք, խաղի ուսուցողական և դաստիարակչական արժեք

Օգտագործված գրականություն

1. Թումանյան Հ., Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, Երևան, 1999 թ.
2. Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, 20-րդ դարի մանկավարժական տեսություններ, Ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար, Երևան, Նոյյան տապան, 2005թ., 409 էջ
3. Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Ձեռնարկ ուսուցիչների համար, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, Երևան, 2005թ.
4. Մելքումյան Մ.Ս., Թումանյանը կրթության և դաստիարակության մասին, «Լույս» հրատարակչություն, Երևան, 1969թ.
5. Ուսումնառությունն ու դասավանդումը կրտսեր դպրոցում, Ձեռնարկ ուսուցիչների համար, ԱՅՌԵՔՍ, Երևան, «Լուսաբեր» հրատարակչություն, 2007թ.
6. Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, 20-րդ դարի մանկավարժական տեսություններ,Ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար, Նոյյան տապան, Երևան, 2005, էջ 374-375
7. Ուսումնառությունն ու դասավանդումը կրտսեր դպրոցում, Ձեռնարկ ուսուցիչների համար, ԱՅՌԵՔՍ, Երևան, «Լուսաբաց» հրատարակչություն, 2007թ., 319 էջ

"ВЗЫГРАНИЕ" - ФУНДАМЕНТАЛЬНЫЙ СТИМУЛ ТВОРЧЕСКОГО БЫТИЯ

Лейли Карапетян
лектор Северного университета

В статье представлена особенность народных игр, являющихся результатом творческой мысли, и наоборот, стимулирующих эту мысль играми. Туманян счел основополагающим стимулом обучения "взыграние" сил по закону природы и создал направленные на это обучающие игры, которые помогают детям самостоятельно раскрыть свой потенциал и направить его на приобретение новых знаний, познание Родины. Воспитательная ценность игр Туманяна важна не только для учеников, но и для учителей: они могут творчески подходить к организации учебно-воспитательного процесса, создавать и применять игры и сделать обучение естественным продолжением беззаботного детства, основанного на знаниях. В конце статьи представлены образцы самостоятельно созданных игр

***Ключевые слова*:** детство, развивающая игра, раскрытие потенциала, внутренняя мотивация, игральная карта, командная работа, обучающая и воспитательная ценность игры.

THE SURGE OF INTERNAL FORCES IS THE FUNDAMENTAL STIMULUS OF CREATIVE EXISTENCE

Lyli Karapetyan
Lecturer at Northern University

The article presents the peculiarity of folk games, which are the result of creative thought, and vice versa, stimulating this thought with games. Tumanyan considered the fundamental incentive of learning to "surge" forces according to the law of nature and created educational games aimed at this, which help children to discover their potential independently and direct it to acquire new knowledge, cognition of the Motherland. The educational value of Tumanyan's games is important not only for students, but also for teachers: they can creatively approach the organization of the educational process, create and apply games and make learning a natural continuation of a carefree childhood based on knowledge. Samples of self-created games are presented at the end of the article.

Keywords: childhood, developing game, potential disclosure, internal motivation, playing card, teamwork, educational and educational value of the game.

Ներկայացվել է՝ 19.10.2023 թ.
Ընդունվել է՝ 07.11.2023 թ.

СОТРУДНИЧЕСТВО СЕМЬИ И ВУЗА КАК ФАКТОР УСПЕШНОЙ СОЦИАЛИЗАЦИИ ЛИЧНОСТИ СТУДЕНТА

Мария Вартанян
эксперт постоянной комиссии по вопросам науки, образования, культуры, диаспоры, молодежи и спорта Национального Собрания Республики Армения
vardanyan.marina@parliament.am

В нашей стране, как и во всем мире, происходят глобальные социально-экономические процессы, которые идут на фоне глубоких экономических, социальных проблем и противоречий. Особо актуальными для нового осмысления, точнее, познания являются современная семья, её кризис, образование и школа, молодёжь и общество, национальные отношения. В результате все эти проблемы концентрируются на человеке – на его личности. Как известно, развитие личности происходит в процессе прохождения всех этапов социализации. А адекватная социализация личности взаимо-обусловлена широким спектром социальных институтов общества и принятыми нормами общественного поведения человека. Процесс социализации личности, будучи непрерывным, осуществляется на протяжении всей жизни.

Философия, как и педагогика, и психология, изучают, как развивается, как формируется в этом процессе личность, как взаимодействуют личность и семья, личность и этнос, личность и государство. Так, социал-утописты в центре своих философских учений ставили человека. Изучая природу человека, его потребности, они приходили к выводу, что интересы человека могут быть обеспечены только в социально справедливом обществе. Воспитание идеальной личности, как считали они, в основном, зависит от прогресса обществ. К примеру, Томас Мор считал условием справедливого общества – счастья человека, его свободную деятельность, всестороннее развитие личности. Человек в социальной философии Шарля Фурье – личность сильная, способная создать справедливое общество, познать природу и влиять на неё.[1,с. 31]

Процесс успешной социализации подразумевает, во-первых, эффективную адаптацию человека к обществу и меняющимся условиям жизнедеятельности, и во-вторых, способность противостоять тем факторам, которые препятствуют полноценному развитию личности и формированию “Я-концепции”. Принято считать, что личность формируется при активном взаимодействии с окружающей

средой, которая способствует овладению социального опыта, ценностными ориентациями, национальными традициями и основными деятельностными векторами. Макарова С. Н. указывает на то, что формирование внутренних позиций личности основано на отражении человеком объективных отношений. [3,с.145-146]. Эта интерактивная потерна лежит в основе индивидуально-психологических особенностей личности, характерологических черт, Интеллекта и направленности личности.

В литературе отмечается, что, несмотря на большое число институтов, участвующих в социализации личности, центральное место в этом процессе занимает семья. Это объясняется тем, что именно в семье осуществляется первичная социализация индивида, закладываются основы его формирования как личности. Семья для ребёнка является первичной группой, именно с неё начинается развитие личности [4, с. 228].

В семье складываются отношения ребёнка к окружающему, в семье он осваивает первые социальные роли, приобретает опыт общественного поведения, нравственности и моральных норм поведения. В любом государстве мира, где провозглашаются гуманистические ценности и социальная защита личности, это возможно решить только через защиту семьи. Согласно Конституции Республики Армения “семья является естественной и основной ячейкой общества’’[2], объединяет людей, регулирует воспитание поколения, познавательную, трудовую деятельность личности.

В настоящее время усиливается роль семьи в целенаправленной подготовке подрастающего поколения к особым условиям жизни, так как сами родители во многом не знакомы с ними. Информационный век и темп реформ общественного строя требуют особые адаптационные качества от самих родителей. Семья, школа, вуз и другие образовательный учреждения, являясь важнейшими социальными институтами, осуществляют подготовку молодёжи к активной жизнедеятельности, формируют основы нравственного, физического развития и психического здоровья человека.

Отметим, что на современном этапе развития общества в странах пост советского пространства наблюдается тенденция упадка семейных ценностей. Данная особенность вызывает на только социальные, но и демографические проблемы. Как правило, это связывают с переменами в политического и экономического характера, но на самом деле, важнее рассматривать психолого-педагогические аспекты проблемы.

К примеру, родители вынуждены сконцентрировать внимание на житейских проблемах, а именно, на материальном благополучии

семьи. Постоянная занятость и темп жизни родителей, а так же обособленность детей (влияние ТВ, компьютера и других гаджетов), непосредственно отражаются на характере общения в семье. В результате всего этого снижается роль взаимодействия родителей и детей, страдает эмоциональный компонент и, как следствие, возникают коммуникативные проблемы. Или же, в условиях происходящих реформ система образования очень быстро меняется, почти каждый год – перемены, модернизация педагогических технологий. Естественно, что достаточно сложно за всем этим успевать. Родители порой слабо информированы о научных достижениях, новаторских внедрениях и изменениях, и ориентируются в учебно-воспитательной деятельности в основном по своему имеющемуся опыту, который часто не отвечает современным требованиям. Для решения этих и многих других проблем, которые имеют свои специфические особенности в высшей школе, необходимо перестраивать учебный, исследовательский и, естественно, сам воспитательный процесс. Образовательная среда вуза должна быть максимально открытой и доступной для родителей. Другой важной проблемой является социализация студента в первые годы обучения. Высшее образование в нашей стране за последние годы стало значительно доступней для широких слоёв населения, оно становится обязательным атрибутом благополучия семьи и самоцели молодёжи. И поэтому, для обеспечения благоприятной образовательной среды вузы должны сотрудничать с семьёй студента.

В настоящее время во многих вузах города Еревана усилиями педагогов и психологов создана консультативная служба, которая регулярно проводит практическую работу, как со студентами, так и с их родителями. Сотрудничество профессорско-преподавательского состава, студентов, а также молодых студенческих семей позволяет конструктивно анализировать особенности семейных отношений. Для объективного выяснения влияния роли семьи на формирование мотивации студентов к обучению в Армянском государственном педагогическом университете было проведено анкетирование среди студентов и их родителей, которое позволило выявить определённые закономерности.

Как показали результаты, студенты из семей, где преобладает демократический стиль и атмосфера сотрудничества, как правило, отличаются большей самостоятельностью и активностью, как в организации своей учебной деятельности, так и в вопросах собственной жизнедеятельности. А в семьях, где преобладает неустойчивый стиль воспитания, игнорируется мнение молодого человека, уровень инициативности и учебной мотивации имел

достаточно низкие показатели. Анализ анкет, которые заполняли сами родители, показал, что студенты из демократических, осведомительных и активных семей, обладают адекватными жизненными навыками. Единство и согласованность требований семьи и вуза – это одно из условий правильного воспитания молодёжи в семье. Методы и средства взаимодействия семьи и вуза в процессе формирования личности и жизненных навыков молодого человека могут быть самыми разнообразными.

Консультативная служба АГПУ в процессе работы со студентами и их родителями предпринимает ряд мероприятий и предлагает следующие методы: приглашение родителей на студенческие мероприятия (конференции, семинары, молодёжные праздники), встречи с преподавателями за круглым столом по проблемам, посвящённым подготовке молодёжи к жизнедеятельности в различных сферах социальной практики.

Аннотация: В статье обращается внимание на взаимодействие семьи и вуза как важнейших субьектов общества в условиях выдвигаемых новых требований, связанных с социально-политическими переменами страны. Единые согласованные требования семьи и вуза – это одно из условий правильного воспитания молодежи в семье. Проанализированы и предлагаются различные формы и методы взаимодействия семьи и вуза в формировании личности молодого человека

Ключевые слова: семья, вуз, социализация, общество, воспитание личности.

Литература

1. Василькова Ю.В., Василькова Т.А. Социальная педагогика : учеб. пособие для студ. пед. вузов, обуч. по спец. «Педагогика и психология», «Соц. педагогика», «Педагогика». - М. : КноРус, 2010. – с.31
2. Конституция Республики Армения, ст.35, принята 05.07. Ереван, 1995
3. С. Н. Макарова , Успешная профессиональная социализация: основные подходы к исследованию// Вестник Челябинского государственного университета, № 17 / 2007. с.145-146
4. Титов В.А. Общая педагогика,- М., 2005. – с..228

ԸՆՏԱՆԻՔԻ ԵՎ ԲՈՒՀԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՈՒՍԱՆՈՂԻ ԱՆՁԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՍՈՑԻԱԼԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆ

Մարիա Վարդանյան

Հոդվածում քննարկվում ընտանիքի և բուհի փոխազդեցությունը՝ հասարակության կարևորագույն սուբյեկտների՝ երկրում հասարակա-կան-քաղաքական փոփոխությունների հետ կապված նոր պահանջների համատեքստում: Ընտանիքի և բուհի միասնական, համաձայնեցված պահանջները՝ ընտանիքում երիտասարդության պատշաճ դաստիարա-կության պայմաններից են: Վերլուծվում և առաջարկվում են ընտանիքի և բուհի փոխգործակցության տարբեր ձևեր ու մեթոդներ՝ երիտասարդի անհատականության ձևավորման համատեքստում:

Հիմնաբառեր - ընտանիք, բուհ, սոցիալականացում, հասարակու-թյուն, անձի դաստիարակություն

COOPERATION OF FAMILY AND UNIVERSITY AS A FACTOR OF SUCCESSFUL SOCIALIZATION OF THE STUDENT'S PERSONALITY

Maria Vardanyan

The author highlights the interaction of family and high school as important subjects of the society taking into account social –political changes in the light of modern state requests. The joined demands of family and high school one of the conditions of the productive upbringing of the youth in family. The article offers a variety of forms and methods of interaction between the family and the university in shaping a young person's identity.

Key words: family, high school, socialization, society, upbringing of a person

Ներկայացվել է՝ 29.09.2023 թ.
Ընդունվել է՝ 15.11.2023 թ.

THE BASES OF TECHNICAL TRAINING AMONG YOUNG WRESTLERS IN THE MULTI-YEAR PROCESS

Artyom Davtyan

PhD of Sciences (Pedagogy), Associate Professor, Professor in the Chair of Sports Pedagogy and Psychology,
State Institute of Physical Culture and Sports, Republic of Armenia
artyom.davtyan@sportedu.am

ABSTRACT

Sports training in wrestling is a long, multi-year complex process. Achieving sports success and further development mostly depend on the right organization. In the studied literature, during the multi-year preparation process, the problems of boosting the accuracy of the wrestlers' movements are not emphasized at any stage, meanwhile this problem is very important, because it is related to the effective performance of the technical tricks. On this perspective, the necessity of carrying out research dedicated to the multi-year training process of wrestlers is highlighted. Such studies will provide a real understanding to multi-year preparation phases, measures as well as the effectiveness degree of improved new approaches.

Keywords: Wrestlers, training process, aspects of preparation, multi-year preparation, accuracy of movements, non-point inquiry.

INTRODUCTION

Specialists and coaches in various sports, including wrestling, have repeatedly sought to discover innovative ways to increase the effectiveness of the multi-year training process and ways to improve various aspects of preparation.

The correct organization of the multi-year training process of young wrestlers supposes the implementation of some important provisions. First, the training process should be built taking into account the age limits i.e. then the athletes achieve the highest sports achievements in the chosen sport. Second, when planning the multi-year training process, it is necessary to take into account not only the age limits of sports achievements, but also the circumstance of their individual nature.

As many specialists point out, [1,2,11,10] the multi-year training of young athletes should be carried out taking into account the following methodological provisions i.e. the sequence of training means, methods and tasks of different athletes' age groups. Due to all these, the effectiveness of the training process is increased and it is different, so we can note a change

in the ratio of the volume among the athletes, the change in the number of hours allocated to general and special physical trainings in favor of special training. Thus the gradual increase of the time allocated to general and special physical trainings is based on the characteristics of boosting the level of their functional training and motor abilities.

The analysis of the professional literature on wrestling, the results of the authors' study in different periods prove that the accuracy problem of movements in the system of multi-year training of freestyle wrestlers was mostly not in the center of researchers' attention. Meanwhile, this problem is extremely important, because it is also related to the effective implementation of the training process. It should be noted that the main directions of scientific research carried out in wrestling so far are mainly related to such issues as the development of leading motor skills among athletes at different ages with various qualifications, the study of competitive activity, the body weight regulation, the psychological preparation [12,11,10] and some other issues.

Furthermore, the necessity of carrying out research dedicated to the multi-year training process of freestyle wrestlers is highlighted. Such research will allow to form a real understanding of the multi-year training stages of young wrestlers, the influence degree of improved new approaches.

The purpose of the research is to identify the role and place of the accuracy in movements among freestyle wrestlers in the multi-year training system.

Research methods are to study and analyze the professional literature, carry out a questionnaire survey, do pedagogical observations as well as do pedagogical testing.

During the ongoing research, here are the preliminary results, which served as the basis for revealing the experimental program. It was aimed at the training programs of freestyle wrestling existing at sports schools, as well as how the highly qualified coaches perceive all these regarding the priority of the accuracy in movements in the multi-year training system.

Through pedagogical observations, it was possible to depict 26.2% allocation to the general physical training of freestyle wrestlers, considering that general physical training creates a basis for special physical training.

The interviewed coaches also emphasized the fact that general physical training is aimed at the harmonious development of athletes, as well as increasing the functional body capabilities, and accordingly the volume of preparation in one training year is 1144 i.e. 95 hours per month (diagram 1).



Diagram 1. Correlation of different aspects of training among freestyle youth wrestlers during the study (in percentages %)

The scientific studies were organized during one academic year in 2022-2023 involving 10 highly qualified coaches of sports schools working in Yerevan Labor reserves and Armenian Sports Union. They have been working in that sphere on average 19 years.

The training process of freestyle wrestlers was organized and carried out among the coaches in a questionnaire survey in order to identify the problems and improve them in the multi-year training system. So its clarification can fully justify the objectivity of the research subjects regarding the multi-year training formed during the scientific experiment, highlighting the importance of the accuracy in movements in the training system.

In addition to this, the solution of the existing problems in the multi-year training system is mainly related to the accuracy of the movements, which have an important impact on the training process of the wrestlers [Davtyan, 2020] but they are based on traditional approaches. Since the trainers under study mainly performed training in a traditional way, they improved technical actions mostly by using many repetitions, as they had an incomplete understanding of the precision in movements, spatial, temporal and force characteristics, it became necessary to conduct pedagogical conversations among them on the raised issue.

The latter had a positive impact on the perceptions of the respondents regarding the importance of the accurate movements in the multi-year training system (diagram 2).



Diagram 2: Frameworks for the improvement of professional actions during year-round training of freestyle wrestlers are the following

1.Preparatory, 2. Competitive, 3. Transitional, 4. In all stages

Regarding ways to boost the technical training, 40% of coaches believe that technical training of freestyle wrestlers is carried out and only the special training phase is highlighted. They assure that the main means of special training are peculiar professional physical exercises, which are aimed at increasing the wrestlers' ability to perform technical actions. According to 46% of interviewed coaches, technical training is carried out in all stages. Around 10% of the respondents consider that it is necessary to implement the exercises in the preparatory phase, and 4% in the transitional part of the training process.

Based on the analysis of the results, it becomes clear that the effectiveness of professional tricks in the process of multi-year training among young wrestlers depends on the controlling the accuracy of movements. At the same time, the overwhelming majority of coaches highlight the influence of precise movements on the improvement of technical actions among wrestlers. Therefore, it turned out that this factor plays a crucial role in the sports improvement of wrestlers.

CONCLUSION

In fact, before conducting training conversations with coaches, they have not given enough importance to the multi-year training system of wrestlers and have had an incomplete understanding of this skill role, so they have mostly relied on their own experience.

This is due to the fact that in traditional approaches to sports training in wrestling, accuracy of movements is not as important as movement skill,

which is proved by long-term pedagogical observations and analyses of wrestling textbooks, programs of children's and youth sports schools, as well as the training process of wrestlers. This is the reason why researchers, not emphasizing the role of accurate movements in the system of physical training among athletes, do not automatically consider it as an effective factor in boosting the level of multi-year training of wrestlers.

References:

1. Davtyan A.S., Pedagogical technology of improving the technical tricks of young wrestlers, auto abstract, abstract, PhD of Sciences (Pedagogy), - Yerevan, 2020 - 76 pages.
2. Arakelyan V.B., Saghyan B.Z. Judo wrestling. Yerevan. - Author's edition. 2010 - 309 pages.
3. Ghazaryan F.G. The basics of sports training. - Yerevan. Joker, 1993, - 212 pages.
4. Abrahamyan C.M. Features of special training of fencers and methodology of its improvement. abstract. dissertation. ... PhD of Sciences (Pedagogy) - Yerevan, 2003. - 25 p.
5. Nikitushkin V. G. "Modern training of young sportsmen methodical manual, Moscow, physical culture and sports, Moscow, 2009.
6. Kuznetsov A.S., Effectiveness of technical and tactical training of wrestlers aged 16-17 in Greco-Roman style stage of training sports improvement // Theory and practice of physical culture. -2009, N3. C.90-92
7. Filin V. P., Fomin N. A. Basics of youth sport. - Moscow.: F&S, 1980. -256 p.

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԸՄԲԻՇՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԲԱԶՄԱՄՅԱ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Արտյոմ Դավթյան

Իրականում, մինչ մարզիչների հետ ուսումնամարզական զրույցներ վարելը, նրանք բավականաչափ կարևորություն չեն տվել ըմբիշների բազմամյա պատրաստության համակարգին և թերի են պատկերացրել այդ հմտության դերը, ուստի հիմնականում ապավինել են սեփական փորձին: Դա պայմանավորված է նրանով, որ ըմբշամարտի մարզումների ավանդական մոտեցումներում շարժումների ճշգրտությունն այնքան կարևոր չէ, որքան շարժման հմտությունը, ինչը ապացուցվում է ըմբշամարտի դասագրքերի երկարամյա մանկավարժական դիտարկումներով և վերլուծություններով, մանկապատանեկան մարզադպրոցների ծրագրերով: ինչպես նաեւ ըմբիշների մարզումային գործընթացը: Սա է պատճառը, որ հետազոտողները, չշեշտելով ճշգրիտ շարժումների

դերը մարզիկների ֆիզիկական պատրաստվածության համակարգում, այն ինքնաբերաբար չեն համարում որպես ըմբիշների բազմամյա պատրաստվածության մակարդակը բարձրացնելու արդյունավետ գործոն:

Հիմնաբառեր - Ըմբիշներ, մարզումային գործընթաց, մարզումների ասպեկտներ, Բազմամյա մարզում, շարժումների ճշգրտություն:

ОСНОВЫ ТЕХНИЧЕСКОГО ТРЕЙНИНГА ЮНЫХ БОРЦОВ В МНОГОЛЕТНЕМ ПРОЦЕССЕ ПОДГОТОВКИ

Артем Давтян

Фактически, прежде чем проводить тренировочные беседы с тренерами, они не придавали должного значения многолетней системе подготовки борцов и имели неполное представление о роли этого навыка, поэтому опирались в основном на собственный опыт. Это связано с тем, что в традиционных подходах к спортивной подготовке по борьбе точность движений не так важна, как ловкость движений, что доказывают многолетние педагогические наблюдения и анализы учебников по борьбе, программ детско-юношеских спортивных школ, а также тренировочный процесс борцов. Именно поэтому исследователи, не подчеркивая роль точных движений в системе физической подготовки спортсменов, автоматически не рассматривают их как эффективный фактор повышения уровня многолетней подготовки борцов.

Ключевые слова: борцы, тренировочный процесс, многолетняя подготовка, точность движений.

Ներկայացվել է՝ 27.09.2023 թ.
Ընդունվել է՝ 09.11.2023 թ.

ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ՝ ՈՐՊԵՍ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՅՄԱՆ ԵՎ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

Վահե Հովհաննիսյան
ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան
vhadvocate@yahoo.com

Ներածություն

Հոդվածում անդրադարձ է կատարվել փաստաբանության ինստիտուտին, դրա դերին, նշանակությանը՝ որպես իրավական պետության կայացման պարտադիր պայմանի ու հրամայականի: Փաստաբանությունը, հանդիսանալով քաղաքացիական հասարակության ու իրավական պետության հենասյուններից մեկը, ինչպես նաև իրավապաշտպան գործունեություն, իրավացիորեն դասվել է հավերժ մասնագիտությունների շարքին, ինչպես օրինակ՝ բժշկությունը:

Որպես բիոլոգիական էակ, մարդը միշտ էլ կարիք է ունեցել պաշտպանության, հետևաբար, ժամանակի ընթացքում ստեղծված այդ կարևոր ներկայացուցչական ինստիտուտը հաղթանակ տանելով բռնության ու ապօրինությունների նկատմամբ՝ արմատավորել է այն հիմնական տրամաբանությունը, որ առանց հզոր փաստաբանության ինստիտուտի գոյության, որևէ պետություն իրավական լինել չի կարող: Ուստի, բոլորովին էլ պատահական չէ, որ բնական իրավունքը իրենից ներկայացնում է ոչ թե իրավական նորմերի, այլ իրավական գաղափարների ու սկզբունքների համակցություն, ինչն էլ ի վերջո, պայմանավորում է պետաիրավական վերնաշենքը:

Հոդվածում կարևորվել է նաև ուսումնասիրության օբյեկտը, վեր են հանվել առկա բացերը, թերությունները, որոնց արդյունքում այն կարևոր եզրահանգումն է արվել, որ արդարադատության իրականացման սկզբունքներից ցանկացած շեղում, այդ թվում՝ օրենսդրական բարեփոխումների անվան տակ, անվիճելիորեն կհանգեցնի իրավական պետության և փաստաբանության դերի վնասմանը, ինչն, անթույլատրելի է:

ՄԵԹՈԴԸ (ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ)

Հոդվածի մեթոդաբանական հիմքը կազմել են ինչպես ընդհանուր գիտական, այնպես էլ մասնավոր գիտական մեթոդները: Որպես ընդհանուր մեթոդաբանական հիմունքներ կիրառվել է ընդհանուր դիալեկտիկական մեթոդը, իսկ մասնավոր գիտական մեթոդներից՝ իրավահամեմատական, իրավաբանական վերլուծության, համակարգային, կառուցվածքային, տեխնիկաիրավաբանական և այլ մեթոդներ:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Որպես հիմնական արդյունք առանձնացվում է այն հիմնական գաղափարը, որ փաստաբանությունը, լինելով իրավապաշտպան

գործունեության տեսակ, իր անհրաժեշտությամբ ու կարևորությամբ, ինչպես օրինակ, բժշկությունը՝ բոլոր ժամանակներում լինելու է կարևոր և պահանջված: Ընդ որում, որքան կայացած է փաստաբանական ինստիտուտը, այնքան զարգացած կարող է համարվել նաև տվյալ պետությունը, առավել ևս, երբ խոսքը գնում է իրավական պետության մասին:

Որպես հիմնական արդյունք է արձանագրվել նաև այն, որ փաստաբանությունն իրենով պայմանավորում է նաև օրենքի նկատմամբ իրավունքի գերակայությունը:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Փաստաբանական ինստիտուտի պատմականորեն անցած ճանապարհը ցույց է տվել, որ հանդիսանալով քաղաքացիական հասարակության ու իրավական պետության կայացման կարևորագույն նախապայմաններից մեկը, այն պատկանում է հավերժ մասնագիտությունների շարքին և, հանդիսանալով իրավապաշտպան գործունեություն՝ կոչված է օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու անձանց իրավունքներն ու օրինական շահերը:

Մարդը, ի սկզբանե ունենալով իրավունքներ և իրավաչափ շահեր, միշտ էլ կարիք է ունեցել դրանց արդյունավետ իրացման և պաշտպանության, ինչն էլ, ի վերջո հանգեցրել է նրան, որ ժամանակի ընթացքում ստեղծվի ներկայացուցչության ինստիտուտ, որպեսզի իրավունքների և իրավաչափ շահերի արդյունավետ պաշտպանությունն իրականացվի ոչ թե ընդհանուր առմամբ, այլև ոլորտին քաջատեղյակ մասնագիտացված անձանց կողմից, որոնք հետագայում կոչվեցին փաստաբաններ՝ սկիզբ դնելով փաստաբանության ինստիտի հասկացությանը:

«Փաստաբան» բառն առաջացել է լատիներեն «advocare» բառից, որը նշանակում է «օգնության կանչ», սակայն իր ստեղծմամբ փաստաբանությունը «պարտական» է Հին Աթենքին, որտեղ դատական ոլորտում պերճախոսության արվեստը կարևոր դեր էր խաղում, քանի որ դատավորները հանդիսանալով սովորական քաղաքացիներ և ոչ իրավաբաններ, առաջնահերթ ուշադրությունը դարձնում էին դատավիճող կողմերի պերճախոսությանը: Մինչդեռ, անձինք, որոնք չէին տիրապետում պերճախոսության ձիրքին, անձամբ պետք է դատարանում պաշտպանեին իրենց: Արդյունքում առաջացան «լոգոգրաֆներ»՝ դատական ելույթներ, որոնք գրվում էին մասնագետների կողմից և անգիր էին արվում դատավիճող կողմերի կողմից: Առաջին պրոֆեսիոնալ լոգոգրաֆը համարվում է Անտիֆոնը (մ. թ. ա. V դ.), ով ներդրեց սովորույթ դատական ճառի ստեղծման համար վերցնել վարձատրություն: Լոգոգրաֆների շարքին էին դասվում նաև հայտնի հռետորներ, ինչպիսիք էին Էսխիլը և Դեմոսֆենը: Փաստաբանության նման առաջնային ձևը պահպանվել է Հին Հունաստանում մինչև հանրապետության ավարտը:

Հայ հասարակական-քաղաքական միտքը ևս անմասն չի մնացել մարդու բնական իրավունքի և դրա պաշտպանության հարցերի ուսումնասիրություններից ու մեկնաբանություններից: Ինչպես հայտնի է, բնական իրավունքի գաղափարը ձևավորվել է դեռևս անտիկ աշխարհում սոփեստների՝ Սոկրատեսի, Պլատոնի, Արիստոտելի, Ցիցերոնի, և հռոմեական իրավաբանների կողմից: Այդ տեսությունը իր հետագա զարգացումը գտավ միջնադարում՝ Ավգուստինի, Թոմաս Ավքինացու երկերում, օրենսդրական ակտերում, նոր ժամանակներում՝ Հյուգո Գրիցիոսի, Լոկի, Սպինոզայի, Մոնթեսքիոյի, Կանտի, Հեգելի և այլոց աշխատություններում: Մարդու բնական իրավունքի տեսության համաձայն՝ այն իրենից ներկայացնում է ոչ թե իրավական նորմերի, այլ իրավական գաղափարների և սկզբունքների համակցություն, որն ի սկզբանե պետք է նախագծի պետաիրավական վերնաշենքը: Ինչպես նշում է ակադեմիկոս Վ. Ներսիսյանցը. «Որպես ընդհանուր սկզբունք, որ բնորոշ է բնական իրավունքի տարբեր ուղղություններին ու դոկտրինաներին, կարելի է առանձնացնել իրավունքի և օրենքի տարբերությունը և օրենքի նկատմամբ իրավունքի առաջնայնության սկզբունքը»:[1] Գոշը, լինելով բնական իրավունքի խոշոր ներկայացուցիչներից մեկը, նույնպես տարբերություն էր դնում իրավունքի և գործող օրենքների (սովորույթական, կանոնական, աշխարհիկ) միջև և առաջնությունը անվերապահորեն վերագրում էր բնական իրավունքին: Ի տարբերություն իր նախորդների և ժամանակակիցների, որոնք բնական իրավունքը տարածում էին նաև ողջ կենդանական աշխահրի վրա, Գոշն այն տարածում էր միայն մարդկանց վրա:

Անդրադառնալով բնական իրավունքին և այն միայն մարդկանց վրա տարածելու գաղափարին, որպես իրավահարաբերության սուբյեկտ, Գոշի «Դատաստանագիրքը» մարդու, նրա իրավունքի և այդ իրավունքների պաշտպանությամբ է հանդես գալիս:

Խնդրո առարկայի հետ կապված՝ մեր մյուս հայրենակից Դ. Սարգսյանը իրավացիորեն նշում է. «Ինչպես Հին Հունաստանում, այնպես էլ Հին Հռոմում փաստաբանության նախնական ձևը բարեկամական փաստաբանությունն էր, որն աստիճանաբար վերածվեց «պատրոնատի»: Ի դեմս նրանց երկու մասնագիտություն՝ իրավախորհրդատուի և փաստաբանի, համատեղվում էին: Նրանք ոչ միայն դատարանում պաշտպանում էին իրենց հաճախորդի իրավունքները, այլ նաև մեկնաբանում էին օրենքներ և իրավաբանական խորհուրդներ տալիս: Սակայն, երբ պատրոնատի ինստիտուտը վերջնականապես վերացվեց, և իրավունքի ուսումնասիրությամբ սկսեցին զբաղվել բոլոր ցանկա-

[1] Տես՝ **Нерсесянц В.С**., право и закон. Москва, 1983, ст. 87

ցողները, իրավաբանական մասնագիտությունը սկսեց զարգանալ երկու ուղղությամբ»[2]:

«Փաստաբանության ինստիտուտի ստեղծման նպատակն անձի իրավունքների և իրավաչափ շահերի, իսկ վերջին հաշվով նաև հասարակության շահերի պաշտպանությունն է, քանի որ յուրաքանչյուր անձ հասարակության մի մասն է կազմում: Միաժամանակ, փաստաբանության առաջացումը պայմանավորված է եղել նաև հասարակության կենսական պահանջմունքներով: Հասարակության զարգացման սկզբնական փուլում դատավարության կողմերը հնարավորություն են ունեցել անձամբ, առանց կողմնակի օգնության վարելու իրենց գործերը, քանի որ իրավական նորմերն այնքան պարզ ու հասարակ էին, որ կարող էին ընկալվել յուրաքանչյուրի կողմից: Սակայն, հասարակության զարգացման հետ մեկտեղ, հարաբերությունները դառնում են բազմաբնույթ և ավելի խրթին, բարդանում են նաև համապատասխան հարաբերությունները կարգավորող իրավական նորմերը: Դրանց ընկալումը և կիրառումը դժվարանում է հասարակության անդամների մեծ մասի համար: Դատավարության մասնակիցները, առանց հատուկ պատրաստության, ի վիճակի չեն լինում անձամբ վարելու իրենց գործերը: Նրանք կարիք են զգում այնպիսի մի անձի օգնության, որն առավել քաջատեղյակ է իրավունքին և դատավարության ձևերին: Սկսում է զգացվել սոցիալական մի խմբի անհրաժեշտությունը, որը հատուկ կզբաղվեր իրավական ակտերի ուսումնասիրությամբ և իրավաբանական օգնություն ցույց կտար դրա կարիքը զգացող անձանց: Իրավապաշտպան գործունեություն իրականացնող այս խմբի ներկայացուցիչներն էլ հետագայում կոչվեցին փաստաբաններ»[3]:

Այնուհետև, անդրադարձ կատարելով Եվրոպական փաստաբանական ինստիտուտի ձևավորման առանձնահատկություններին, Դ. Սարգսյանը նշում է. «Եվրոպայում մինչև Նորագույն ժամանակների սկիզբը ձևավորվել էր փաստաբանության կազմակերպման երկու հիմնական տեսակ՝ անգլո-ֆրանսիական և գերմանական: Գերմանական համակարգում փաստաբանների և իրավական ներկայացուցիչների միջև գոյություն չուներ որևիցե տեսակի բաժանում: Փաստաբանները որևէ կերպ կապված չէին դատական իշխանության հետ, նրանք ոչ միայն իրավաբան էին, հռետոր, այլև գործնական աշխատող: **Փաստաբանը զբաղվում էր ամեն ինչով, ինչի համար նրան նախօրոք համաձայնվել էին վճարել:** Փաստաբանության կազմակերպման անգլո-ֆրանսիական համակարգի սկզբունքների պայմաններում փաստաբան

[2] Տես՝ Հայ-Ռուսական (Սլավոնական) Համալսարանի հայցորդ Դ.Սարգսյանի ատենախոսության սեղմագիրը, Երևան 2012, էջ 14-15:

[3] Տես՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության համակարգը, դասագիրքը, Երևան «ԵՊՀ հրատարակչություն» 2019, էջ 256-257:

դառնալ ցանկացողների համար կար որոշակի կրթական ցենզ: Մինչդեռ անգլո-ֆրանսիական համակարգում փաստաբանը իրավական պաշտպան է, իրավախորհրդատու, որը դատարանում իրականացնում է բանավոր պաշտպանություն»[4]:

Հետևապես, պետք է արձանագրել, որ փաստաբանությունը մի յուրօրինակ իրավապաշտպան գործունեություն է, որի անհրաժեշտությունը, ինչպես օրինակ՝ բժշկությունը, բոլոր ժամանակներում մշտապես լինելու է կարևոր և պահանջված:

Ընդ որում, որքան զարգացած, կայուն և հզոր է փաստաբանական ինստիտուտը, այնքան զարգացած կարող է համարվել նաև տվյալ պետությունը, առավել ևս, երբ խոսքը գնում է երկրի հիմնական օրենքում ամրագրված իրավական պետության մասին:

Ըստ որում, պետք է արձանագրել, որ առանց իրավական պետության գոյության, հնարավոր չէ ապահովել անձի իրավունքների երաշխավորված պաշտպանությունը, քանի որ իրավական պետության ամրագրմամբ պետությունը հավաստում է օրենքի նկատմամբ իրավունքի գերակայությունը:

Հետևապես, պետք է նշել, որ պետությունը համարվում է իրավական, երբ նրա ամբողջ գործունեությունը կապակցված է իրավունքի հետ, և որի կարևորագույն նպատակը հանդիսանում է անձի իրավունքների ապահովումը և դրանց երաշխավորված պաշտպանությունը, ինչպես նաև հասարակական հարաբերությունների իրավակարգավորումը: Իրավական պետության հասկացությունը, որպես պարտադիր պայման իր մեջ ներառում է պետական իշխանության իրականացումը Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա:

Կարևորելով իրավական պետության կայացման անհրաժեշտությունը, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրվել են նաև մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին ու ազատություններին առնչվող մի շարք դրույթներ: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, սահմանվել է՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»[5]: Սահմանադրության 64-րդ հոդվածով էլ ամրագրվել է, որ՝ «Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով սահմանված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում

[4] Տես՝ Հայ-Ռուսական (Սլավոնական) Համալսարանի հայցորդ Դ.Սարգսյանի ատենախոսության սեղմագիրը, Երևան 2012, էջ 15:

[5] Տե՛ս ՀՀ Սահմանադրության (ՀՀ Սահմանադրության փոփոխություններ) 61-րդ հոդվածի 1-ին մասը, 06.12.2015թ. ընդունված:

պետական միջոցների հաշվին: Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը: Փաստաբանների կարգավիճակը, իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով»[6]:

Վերոգրյալի հաշվառմամբ և նշված իրավակարգավորումներով պայմանավորված, անհրաժեշտ ենք համարում նաև վկայակոչել ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից արտահայտած իրավական դիրքորոշումը, որի համաձայն 05.04.2016թ. ՍԴՈ-1263 որոշման մեջ նշվել է հետևյալը. «6. … Սահմանադրական դատարանը գտնում է, որ միայն փաստաբանի միջոցով դատական ներկայացուցչության իրականացման օրենսդրական պահանջն ամրագրելով՝ օրենսդիրը ոչ միայն ապահովում է Սահմանադրության 64-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի երաշխավորման իր պոզիտիվ պարտականությունը, այլև երաշխավորում է որակյալ իրավաբանական օգնություն՝ դրանով իսկ երաշխավորելով իրավական պետությանը հարիր՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը՝ ամրագրված Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասում: Ինքնանպատակ չէ այն հանգամանքը, որ ի տարբերություն 2005 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի, որի 1-ին մասի 1-ին նախադասությամբ ամրագրված դրույթով սահմանված էր իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, 2015 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածը, որը վերաբերում է դիտարկվող իրավունքին, պարունակում է 2-րդ մաս, որի 1-ին նախադասությամբ ամրագրված է հետևյալ դրույթը. «Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը»: Դրանով իսկ պետությունն ընդլայնել է որակյալ իրավաբանական օգնություն ցուցաբերելու իր դրական պարտականության շրջանակները՝ սահմանադրական մակարդակի բարձրացնելով փաստաբանության՝ որպես որակյալ իրավաբանական օգնություն տրամադրող ինստիտուտի դերը: Այդ նպատակն է հետապնդում նաև օրենքով նախատեսված՝ փաստաբանական դպրոցի ստեղծումը, որը կազմակերպում և անցկացնում է փաստաբանական դպրոցի ունկնդիրների մասնագիտական ուսուցումը, կազմակերպում է փաստաբանական դպրոցի ունկնդիրների համար անցկացվող որակավորման քննությունը, կազմակերպում և անց-

[6] Տե՛ս ՀՀ Սահմանադրության (ՀՀ Սահմանադրության փոփոխություններ) 64-րդ հոդվածը, 06.12.2015թ. ընդունված:

կացնում է փաստաբանների մասնագիտական վերապատրաստումը»[7]:

Հետևապես, ավելորդ չէ արձանագրել, որ Սահմանադրությամբ ամրագրված հիշյալ իրավակարգավորումները երաշխիք են հանդիսանում, որպեսզի յուրաքանչյուր անձ ստանա իրավաբանական օգնություն, որն անկասկած, պետք է լինի որակյալ, իսկ որակյալ իրավաբանական օգնությունը, մեր համոզմամբ, կարող է տրամադրվել բացառապես բարձրակարգ և որակյալ մասնագետի (մասնագիտացված կառույցի) կողմից:

Հետևաբար, անհրաժեշտ ենք համարում արձանագրել, որ երկրի հիմնական օրենքում ամրագրելով իրավական պետության կարգավիճակը՝ դրանով իսկ իր համար սահմանելով բարձր չափորոշիչ, գտնում ենք, որ դրանից որևէ պարագայում նահանջն ուղղակի բացասականորեն կանդրադառնա պետության վարկանիշի, ժողովրդի, քաղաքացիական հասարակության ինստիտուտների և մասնավորապես՝ փաստաբանության, որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտի վրա:

Մեր համոզմամբ՝ որքան փաստաբանությունը պետությունում հզոր է, ճիշտ է կազմակերպված և օրենսդրությամբ պաշտպանված է, այնքան յուրաքանչյուր անձ տվյալ պետությունում իրեն պաշտպանված կզգա, ինչն էլ հիմք է տալիս պնդելու, որ փաստաբանության դերը և ազդեցությունը իրավական պետությունում չափազանց կարևոր է և, բնականաբար, անթույլատրելի է պետության կողմից այն թերագնահատելը կամ ցանկացած գործողության իրականացումը, այդ թվում նաև՝ (օրենսդրական փոփոխությունների և/կամ լրացումների միջոցով փաստաբանական ինստիտուտի նկատմամբ ներազդման քաղաքականության իրացումը), ինչը, բնականաբար, կհանգեցնի բացասական հետևանքների:

Դրա հետ կապված՝ բոլորովին էլ պատահական չէ, որ գործող «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով սահմանվում է Հայաստանի Հանրապետությունում փաստաբանական գործունեություն իրականացնելու և փաստաբանների մասնագիտական միավորում կազմակերպելու հիմունքները և այդ գործունեության իրականացման կարգը[8]: Ընդ որում, օրենքի 3-րդ հոդվածով սահմանվում է, որ. «Փաստաբանությունը փաստաբանների մասնագիտական միավորում է, որը, հանդիսանալով քաղաքացիական հասարակության ինստիտուտ, չի մտնում

[7] Տե՛ս «ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներն ու դրանց իրացումը» ուղեցույց-ձեռնարկը, հատոր 1, ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Դանիելյանի, Երևան 2016, էջ 434-435, ՀՀ Սահմանադրական դատարանի 05.04.2016թ. ՍԴՈ-1263 որոշում:

[8] Տե՛ս ՀՀ օրենքը «Փաստաբանության մասին», 14.12.2004թ. ընդունված, օրենքի 1-ին հոդված:

պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի մեջ: Փաստաբանությունը գործում է անկախության, օրինապահության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության սկզբունքների հիման վրա»[9]: Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն էլ. «Փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն իրականացնում է փաստաբանը և ուղղված է իրավաբանական օգնություն ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմանն ու պաշտպանությանը՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով»[10]:

Հետևաբար, պետք է նշել, որ վերոնշված սկզբունքներից ցանկացած շեղում, այդ թվում օրեսդրական բարեփոխումների անվան տակ, անվիճելիորեն կերպով կհանգեցնի իրավական պետության կարգավիճակի վնասման, փաստաբանական ինստիտուտի՝ դեպի իր ստեղծման ակունքներ նահանջի, ինչը, ողջամտորեն՝ անթույլատրելի է:

Գտնում ենք նաև, որ փաստաբանության ինստիտուտի հետագա կատարելագործման խնդրում իրենց վճռական դերն ու ասելիքը պետք է ունենա միայն փաստաբանական հանրույթը, որովհետև փաստաբանական դերի և նշանակության հետագա կատարելագործումն ուղիղ համեմատական է անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը և դրանով իսկ իրավական պետության հիմքերի ամրապնդմանը:

Տեղին է մեջբերել պրոֆ. Յու. Լուբշևի տեսակետը առ այն, որ. «… Պետության քաղաքացիների իրավունքների և ազատությունների իրական ապահովումը և լայն օգտագործումը պետության զարգացման գլխավոր օրինաչափություններից է: Եվ հակառակը, քաղաքացիական ազատությունների խախտումը արգելակում է պետության զարգացումը»[11]:

Եզրակացություն

Հոդվածի հեղինակն հանգել է այն եզրակացության, որ որևէ պետությունում որքան փաստաբանությունը հզոր է, այնքան յուրաքանչյուր անձ իրեն պաշտպանված կզգա, ինչն էլ հիմք է տալիս պնդելու, որ փաստաբանության դերն ու ազդեցությունը չափազանց կարևոր է և, բնականաբար, անթույլատրելի է այն թերագնահատելը,

[9] Տե՛ս ՀՀ օրենքը «Փաստաբանության մասին», 14.12.2004թ. ընդունված, օրենքի 3-րդ հոդված:
[10] Տե՛ս ՀՀ օրենքը «Փաստաբանության մասին», 14.12.2004թ. ընդունված, օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մաս:
[11] Տե՛ս Лубшев Ю.Ф. Адвокат в уголовном деле. М., 1999, стр. 33.

այդ թվում նաև՝ օրենսդրական փոփոխությունների և/կամ լրացումների միջոցով փաստաբանական ինստիտուտի նկատմամբ ներազդման քաղաքականության իրացումը:

Հաջորդ եզրահանգումն այն է, որ վերոնշված սկզբունքների ցանկացած շեղում (այդ թվում օրեսդրական բարեփոխումների անվան տակ), անվիճելիորեն կհանգեցնի ինչպես իրավական պետության կարգավիճակի վնասման, այնպես էլ փաստաբանական ինստիտուտի դերի նահանջի, ինչն, անթույլատրելի է:

Հոդվածի հեղինակը գտնում է նաև, որ փաստաբանության ինստիտուտի հետագա կատարելագործման խնդրում վճռական դեր ու ասելիք պետք է ունենա միայն փաստաբանական հանրույթը, քանզի փաստաբանության դերի հետագա կատարելագործումն ուղիղ համեմատական է անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը ու դրանով իսկ իրավական պետության հիմքերի ամրապնդմանը:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Սույն հոդվածում միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրման ու համեմատական վերլուծության հիման վրա, անդրադարձ է կատարվել փաստաբանությանը՝ որպես իրավական պետության կայացման պարտադիր պայման հանդիսացող ինստիտուտին:

Կարևորելով փաստաբանության դերը, հոդվածագիրը հիմնավորել է փաստաբանության անհրաժեշտությունը, այն համեմատելով բժշկության հետ, որը բոլոր ժամանակներում մշտապես լինելու է կարևոր ու պահանջված:

Հիմնաբառեր - փաստաբանություն, իրավական պետություն, իրավունքի գերակայություն, լոգոգրաֆ, քաղաքացիական հասարակություն, իրավահարաբերություն, դատարան, դատավարության կողմեր

Օգտագործված գրականություն

1. ՀՀ օրենքը «Փաստաբանության մասին», 14.12.2004թ. ընդունված, օրենքի 1-ին հոդված
2. Հայ-Ռուսական (Սլավոնական) Համալսարանի հայցորդ Դ.Սարգսյանի ատենախոսության սեղմագիր, Երևան 2012, էջ 14-15
3. ՀՀ Սահմանադրության (ՀՀ Սահմանադրության փոփոխություններ) 61-րդ հոդվածի 1-ին մաս, 06.12.2015թ. ընդունված
4. «ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներն ու դրանց իրացումը» ուղեցույց-ձեռնարկ, հատոր 1, ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Դանիելյանի, Երևան 2016, էջ 434-435, ՀՀ Սահմանադրական դատարանի 05.04.2016թ. ՍԴՈ-1263 որոշում

5. Հայաստանի Հանրապետության արդարադատության համակարգը, դասագիրք, Երևան «ԵՊՀ հրատարակչություն» 2019, էջ 256-257
6. Нерсесянц В.С., право и закон. Москва, 1983, ст. 87
7. Лубшев Ю.Ф. Адвокат в уголовном деле. М., 1999, стр. 33

ИНСТИТУТ АДВОКАТУРЫ КАК ОБЯЗАТЕЛЬНОЕ УСЛОВИЕ И ИМПЕРАТИВ УСТАНОВЛЕНИЯ ПРАВОВОГО ГОСУДАРСТВА

Оганесян Ваге
Адвокат, член Палаты Адвокатов РА

В этой статье на основе исследования и сравнительного анализа передового мирового опыта, была отражена Адвокатура, как исститут обязательного условия установления правового государства.

Автор статьн также пришел к выводу, что чем сильнее адвокатская деятельность в любом государстве, тем больше каждый человек будет чувствовать себя защищенным, что дает основание утверждать, что роль и влияние адвокатуры чрезвычайно важны и, конечно же, недопустимо ее недооценивать, в том числе при реализации политики воздействия на институт адвокатуры посредством внесения изменений и/или дополнений в законодательство.

Подчеркивая роль адвокатуры, автор статьи обосновал необходимость адвокатуры, сравнивая ее с медициной, которая во все времена всегда будет необходимой и востребованной.

Автор также считает, что только адвокатское сообщество должно иметь решающую роль и слово в дальнейшем совершествовании института адвокатуры, поскольку дальнейшее повышение роли адвокатуры прямо пропорционально защите прав и законных интересов личности и тем самым укрепление основ правового госыдарства.

Ключевые слова: адвокатура, правовое государство, верховенство право, логограф, гражданское общество, правоотношение, суд, стороны судопроизводство.

THE INSTITUTE OF ADVOCACY AS A MANDATORY CONDITION AND IMPERATIVE FOR THE ESTABLISHMENT OF LEGAL STATE

Vahe Hovhannisyan
Member of the RA Chamber of Advocates, Advocate

In this article, based on the study and comparative analysis of international best practices, reference is made to advocacy as a mandatory condition for the establishment of legal state.

The author of the article also came to the conclusion that the stronger the advocacy in any state, the more every person will feel protected, which gives grounds for asserting that the role and influence of the advocacy is extremely important and, of course, it is unacceptable to underestimate it, including implementation of the policy of influencing the advocacy institute through legislative amendments and/or additions.

Emphasizing the role of advocacy, the author has justified the necessity for advocacy by comparing it with medicine, which will always be relevant and in demand at all times.

The author also believes that only the advocacy community should have a decisive role and say in the further improvement of the advocacy institution, because the further improvement of the role of advocacy is directly proportional to the protection of the rights and legal interests of individuals and thereby strengthening the foundations of the legal state.

Key words: Advocacy, legal state, rule of law, logographer, civil society, legal relationship, court, parties to the proceedings.

Ներկայացվել է՝ 14,.09.2023 թ.
Ընդունվել է՝06.10.2023 թ.

ԿՐԹՈՒԹՅԱՆ (ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ, ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ) ՈԼՈՐՏՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՐԿՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Լիաննա Հակոբյան
Հյուսիսային համալսարանի իրավագիտության ֆակուլտետի դեկան
liannahakobyan77@mail.ru

Լիլիա Յոլչյան
Հյուսիսային համալսարանի իրավագիտության և հասարակագիտական առարկաների ամբիոնի դասախոս
lilya.yolchyan@mail.ru

Համայնքների տեղական ինքնակառավարման մարմինները (այսուհետ՝ ՏԻՄ-եր) կրթության բնագավառում ունեն բազմաթիվ լիազորություններ, որոնք վերաբերելի են նախադպրոցական կրթության, արտադպրոցական կրթության, ինչպես նաև հանրակրթության կազմակերպմանը: Ի տարբերություն հանրակրթության, նախադպրոցական և արտադպրոցական կրթության կազմակերպման հետ կապված գրեթե բոլոր լիազորությունները օրենքներով վերապահված են ՏԻՄ-երին, ինչից հետևում է, որ կրթական այս երկու կարևոր ծառայությունները մատուցվում են համայնքների կողմից: Այսպես, նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպումը համարվում է համայնքի պարտադիր խնդիր, որի հիման վրա, օրենսդիրը, որպես համայնքի ղեկավարի սեփական լիազորություն է սահմանել հետևյալը. կազմակերպում է նախադպրոցական և արտադպրոցական կրթության իրականացումը համայնքի տարածքում[12]:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ և 46-րդ հոդվածների կարգավորումների լույսի ներքո, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով սահմանվել են համապատասխան օրենսդրական գործիքակազմեր, որոնց կիրառման միջոցով, համայնքը նախադպրոցական և արտադպրոցական կրթական ծառայությունների տրամադրման համար սահմանում և գանձում է տեղական վճարներ (ծառայության վճար): Համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 10-րդ հոդվածի՝ տեղական վճարի տեսակներ են սահմանվում.

[12] Տե՛ս «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ:

- ✓ համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար.
- ✓ համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական, սպորտի և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար։

Միաժամանակ, անհրաժեշտ է արձանագրել, որ «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 14-րդ հոդվածով սահմանվում են նախադպրոցական կրթության և արտադպրոցական կրթության ծառայությունների դիմաց գանձվող տեղական վճարների դրույքաչափերը, դրանք են.

- ✓ համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափով.
- ✓ համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափով։

Ստացվում է այնպես, որ համայնքը՝ համայնքային ենթակայության նախադպրոցական և արտադպրոցական կրթական հաստատությունների գործունեության ապահովման նպատակով, իրավունք ունի կամ պարտավոր է սահմանել այդ ծառայությունների մասով տեղական վճարների դրույքաչափերը, որոնց հիման վրա համայնքի բյուջե գանձի համապատասխան տեղական վճարները։ Նախադպրոցական կրթության և արտադպրոցական կրթության կազմակերպման ծառայությունների գծով տեղական վճարների դրույքաչափերը, ինչպես և մյուս տեղական վճարների մասով, սահմանվում է համայնքի ավագանու կողմից, յուրաքանչյուր տարի՝ առանձին որոշմամբ հաստատվելու միջոցով։ Այս ծառայությունների մասով տեղական վճարների դրույքաչափերը, ավագանուն է ներկայացվում համայնքի ղեկավարի կողմից։

Սակայն, ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ համայնքի կողմից, այս ծառայությունների տրամադրման մասով տեղական վճարների հավաքագրումը դեռևս բավարար պայման չէ, որպեսզի համայնքում ամբողջությամբ մատուցվեն նախադպրոցական և արտադպրոցական կրթական ծառայությունները։ Գտնում ենք, որ տեղական վճարների գանձումն ու հավաքագրումը ընդամենը մասնակի փոխհատուցման միջոց է, մնացած մասով, ծառայության ամբողջական նորմատիվային ծախսածածկումը տեղի է ունենում համայնքի բյուջեի միջոցների հաշվին, հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի պահանջները, ինչպես նաև ղեկավարվելով

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի համապատասխան դրույթներով:

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածը սահմանում է հանրակրթության բնագավառում համայնքի ղեկավարի իրավասությունները: Նշված հոդվածում, և առհասարակ այս օրենքի կարգավորման առարկայի շրջանակում չկա ամրագրված համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախադպրոցական կրթության կազմակերպման և իրականացման վերաբերյալ լիազորությունը:

Վերը նկարագրվածի համատեքստում, հարկ է փաստել, որ նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպումը համարվում է համայնքի պարտադիր խնդիր[13], իսկ, կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում համայնքի ղեկավարն իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունը. կազմակերպում է նախադպրոցական և արտադպրոցական կրթության իրականացումը համայնքի տարածքում:[14] Համայնքի տարածքում՝ համայնքի ղեկավարի կողմից նախադպրոցական կրթության կազմակերպման իրավասությունների բացվածքը առավել մանրամասն ներկայացված է գործող «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Ելնելով վերոգրյալից, առաջարկվում է «Կրթության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին կետով. կազմակերպում է նախադպրոցական և արտադպրոցական կրթության իրականացումը համայնքի տարածքում.:

«Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածը սահմանում է նախադպրոցական կրթության բնագավառում մարզպետի, տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի (Երևանի քաղաքապետի) լիազորությունները: Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման ոլորտը կարգավորող օրենսդրությունը սահմանում է տեղական ինքնակառավարման մարմինները, սակայն որևէ կարգավորում, որը կնախատեսի տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի մասին դրույթներ, առկա չեն:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն, համայնքի գործադիր մարմինը համարվում է համայնքի ղեկավարը, ով ներկայացնում է համայնքի շահերը այլ անձանց հետ փոխհարաբերություններում: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն, կրթության,

[13] Տե՛ս «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդված:

[14] Տե՛ս «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ:

մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում համայնքի ղեկավարն իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունը. կազմակերպում է նախադպրոցական և արտադպրոցական կրթության իրականացումը համայնքի տարածքում: Հետևաբար, նախադպրոցական կրթության կազմակերպման իրավասությունը, կարելի է արձանագրել, որ վերապահված է համայնքի ղեկավարին:

Նշվածը հաշվի առնելով, առաջարկվում է «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի թե՛ վերնագրում, և թե՛ կարգավորման առարկայի մեջ, «տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի» բառերը փոխարինել «համայնքի ղեկավարի» բառերով: Միաժամանակ, հիմք ընդունելով գործող սահմանադրական կարգավորումները[15], որի համաձայն, Երևանը համայնք է, նույն հոդվածի վերնագրից հանել «Երևանի քաղաքապետի» բառերը:

Անդրադառնալով կրթության բնագավառում էական կարևորություն ունեցող մեկ այլ օրենքի կարգավորման առարկային, մասնավորապես՝ «Գրադարանների և գրադարանային գործի մասին» ՀՀ օրենքին, հարկ է նկատել, որ այդ օրենքի 14-րդ հոդվածը սահմանում է գրադարանային գործի ոլորտում ՏԻՄ-երի լիազորությունները: Սակայն, վերը մեջբերված վերտառությամբ հոդվածը ընդամենը բովանդակում է հետևյալ կարգավորումը: Գրադարանային գործի ոլորտում տեղական ինքնակառավարման մարմիններն իրականացնում են «Տեղական ինքնակառավարման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված լիազորությունները:

Հարկ է արձանագրել, որ գործող «Տեղական ինքնակառավարման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, համայնքի ղեկավարին և Երևան համայնքի ղեկավարին վերապահված է հետևյալ ընդհանրական բնույթի լիազորությունը.

1) Համայնքի ղեկավարը՝ կազմակերպում և կառավարում է համայնքային ենթակայության դպրոցների, մանկապարտեզների, ակումբների, մշակույթի տների, երիտասարդական կենտրոնների, գրադարանների, կրթական, մշակութային և երիտասարդական այլ հիմնարկների ու կազմակերպությունների գործունեությունը, դրանց շահագործման և նորոգման աշխատանքները.:

Ստացվում է այնպես, որ օրենքով[16] կատարված իրավական հղումը՝ բովանդակային կարգավորման իմաստով թերի է, ինչը ըստ էության վկայում է այն մասին, որ անհրաժեշտություն կա «Տեղական ինքնա-

[15] Տե՛ս ՀՀ Սահմանադրության 187-րդ հոդված:

[16] Տե՛ս «Գրադարանների և գրադարանային գործի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդված:

կառավարման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում կատարել համապատասխան լրացումներ: Սակայն, գրադարանների գործունեության կազմակերպման և գրադարանային գործիք վարման մասով լիազորությունները սահմանելիս, անհրաժեշտ է այն դիտարկել նաև համայնքների միավորման գործընթացի տրամաբանության լույսի ներքո՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության համատեղ աշխատանքի արդյունքում:

Հիմք ընդունելով վերոգրյալը, առաջարկվում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը՝ քննարկել «Գրադարանների և գրադարանային գործի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածից բխող՝ «Տեղական ինքնակառավարման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում համապատասխան լրացումներ անհրաժեշտությունը և նպատակահարմարությունը:

Հանրապետությունում գործող նախադպրոցական ուսումնական հաստատությունների գերակշիռ մասը համարվում են համայնքային, այսինքն, մանկապարտեզները գործում են համայնքների ենթակայությամբ: Մեջբերվածի համատեքստում, չպետք է դիտարկել նախադպրոցական կրթություն, այլընտրանքային նախադպրոցական կրթություն մատուցող մասնավոր հաստատություններին, քանի որ, դրանք ինչպես սեփականության, այնպես էլ կազմակերպահիրավական ձևերով տարբեր են:

Հարկ է նաև արձանագրել, որ Հայաստանում ներդրված այլընտրանքային նախադպրոցական կրթության իրավական հնարավորությունների համատեքստում, վերջին տարիներին, Հայաստանի մի շարք միավորված բազմաբնակավայր համայնքների կազմում ընդգրկված բնակավայրերում ստեղծվել են այլընտրանքային նախադպրոցական կրթության կենտրոններ, որոնք մասնակիորեն ապահովում են նախադպրոցական կրթության նորմատիվ պահանջներից բխող՝ ծառայությունների մատուցումը տվյալ բնակավայրերում:

Անհրաժեշտ է նաև փաստել, որ միավորված համայնքներում ստեղծված այլընտրանքային նախադպրոցական կրթական կենտրոնները ևս համարվում են համայնքային ենթակայության և դրանց գործունեության ապահովումը ևս իրականացվում է համայնքի սեփական բյուջետային միջոցների հաշվին: Իրավակիրառական պրակտիկայում, համայնքների դպրոցներում գործում են նաև նախակրթարաններ, որոնք սակայն համայնքային միջոցների հաշվին չեն իրականացվում: Նախակրթարանների ծրագիրը իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին՝ նախադպրոցական պետական ծրագրի շրջանակներում:

Համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունները հիմնականում ունեն համայնքային ոչ առևտրային

կազմակերպության կարգավիճակ: Իրավակիրառական պրակտիկայում կան դեպքեր, երբ համայնքում ստեղծվել է մեկ համայնքային հիմնարկ կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպություն, որի կազմում ընդգրկված են համայնքի մնացած մանկապարտեզները, որպես մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ:

Այդպիսի օրինակ է Վանաձոր համայնքը, որտեղ, դեռևս 2020 թվականին, համայնքի ավագանու որոշմամբ երկու տասնյակից ավելի նախադպրոցական կրթություն տրամադրող համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ վերակազմակերպվեցին մեկ կառույցի շրջանակում (միացման և վերակազմակերպման եղանակով): Այս մեթոդի իրացումը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված իրավական հնարավորությունների և գործիքակազմերի առկայությամբ, որոնք լավ միջոցներ կարող են հանդիսանալ համայնքների համար վարչական ծախսերը մեղմելու և մեկ կենտրոնից վարչական կառավարումը իրականացնելու համար:

2022թ. ՀՀ-ում գործել է 957 համայնքային, գերատեսչական և ոչ պետական նախադպրոցական հաստատություն (այսուհետ՝ ՆԴՀ), որոնցից 552-ը՝ մանկապարտեզ, 232-ը՝ մսուր-մանկապարտեզ, 173-ը՝ դպրոց-մանկապարտեզ: ՆԴՀ-ների ընդհանուր քանակից 888-ը համայնքային ենթակայության է, 10-ը՝ գերատեսչական և 59-ը՝ ոչ պետական:

Երեխաների ընդգրկվածությունը ՆԴՀ-ներում (0-5 տարեկան բնակչության թվաքանակից) կազմել է 32.3%, քաղաքներում՝ 35.6%, գյուղերում՝ 25.9%: Մեկ խմբում երեխաների միջին թվաքանակը կազմել է 23 երեխա, տեղերի փաստացի զբաղվածությունը՝ 84.0%: Միջին հաշվով մեկ ՆԴՀ հաճախել է 76 երեխա, մեկ մանկավարժին բաժին է ընկել 11 երեխա:

Հայաստանում արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատությունների ցանցը ձևավորվել է դեռևս խորհրդային իշխանության տարիներին: Ըստ վիճակագրության 2021/2022 ուսումնական տարում հանրապետությունում գործել են երաժշտական, արվեստի, գեղարվեստի և մանկապատանեկան ստեղծագործական 240 դպրոց և կենտրոն, որոնցից 50-ը Երևանում, իսկ մնացած 190-ը՝ ՀՀ մարզերում (համայնքներում):

2021/2022 ուսումնական տարում երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներում և մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններում սովորել է 48 823 աշակերտ: Ըստ վիճակագրության 2021/2022 ուսումնական տարում հանրապետությունում գործել է 175 սպորտային կազմակերպություն: Երևանում գործող սպորտային կազմակերպություններից 12-ը գտնվել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, 39-ը՝ Երևանի քաղաքապետարանի, 3-ը գտնվել են վարչական շրջանների, 6-ը՝ «Հայաստան» մարզական միության, և 2-ը՝ ⑥Աշխատանքային ռեզերվներ⑦ մարզական հասարակական կազմակերպության

ենթակայությամբ: Ստացվում է այնպես, որ Երևան համայնքից դուրս, հանրապետության մնացած 70 համայնքները միասին վերցրած, գործում են թվով 112 սպորտային կազմակերպություններ:

1996 թվականին Հայաստանի Հանրապետությունում ձևավորվեց վարչատարածքային կառավարման նոր համակարգ և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ արտադպրոցական ուսումնական հաստատությունների մոտ 80%-ը հանձնվեցին համայնքներին: Ըստ էության, տեղի ունեցավ արտադպրոցական կրթության կազմակերպման և իրականացման լիազորության ապակենտրոնացում, որն իրականացվեց համայնքի ղեկավարին, որպես սեփական լիազորություն վերապահելու միջոցով:

Արտադպրոցական ուսումնական հաստատությունների ֆինանսական միջոցները գոյանում են Հայաստանի Հանրապետության պետական և համայնքային (ըստ ենթակայության) բյուջեով նախատեսված միջոցների հաշվին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ լրացուցիչ աղբյուրներից:

ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 13-ի N 2145-Ն որոշմամբ սահմանվել են պետական արտադպրոցական կրթադաստիարակչական հաստատությունների ցանկը, որով թվով 11 հաստատություններ համարվում են պետական, որոնցից 10-ը համարվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայության, իսկ 1-ը պատվիրակված լիազորության հիմքով՝ Երևանի քաղաքապետարանի ենթակայության:

Ըստ էության, արտադպրոցական կրթական ծառայությունները կարելի է որակել որպես համայնքային ծառայություն, քանի որ, ինչպես արտադպրոցական կրթական հաստատություններն են գրեթե ամբողջությամբ համարվում համայնքային ենթակայության, այնպես էլ այդ ծառայությունները մատուցվում են համայնքի բյուջեի միջոցների հաշվին:

Արժանահավատ է դիտարկել նաև այն հանգամանքը, որ պետությունը, բացի արտադպրոցական կրթության բնագավառի քաղաքականության մշակումից, իրավակիրառական պրակտիկայում մասնակցում կամ աջակցում է այդ ծառայությունների բարելավվմանը, օրինակ՝ արտադպրոցական հաստատությունների շենքային պայմանների կամ տեխնիկական հագեցվածության ապահովման մասով պետության որոշակի աջակցությունը: Այս իմաստով, հատկանշական կլիներ, եթե նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակով, ՀՀ կառավարությունը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգում[17] ավելացներ նաև

[17] Տե՛ս ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշում:

արտադպրոցական կրթության հաստատությունների կառուցումը, վերակառուցումը և նորոգումը, որպես ծրագրային ոլորտ:

Վերոգրյալը հաշվի առնելով, առաջարկվում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը, նախաձեռնել ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու գործընթաց, որով արտադպրոցական կրթության հաստատությունների կառուցումը, վերակառուցումը և նորոգումը կհամարվի որպես ծրագրային ոլորտ, ինչի համատեքստում, կձևավորվի համայնք-պետություն համագործակցություն ի շահ արտադպրոցական կրթության և դրանից բխող ծառայությունների բարելավմանը:

Հարկ է նկատել, որ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պաշտոնական կայք էջի վիճակագրություն բաժնում, արտադպրոցական հաստատությունների վիճակագրությունը զետեղված չէ, ի տարբերություն նախադպրոցական, հանրակրթական, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների18:

Ի տարբերություն նախադպրոցական և արտադպրոցական կրթության, հանրակրթությունը, որպես ծառայություն, համայնքային մակարդակում ապակենտրոնացված չէ: Հանրակրթական պետական ծրագիրը Հայաստանում իրագործվում է տարածքային կառավարման մարմինների կողմից, այսինքն՝ մարզպետի և մարզպետի աշխատակազմի: Հանրակրթական ծրագրերը իրականացվում են հիմնական և ավագ դպրոցների կողմից:

Հանրապետության բոլոր ավագ դպրոցները գործում են ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ, իսկ հիմնական դպրոցները, բացառությամբ Երևան համայնքի, գործում են մարզային ենթակայությամբ: Երևան համայնքում, հիմնական դպրոցները, պետության կողմից պատվիրակված լիազորության հիմքով, համարվում են համայնքային ենթակայության:

2021/2022 ուսումնական տարում ՀՀ-ում գործել են հանրակրթական ծրագրեր իրականացնող 1402 հաստատություններ (այսուհետ՝ դպրոցներ), որոնից՝ 48-ը համարվում են ոչ պետական:

Հիմք ընդունելով տեղական ինքնակառավարման և կրթության ոլորտները կարգավորող ՀՀ ներպետական օրենսդրության կարգավորումների ուսումնասիրությունները, ստորև ներկայացվում են դրանցում առկա ինստիտուցիոնալ խնդիրները և համապատասխան լուծումներ ենթադրող առաջարկությունները.

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի իրավասությունները, որի 1-ին մասի 15-րդ ենթակետով սահ-

[18] Տ՛ես https://reports.emis.am/#/

մանվում է հետևյալը. համաձայնություն է տալիս մարզպետարանների և համայնքների կրթության վարչությունների (բաժինների) ղեկավարների և հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների նշանակման ու ազատման վերաբերյալ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Գործող «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի և «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի կարգավորումների համատեքստում, համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի գործունեությունը ապահովում է համայնքապետարանի աշխատակազմը: Ըստ էության, համայնքապետարանի աշխատակազմը համարվում է կառավարչական հիմնարկ, որը հաշվառվում է օրենքով սահմանված կարգով իրավաբանական անձանց պետական ռեգիստրում:

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածը սահմանում է հանրակրթության բնագավառում համայնքի ղեկավարի իրավասությունները: Ըստ այդմ, համայնքի ղեկավարը պարտադիր լիազորության կարգով՝

- ուսումնական հաստատությունների ինքնակառավարման սկզբունքին համապատասխան աջակցում է համայնքի տարածքում պետական կրթական քաղաքականության իրականացմանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.
- իրականացնում է նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը, ապահովում է նրանց ընդգրկումն ուսումնական հաստատություններում.
- իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ:

Հարկ է արձանագրել, որ 2015 թվականի Սահմանադրության փոփոխությունների 182-րդ հոդվածով, համայնքների տեղական ինքնակառավարման մարմինները այլևս չունեն պարտադիր և կամավոր լիազորությունները:

Սահմանադրության 182-րդ հոդվածը սահմանում է համայնքի խնդիրները և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները: Հարկ է նկատել, որ Սահմանադրությունը առաջին անգամ կիրառել է «համայնքի խնդիրներ» հասկացությունը, համաձայն որի, դրանք լինում են.

⇒ պարտադիր.

⇒ կամավոր:

Արժանահավատ է դիտարկել այն հանգամանքը, որ Սահմանադրությունը հստակ կապ է ստեղծել համայնքի խնդիրների և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների հետ: Այսպես՝ Սահմանադրության 182-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները լինում են՝

✓ սեփական՝ համայնքի պարտադիր և կամավոր խնդիրների լուծման նպատակով.

✓ պետության կողմից պատվիրակված:

Փաստորեն, տեղական ինքնակառավարման մարմիններին օրենքով տրվում են սեփական լիազորություններ, որպեսզի վերջիններս հնարավորություն ունենան լուծելու համայնքի պարտադիր և կամավոր խնդիրները: Սահմանադրական նշված նորմի հիման վրա, համապատասխան կարգորոշումներ են սահմանվել նաև «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով: Մասնավորապես՝ նշված օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ պարբերությամբ սահմանվում է, որ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի իմաստով սահմանված համայնքի սեփական լիազորություններն ուղղված են բացառապես համայնքի պարտադիր խնդիրների լուծմանը: Փաստորեն, կարելի է արձանագրել, որ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված բոլոր սեփական լիազորությունները պետք է կատարվեն առաջնահերթորեն, քանի որ դրանք սահմանված են համայնքի պարտադիր խնդիրները լուծելու նպատակով: Այս պարագայում, իրավական տեսակետից առաջանում է համայնքի պարտադիր խնդիրների և սեփական լիազորությունների համապատասխանության հարցը:

Կրթության բնագավառի օրենսդրությամբ սահմանվում է նաև հանրակրթության բնագավառում համայնքի ղեկավարի իրավասությունները[19]: Նշված հոդվածում, և առհասարակ այս օրենքի կարգավորման առարկայի շրջանակում չկա ամրագրված համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախադպրոցական կրթության կազմակերպման և իրականացման վերաբերյալ լիազորությունը:

Վերը նկարագրվածի համատեքստում, հարկ է փաստել, որ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպումը համարվում է համայնքի պարտադիր խնդիր, իսկ նույն օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն, կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում համայնքի ղեկավարն իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունը. Կազմակերպում է նախադպրոցական և արտադպրոցական կրթության իրականացումը համայնքի տարածքում: Համայնքի տարածքում՝ համայնքի ղեկավարի կողմից նախադպրոցական կրթության կազմակերպման իրավասությունների բացվածքը առավել մանրամասն ներկայացված է գործող

[19] Տե՛ս «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդված:

«Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Նախադպրոցական կրթության ոլորտի հիմնական օրենքը սահմանում է նախադպրոցական կրթության բնագավառում մարզպետի, տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի (Երևանի քաղաքապետի) լիազորությունները[20]: Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման ոլորտը կարգավորող օրենսդրությունը սահմանում է տեղական ինքնակառավարման մարմինները, սակայն որևէ կարգավորում, որը կնախատեսի տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի մասին դրույթներ, առկա չեն:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն, համայնքի գործադիր մարմինը համարվում է համայնքի ղեկավարը, ով ներկայացնում է համայնքի շահերը այլ անձանց հետ փոխհարաբերություններում: «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն, կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում համայնքի ղեկավարն իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունը. կազմակերպում է նախադպրոցական և արտադպրոցական կրթության իրականացումը համայնքի տարածքում.: Հետևաբար, նախադպրոցական կրթության կազմակերպման իրավասությունը, կարելի է արձանագրել, որ վերապահված է համայնքի ղեկավարին:

«Գրադարանների և գրադարանային գործի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածը սահմանում է գրադարանային գործի ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները: Սակայն, վերը մեջբերված վերտառությամբ հոդվածը ընդամենը բովանդակում է հետևյալ կարգավորումը. Գրադարանային գործի ոլորտում տեղական ինքնակառավարման մարմիններն իրականացնում են «Տեղական ինքնակառավարման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված լիազորությունները: Հարկ է արձանագրել, որ գործող «Տեղական ինքնակառավարման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, համայնքի ղեկավարին և Երևան համայնքի ղեկավարին վերապահված է հետևյալ ընդհանրական բնույթի լիազորությունը.

- ✓ Համայնքի ղեկավարը՝ կազմակերպում և կառավարում է համայնքային ենթակայության դպրոցների, մանկապարտեզների, ակումբների, մշակույթի տների, երիտասարդական կենտրոնների, գրադարանների, կրթական, մշակութային և երիտասարդական այլ հիմ-

[20] Տե՛ս «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդված:

նարկների ու կազմակերպությունների գործունեությունը, դրանց շահագործման և նորոգման աշխատանքները:

Ստացվում է այնպես, որ «Գրադարանների և գրադարանային գործի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով կատարված իրավական հղումը՝ բովանդակային կարգավորման իմաստով թերի է, ինչը ըստ էության վկայում է այն մասին, որ անհրաժեշտություն կա «Տեղական ինքնակառավարման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում կատարել համապատասխան լրացումներ:

Սակայն, գրադարանների գործունեության կազմակերպման և գրադարանային գործի վարման մասով լիազորությունները սահմանելիս, անհրաժեշտ է այն դիտարկել նաև համայնքների միավորման գործընթացի տրամաբանության լույսի ներքո՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության համատեղ աշխատանքի արդյունքում:

«Գրադարանների և գրադարանային գործի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածը սահմանում է գրադարանների ֆինանսավորման հետ կապված իրավահարաբերությունները: Համաձայն մեջբերված հոդվածի 2-րդ մասի՝ համայնքային գրադարանների ֆինանսավորումն իրականացվում է տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեների և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին: ՀՀ Սահմանադրության 185-րդ հոդվածի սահմանադրական կարգավորումների, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումների համաձայն, բյուջեն համարվում է ոչ թե տեղական ինքնակառավարման մարմինը, այլև՝ համայնքինը: Օրենսդրությունը կիրառում է համայնքի բյուջե հասկացությունը կամ համայնքային բյուջե հասկացությունը:

«Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածը սահմանում է տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները: Սակայն բուն հոդվածի կարգավորումը ընդամենը սահմանում է հետևյալը. Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն էկոլոգիական անընդմեջ կրթության բնագավառում կարգավորվում են «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

«Կրթության մասին» օրենքի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այս օրենքում սահմանված չեն տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները: Ըստ

էության, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները կրթության բնագավառում, սահմանված են «Հանրակրթության մասին» և «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով: Ստացվում է այնպես, որ «Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածը հղում է տալիս մի օրենսդրական ակտի, որում որևէ լիազորություն տեղական ինքնակառավարման մարմինների համար սահմանված չէ: Անհրաժեշտ է փաստել, որ տեղական ինքնակառավարման և կրթության ոլորտը կարգավորող օրենսդրական ակտերում առկա են եզրույթների և հասկացությունների կիրառման խնդիրներ և հակասություններ: «Տեղական տուրքերի մասին» օրենքում կիրառվում են արվեստի, երաժշտական, նկարչական դպրոցներ, սպորտ դպրոցներ բառերը, մինչդեռ, «Կրթության մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքներում օգտագործվում է արտադպրոցական կրթական հաստատություններ բառերը:

Կրթության ոլորտը կարգավորող օրենսդրությունում կիրառվող եզրութաբանությանը համահունչ, պետք է կատարվեն համապատասխան փոփոխություններ «Տեղական ինքնակառավարման մասին» և «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքներում:

«Կրթության մասին» ՀՀ օրենքի կարգավորումներից, ստեղծվում է տպավորություն, որ առհասարակ, հանրապետությունում արտադպրոցական կազմակերպությունները կամ ամբողջությամբ մասնավոր տիրույթում են գործում, կամ ամբողջությամբ պետական ենթակայության են: Սակայն, իրավակիրառական պրակտիկայից ելնելով, պետք է արձանագրել, որ այդ կազմակերպությունների մեծ մասը համարվում է համայնքային: Ինչը իրավացիորեն հանգեցնում է այն եզրահանգմանը, որ «Կրթության մասին» ՀՀ օրենքը առնվազն արտադպրոցական կրթության կազմակերպման իմաստով, պետք է սահմաներ համայնքի ղեկավարին վերապահված լիազորություններ, որով պարզ կդառնար, արտադպրոցական կրթության կազմակերպման և իրականացման իրական դերակատարի ինչպես կարգավիճակը, այնպես էլ լիազորությունների շրջանակը:

Վերը մեջբերվածի համատեքստում, առավել քան նպատակահարմար է անդրադառնալ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համապատասխան կարգավորումներին: Առաջին հերթին, անհրաժեշտ է արձանագրել, որ արտադպրոցական դաստիարակության կազմակերպումը, համարվում է համայնքի պարտադիր խնդիր[21]:

Նշված պարտադիր խնդրի լուծմանն հասնելու նպատակով, օրենսդիրը, համայնքի ղեկավարին վերապահել է սեփական լիազորություն,

[21] Տե՛ս «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ:

որով համայնքի ղեկավարը կազմակերպում է արտադպրոցական կրթության իրականացումը համայնքի տարածքում[22]:

Մի կողմից, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը՝ արտադպրոցական կրթության իրականացումը, դիտարկում է որպես համայնքի ղեկավարի սեփական լիազորություն, ինչն ենթադրում է, որ այդ կրթության իրականացման հետ կապված ծախսերը իրականացվում են համայնքի բյուջեի սեփական միջոցների հաշվին, մյուս կողմից՝ իրավակիրառական պրակտիկան «գալիս է» փաստելու, որ արտադպրոցական հաստատությունների զգալի մասը համարվում է համայնքային ենթակայության:

Բացի այդ, ուշադրության է արժանի «Կրթության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով սահմանված՝ կրթության բնագավառում օրենսդրության խնդիրները, մասնավորապես հետևյալը. իրավասության բաշխումն ու տարանջատումը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների միջև: Սակայն, այս խնդրի լուծմանը հասնելու իմաստով, նույն օրենքը օրենսդրական նախադրյալներ չի ստեղծել, առավելապես, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների կամ որ նույնն է, իրավասությունների սահմանման բացակայությամբ պայմանավորված:

Վերը նկարագրվածի համատեքստում, անհասկանալի է դառնում «Կրթության մասին» ՀՀ օրենքով, համայնքային ենթակայության արտադպրոցական կազմակերպությունների մասով, ինչպես նաև արտադպրոցական կրթության բնագավառում համայնքի ղեկավարին վերապահվելիք լիազորությունների բացակայությունը:

Միաժամանակ, գտնում ենք, որ «Կրթության մասին» ՀՀ օրենքում 10.02.2023թ. ընդունված ՀՕ-26-Ն օրենքով կատարված փոփոխություններն ու լրացումները չեն ուղեկցվել ամբողջական հարակից օրենքներում անհրաժեշտ փոփոխություններ կատարելու հաշվի առնմամբ, ինչի մասին է վկայում այն փաստը, որ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ գործող օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում դեռևս կիրառվում է «արտադպրոցական դաստիարակություն» եզրույթները:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հոդվածը նվիրված է կրթության, մասնավորապես՝ նախադպրոցական և արտադպրոցական կրթության բնագավառում ՏԻՄ-երի լիազորություններին, դրանց իրացման հետ կապված ինստիտուցիոնալ և իրավակիրառական հիմնախնդիրներին. այդ համատեքստում օրենսդրական փոփոխություններ կատարելու իրավական անհրաժեշտությանը: Հոդվածի նպատակն է, ուսումնասիրել, բացահայտել և վեր

[22] Տե՛ս «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ:

հանել նախադպրոցական և արտադպրոցական կրթության բնագավառում ՏԻՄ-երի լիազորությունների հետ կապված խնդիրները, օրենսդրական բացերն ու հակասությունները, համայնքների կողմից կրթության բնագավառում մատուցվող ծառայությունների հետ կապված իրավակիրառական խնդիրները՝ առաջադրելով համապատասխան օրենսդրական առաջարկություններ ենթադրող լուծումներ:

Հիմնաբառեր. սահմանադրական կարգավորում, մանկապարտեզ, իրավունք, իրավակիրառական պրակտիկա, իրավահարաբերություն, արվեստի դպրոց, մարզադպրոց, երաժշտական դպրոց, ուսումնական հաստատություն, ծառայություն, տեղական վճար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. ՀՀ Սահմանադրություն (2015թ. փոփոխություններով), (www. arlis.am)
2. «Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիա», ընդունվել է 15.10.1985թ., (www. arlis.am)
3. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, ընդունվել է 07.05.2002թ., (www. arlis.am)
4. «Կրթության մասին» ՀՀ օրենք
5. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք
6. «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք
7. «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենք
8. «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք
9. ՀՀ մունիցիպալ իրավունք, ուսումնական ձեռնարկ, ընդհ. խմբ. Գ.Դանիելյանի, Երևան, ԵՊՀ հրատարակություն 2015թ.

ПОЛНОМОЧИЯ, ЗАКРЕПЛЕННЫЕ ЗА ОРГАНАМИ МЕСТНОГО САМОУПРАВЛЕНИЯ В ОБЛАСТИ ОБРАЗОВАНИЯ (ДОШКОЛЬНОЕ, СРЕДНЕЕ ОБРАЗОВАНИЕ) И ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ, СВЯЗАННЫЕ С ИХ ОСУЩЕСТВЛЕНИЕМ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Лианна Акопян
Лилиа Елчян

Статья посвящена полномочиям органов местного самоуправления в сфере образования, в частности дошкольного и внешкольного образования, а также институциональным и правоприменительным вопросам, связанным с их реализацией. юридическая необходимость внесения законодательных изменений в этом контексте. Цель статьи - изучить, выявить и осветить проблемы, связанные с полномочиями органов местного самоуправления в

сфере дошкольного и внешкольного образования, законодательные пробелы и противоречия, проблемы правоприменения, связанные с оказываемыми услугами. сообщества в сфере образования, предлагая решения, включающие соответствующие законодательные предложения.

Ключевые слова: конституционное регулирование, детский сад, право, правоприменительная практика, юриспруденция, художественная школа, спорт школа, музыкальная школа, учебное заведение, сервис, местный сбор.

POWERS ASSIGNED TO LOCAL SELF-GOVERNMENT BODIES IN THE FIELD OF EDUCATION (PRE-SCHOOL, SECONDARY EDUCATION) AND THE MAIN PROBLEMS ASSOCIATED WITH THEIR IMPLEMENTATION IN THE REPUBLIC OF ARMENIA

Lianna Hakobyan
Lilia Yolchyan

The article is devoted to the powers of local governments in the field of education, in particular preschool and out-of-school education, as well as institutional and law enforcement issues related to their implementation. there is a legal need for legislative changes in this context. The purpose of the article is to study, identify and highlight problems related to the powers of local governments in the field of preschool and out-of-school education, legislative gaps and contradictions, law enforcement problems related to the services provided. communities in the field of education, proposing solutions including relevant legislative proposals.

Keywords: constitutional regulation, kindergarten, law, law enforcement practice, jurisprudence, art school, sports school, music school, educational institution, service, local fee.

Ներկայացվել է՝ 21,.09.2023 թ.
Ընդունվել է՝ 08.11.2023 թ.

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Վահագն Պետրոսյան
Հյուսիսային համալսարանի իրավագիտության և
հասարակագիտական առարկաների ամբիոնի դասախոս
Vahagn.Petros@mail.ru

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը նոր խմբագրությամբ շարադրելու և ընդունելու իրավական անհրաժեշտությունը: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ գործող օրենքը ընդունվել է 2016 թվականի դեկտեմբերի 16-ին և ուժի մեջ է մտել 2017 թվականի հունվարի 1-ից: Այն շարադրվել է նոր խմբագրությամբ, հաշվի առնելով 2015 թվականի Սահմանադրության փոփոխությունների եզրափակիչ և անցումային դրույթները սահմանող կարգավորումները[23]: Համաձայն նշված սահմանադրական իրավանորմի՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը համապատասխանեցվում է Սահմանադրությանը և ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից: Նշվածից հետևում է, որ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ գործող օրենքը 2016 թվականին շարադրվել և ընդունվել էր նոր խմբագրությամբ՝ նպատակ ունենալով համապատասխանեցնելու օրենքի դրույթները փոփոխված Սահմանադրության կարգավորումների հետ:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ նոր խմբագրությամբ օրենքը ընդունման պահից սկսած, շուրջ 7 տարի կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման հետ կապված հիմնարար իրավահարաբերությունները: Սակայն հարկ է արձանագրել, որ անցած 5 տարիների ընթացքում ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգը անցել է լայն բարեփոխումների գործընթացներով, որոնց արդյունքում, տեղի են ունեցել համակարգային մի շարք փոփոխություններ:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ գործող օրենքը նոր խմբագրությամբ շարադրելու իրավական և իրավակիրառական անհրաժեշտությունը բխում է հենց այդ համակարգային բարեփոխումներից, որոնք վերաբերելի են տեղական ինքնակառավարման ինստիտուտի այնպիսի հիմնարար բաղադրիչներին, ինչպիսիք են՝ վարչատարածքային բարեփոխումները, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրակարգի փոփոխությունները և այլն:

[23] Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, 16-րդ գլուխ, 210-րդ հոդված:

Հայաստանի Հանրապետությունում համայնքների մասով առկա վարչատարածքային կառուցվածքը՝ համայնքների միավորման գործընթացի արդյունքում նոր ձևավորված համայնքների թիվը, ինչպես նաև թվով 71 համայնքներից 9-ը համայնքում մեծամասնական ընտրակարգի կիրառությունը, վկայում է համայնքների կառավարման հետ կապված գործիքակազմերի վերանայման անհրաժեշտության մասին, որն առաջին հերթին պետք է իրականացվի ինստիտուցիոնալ մակարդակում: Արժանահավատ է դիտարկել, որ Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգի հետ կապված ցանկացած հիմնարար ինստիտուցիոնալ փոփոխություն, ենթադրում է առաջին հերթին «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու գործողություն:

Սակայն, հարկ է նկատել, որ վերջին հինգ տարիների ընթացքում տեղական ինքնակառավարման համակարգում տեղի ունեցած համակարգային փոփոխությունները, ինչպես նաև օրենքի կիրարկման ընթացքում բացահայտված և վեր հանված իրավակիրառական խնդիրները, բավարար և ողջամիտ պահանջներ են առաջադրում օրենքը նոր խմբագրությամբ շարադրելու մասով: Նշված պնդումը առավել քան ամրապնդում է օրենքում մասնակի փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով առաջ գնալու աննպատակահարմարությունը և իրավական տեխնիկայի տեսանկյունից նման մեթոդով առաջնորդվելու բացառումը:

Անհրաժեշտ է արձանագրել, որ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը՝ գործող կարգավորման առարկայի և իրավանորմերի համակցության պայմաններում այլևս ամբողջությամբ «չի սպասարկում» Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման համակարգի շահերը: Հայաստանում իրականացված վարչատարածքային բարեփոխումները, ընտրական համակարգի բարեփոխումները, մասնավորապես՝ ավագանու համամասնական ընտրակարգի ներդրումը թելադրում են նոր իրավական ուղիներ և հնարավորություններ, որոնք միտված կլինեն գործող համակարգին համահունչ սահմանելու համապատասխան օրենսդրական գործիքակազմեր: Ըստ էության, համայնքների միավորման գործընթացին տրամաբանորեն պետք է հաջորդի լիազորությունների ապակենտրոնացման գործընթացը, ինչն իր հերթին ենթադրում է համապատասխան օրենսդրական երաշխիքների ամրագրում և գործիքակազմերի սահմանում, որոնք թերևս գործող «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում արտահայտված չեն:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը նոր խմբագրությամբ (նոր օրենք) շարադրելու հայեցակարգային դրույթների մշակումը բխում է նորմատիվ իրավական ակտերի մշակման և նախագծման ոլորտը կարգավորող ՀՀ ներպետական օրենսդրության պահանջներից, որի համատեքստում, եթե ոլորտային օրենքը կամ օրենսգիրքը ամ-

բողջությամբ շարադրվելու է նոր խմբագրությամբ, ապա նախապես պետք է լիազոր մարմնի, տվյալ դեպքում՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից, նախ և առաջ մշակվի տվյալ օրենքը ամբողջությամբ փոփոխելու (նոր խմբագրությամբ շարադրելու) վերաբերյալ հայեցակարգային դրույթները և մոտեցումները:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը նոր խմբագրությամբ շարադրելու համար անհրաժեշտություն է առաջանալու մանրամասն՝ դետալացված ուսումնասիրել օրենքի յուրաքանչյուր հոդվածի կարգավորման առարկան, շեշտը դնելով համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի փոխհարաբերությունների փոխակերպման վրա, նախանշելով համապատասխան օրենսդրական գործիքակազմերի հնարավոր սահմանումը[24]:

Նոր օրենքի մշակման հայեցակարգային մոտեցումները: Սույն գիտական հոդվածի մշակման հիմքում ընկած, մեր կողմից կատարված օրենսդրական համալիր ուսումնասիրությունների, իրավական և իրավահամեմատական վերլուծությունների, ինչպես նաև իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունների արդյունքում, ոտրև ներկայացվում են «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը նոր խմբագրությամբ շարադրելու հայեցակարգային դրույթներն ու մոտեցումները.

1. **«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը նոր խմբագրությամբ շարադրելու համակարգային, ինստիտուցիոնալ և կիրառական բնույթի հիմքերը և պատճառները, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը նոր խմբագրությամբ շարադրելու իրավական անհրաժեշտությունը:** Նշված հայեցակարգային մոտեցումը վերաբերելի է մշակվելիք օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ հիմնավորմանը, որում շարադրվելու են առկա իրավիճակը, առաջարկվող կարգավորման բնույթը և ակնկալվող արդյունքները:

2. **«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը նոր խմբագրությամբ շարադրելու մասով նոր օրենքի նախնական կառուցվածքը, ըստ գործող օրենքի առանձին գլուխների՝ նոր խմբագրությամբ շարադրելու տրամաբանությունը և մեկնաբանությունները**: Նոր խմբագրությամբ օրենքի նախագիծը պետք է կազմված է լինի 14 գլուխներից (ներ-

[24] **ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ:** Անհրաժեշտ է արձանագրել, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի փոփոխությունների կատարման մասով տիրապետում է բավականին մեծ տեղեկատվության, օրենսդրական առաջարկությունների, բազմաթիվ իրավական վերլուծությունների, որոնք որպես բազային հիմք, կարող են հաշվի առնվեն նոր խմբագրությամբ օրենքի նախագծի մշակման համար:

կայիս 10-ի փոխարեն, ցանկում ընդգծվածները համարվում են նոր գլուխներ) հետևյալ վերտառությամբ վերնագրերով.

- Ընդհանուր դրույթներ
- Համայնքի խնդիրների և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ընդհանուր բնութագիրը
- Համայնքի ավագանին
- Համայնքի ղեկավարը
- Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի փոխհարաբերությունները և պատասխանատվությունը
- Համայնքի ղեկավարի տեղակալը, վարչական ղեկավարը և համայնքապետարանի աշխատակազմը, համայնքային հիմնարկները և կազմակերպությունները
- Համայնքի ղեկավարի լիազորությունները
- Տեղական ինքնակառավարման առանձնահատկությունները մեծամասնական ընտրակարգով ընտրվող ավագանի ունեցող համայնքներում.
- Համայնքի սեփականությունը և տնտեսական գործունեությունը
- Համայնքի հնգամյա զարգացման ռազմավարությունը և բյուջեն
- Համայնքի տարեկան աշխատանքային պլանը և միջնաժամկետ ծախսերի ծրագիրը
- Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողությունը, ֆինանսական վերահսկողությունը և տեսչական ստուգումները
- Միջհամայնքային և անդրսահմանային համագործակցությունը
- Անցումային և եզրափակիչ դրույթներ

3. **Համամասնական ընտրակարգի անցման պայմաններում՝ դրանից բխող իրավական գործիքակազմերի սահմանման վերաբերյալ մոտեցումները**: Սրանից ենթադրվում է, որ նոր խմբագրությամբ օրենքի առաջին հինգ գլուխները հիմնված են լինելու գործող օրենքի 5-րդ գլխում սահմանված կարգավորման առարկայի տրամաբանության վրա, մասնավորապես՝ օրենքի կարգավորման հիմնական առարկան դիտարկելով համամասնական ընտրակարգով ընտրված ավագանի ունեցող և անուղղակի ընտրակարգով համայնքի ղեկավար ունեցող համայնքում տեղական ինքնակառավարման գործընթացների կազմակերպումը:

Նշվածից հետևում է, որ ամբողջությամբ նոր խմբագրությամբ են շարադրվելու համայնքի ավագանու ինստիտուտին վերաբերելի կարգավորումները՝ ավագանու ձևավորման, խմբակցությունների ստեղծման, ավագանու լիազորությունների սահմանման, մշտական և ժամանակավոր հանձնաժողովների ձևավորման, համայնքի ավագանի-համայնքի ղեկավար փոխհարաբերությունների, ավագանու առջև համայնքի ղեկավարի պատասխանատվության և այլնի մասերով:

4. **Համայնքների միավորման գործընթացի գրեթե ավարտով պայմանավորված տեղական ինքնակառավարման համակարգի ամբողջական վերանայման վերաբերյալ մոտեցումները՝** սկսած տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման գործընթացից, ավարտված վերջիններիս լիազորությունների վերաշարադրման մոտեցումներով: Այս մոտեցումը փոխկապակցված է օրենքի նոր կառուցվածքի, ավագանու և համայնքի ղեկավարի ինստիտուտների վերաշարադրման հետ: Առկա նոր իրողությունները պետք է առավելապես իրենց տեղը գտնեն օրենքի կարգավորման առարկայում, մասնավորապես շրջանակային բնույթ կրող կարգավորումների տեսքով:

Նման ինստիտուցիոնալ կարգավորումների սահմանումը հնարավորություն կընձեռի վերացնելու իրավակիրառական պրակտիկայում առաջ եկած այնպիսի դեպքեր, որոնց առնչությամբ օրենսդիրը վաղօրոք համապատասխան օրենսդրական լուծումներ չի առաջադրել: Խոսքը վերաբերում է ընտրական գործընթացներով պայմանավորված լիազորությունները չստանձնած համայնքի ղեկավար ունեցող համայնքների կառավարմանը, ընտրված սակայն դեռևս չձևավորված ավագանի ունեցող համայնքների կառավարմանը, որտեղ դատական ակտի հիման վրա անորոշ ժամկետով սահմանափակվել են ավագանու գործողությունները և վերջիններս հարկադրաբար մատնվել են անգործության, համայնքի ղեկավարի պաշտոնակատարի ինստիտուտի ամբողջական վերանայմանը և այլ կիրառական մեծ նշանակություն ունեցող հարցերին:

5. **Հաշվի առնելով Հայաստանում փոքր թվով համայնքներում մեծամասնական ընտրակարգի կիրառման պայմանները, այդ համայնքների մասով օրենքում առանձնահատկություններ սահմանելու մոտեցումները:** Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընտրական օրենսդրությունը դեռևս սահմանում է տեղական մակարդակում ընտրակարգի երկու տեսակներ, օրենքի նախագիծը պետք է դրանից ելնելով սահմանի մեծամասնական համակարգով ընտրված ավագանի ունեցող համայնքներում տեղական ինքնակառավարման առանձնահատկությունները: Այդ կարգավորումները վերաբերել են լինելու փոքր թվով համայնքներին և դրանց տեղական ինքնակառավարման մարմիններին: Այդ առանձնահատկությունները սահմանվելու են գործող օրենքի տրամաբանության լույսի ներքո, սակայն առավել համապարփակ և ընդհանրական:

6. **Լիազորությունների ապակենտրոնացման համատեքստում՝ նոր օրենքում հնարավոր ապակենտրոնացվող լիազորությունների շրջանակի սահմանման մոտեցումները և հիմնադրույթները**: Նոր խմբագրությամբ օրենքի նախագիծը մշակելիս պետք է առավելապես հաշվի առնվեն Կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N1363 որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026թթ. ինգամյա ծրագրի հավելվածի 6.6-րդ ենթաբաժնով սահմանված՝ ապակենտրոնացման ենթակա լիազորությունների

բնագավառները[25] և Հայաստանի Հանրապետությունում լիազորությունների ապակենտրոնացման հայեցակարգի[26] հիմնական դրույթները:

Նշված փաստաթղթերում տեղ գտած լիազորությունների բնագավառները և կոնկրետ ծառայություններ ենթադրող լիազորությունները, հնարավորություն կընձեռեն հստակեցնելու այն լիազորությունների ցանկը, որոնք կարող են օրենքով վերապահվել համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին՝ ապակենտրոնացման միջոցով: Միաժամանակ, օրենքի նախագծի մշակման ընթացքում, անհրաժեշտ է, որ անդրադարձ է կատարվի Հայաստանի Հանրապետությունում ֆիսկալ (հարկաբյուջետային) ապակենտրոնացման հնարավորություններին, ՀՀ ՏԿԵՆ–ՀՀ ֆինանսների նախարարություն համագործակցության համատեքստում:

7. **Համայնքների միավորման գործընթացի արդյունքներով պայմանավորված՝ տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության վերաբերյալ գործող օրենսդրական գործիքակազմերի վերանայման մոտեցումները**: Համայնքների միավորման արդյունքում համայնքի կենտրոն չհանդիսացող բնակավայրերի բնակիչները պետք է առավելապես հնարավորություն ունենան ներգրավված լինելու համայնքի կառավարման գործընթացներին, ինչի կապակցությամբ նոր խմբագրությամբ օրենքի նախագիծը պետք է սահմանի լրացուցիչ օրենսդրական գործիքակազմեր, որոնք բավարար հիմքեր և երաշխիքներ կստեղծեն բնակավայրերի բնակիչների, բնակավայրերի վարչական ղեկավարների, համայնքների ղեկավարների և համայնքապետարանների աշխատակազմերի համար՝ մասնակցային տեղական ինքնակառավարման սկզբունքի ապահովման մասով:

8. **Համայնքի պարտադիր խնդիրների վերանայման մոտեցումները**: Համայնքի պարտադիր խնդիրները առավելապես պետք է հիմնված լինեն ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածով սահմանված պետության քաղաքականության հիմնական նպատակների վրա, սակայն հաշվի առնելով Սահմանադրության 87-րդ հոդվածի այն կարգավորումները, որոնց համաձայն, տեղական ինքնակառավարման մարմինները դրանք պետք է իրականացնեն իրենց իրավասությունների և հնարավորությունների շրջանակներում:

Միաժամանակ, համայնքի պարտադիր խնդիրների շրջանակը ենթակա է վերանայման այն պատճառով, որ համայնքի ղեկավարին վերապահված բազմաթիվ սեփական լիազորություններ իրենց հիմքում որևէ պարտադիր խնդիր չունեն, այս դեպքում, ըստ էության խախտվում է ՀՀ Սահմանադրության 182-րդ հոդվածով սահմանված կարգավորման

[25] Տե՛ս Կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N1363 որոշման հավելվածը:

[26] Տե՛ս ՀՀ վարչապետի 2023 թվականի նոյեմբերի 7-ի N 1111-Ա որոշում:

էությունը, որի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունները միտված են լուծելու համայնքի պարտադիր և կամավոր խնդիրները: Ընդհանուր առմամբ՝ պետք է համայնքի պարտադիր խնդիրները և համայնքի ղեկավարի սեփական լիազորությունները համապատասխանեցվեն իրար հետ:

9. **Համայնքի ՏԻՄ-երի սեփական լիազորությունների շրջանակի ամբողջությամբ նոր խմբագրությամբ շարադրելու վերաբերյալ մոտեցումները**: Հարակից ոլորտային օրենքներում տեղ գտած բազմաթիվ լիազորություններ սահմանված են լիազորությունների բացառիկության և լիարժեքության սկզբունքների կոպիտ խախտումներով, ինչպես նաև որևէ կերպ չեն նախանշում տվյալ լիազորության կատարումից բխող շահակիր սուբյեկտի իրավունքների և պարտականությունների հնարավոր շրջանակը: Միաժամանակ, գործող «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում առկա են բազմաթիվ լիազորություններ, այդ թվում և պետության կողմից պատվիրակված, որոնք ենթակա են վերանայման, վերաշարադրման, ինչպես նաև ուժը կորցրած ճանաչելու:

10. **Համայնքների միավորման գործընթացի արդյունքներով պայմանավորված, բազմաբնակավայր համայնքների կազմում ընդգրկված բնակավայրերի վարչական ղեկավարի լիազորությունների վերանայման վերաբերյալ մոտեցումները**: Բնակավայրի վարչական ղեկավարը բնակավայրում հանդես է գալիս համայնքի ղեկավարի անունից: Իրավակիրառական պրակտիկայում, բնակավայրերի բնակիչները հանդիպում են տարբեր խոչընդոտների, մասնավորապես՝ պետական մարմինների և կազմակերպությունների հետ մասնավոր վարչական և քաղաքացիաիրավական փոխհարաբերությունների մասով, որոնց հիմքում ընկած են վարչական ղեկավարների կողմից տրամադրված պաշտոնական գրությունների և տեղեկանքների իրավաբանական տեսանկյունից ընդունելի կամ ոչ ընդունելի լինելու հետ կապված հարցերը: Գտնում ենք, որ նոր խմբագրությամբ օրենքի նախագծում անհրաժեշտ է առավել մանրամասնորեն ներկայացնել վարչական ղեկավարի լիազորությունների և գործառույթների շրջանակը, դրանք համապատասխանեցնելով իրավակիրառական պրակտիկայում վերջիններիս կողմից իրականացվող գործունեության շրջանակների հետ:

11. **Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի, միջնաժամկետ ծախսերի ծրագրերի և համայնքի տարեկան աշխատանքային պլանի վերաբերյալ իրավանորմերի սահմանման կառուցվածքային վերադասավորումների և փոփոխությունների վերաբերյալ մոտեցումները**: Նոր խմբագրությամբ օրենքի նախագծում հստակ պետք է սահմանվեն համայնքի կողմից տնտեսական գործունեություն նախաձեռնելու, կազմակերպելու և իրականացնելու հետ կապված օրենսդրական գործիքակազմերը, դրանց արդյունքում համայնքի բյուջեում սեփական եկամուտների գեներացման հետ կապված կարգավորումները: Համայնքի տա-

րեկան աշխատանքային պլանին և միջնաժամկետ ծախսային ծրագրերին անհրաժեշտ է օրենքի նախագծում նվիրել առանձին գլուխ, որը հնարավորություն կընձեռի նախ՝ կանոնակարգելու իրավանորմերի շարադրանքը և հերթականությունը, ապա նաև կարևորելու այս երկու փաստաթղթերի դերն ու նշանակությունը համայնքի կայուն զարգացման, պլանավորման, արդյունավետ կառավարման և այլնի համատեքստում: Միաժամանակ, համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը, որպես երկարաժամկետ ռազմավարական զարգացման բնույթի փաստաթուղթ, անհրաժեշտ է, որպեսզի վերանվանվի համայնքի հնգամյա զարգացման ռազմավարություն՝ իրենից բխող առանձնահատկությունների սահմանման համատեքստում:

12. **Համայնքի ՏԻՄ-երի գործունեության նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության (վարչական վերահսկողություն) առկա կարգավորումներում փոփոխություններ կատարելու վերաբերյալ մոտեցումները:** Գործող օրենքի կարգավորումները ունեն որոշակի հակասություններ ՀՀ Սահանադրության 188-րդ հոդվածի սահմանադրական իրավանորմերի հետ, որի կապակցությամբ նոր խմբագրությամբ օրենքի նախագծում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողության իրականացումը պետք է վերապահվի բացառապես տեղական ինքնակառավարման բնագավառի պետական լիազոր մարմնին: Միաժամանակ, հիմք ընդունելով վերը մեջբերված սահմանադրական իրավանորմի պահանջները, նոր խմբագրությամբ օրենքում առաջարկվում է հնարավորինս շրջանակային բնույթ կրող կարգավորումների ձևաչափով սահմանվեն այն դեպքերն ու կարգը, որոնց պարագայում պետք է իրականացվի իրավական և մասնագիտական հսկողությունը:

Իրավակիրառական պրակտիկայում բազմաթիվ են դեպքերը, երբ համայնքների տեղական ինքնակառավարման մարմինները անտեղյակ են տեսչական ստուգումների շրջանակների և իրավական գործիքակազմերի մասին, որի հիմնական պատճառներից մեկը հիմնական օրենքում տեսչական ստուգումների մասով կարգավորումների բացակայությունն է: Նոր խմբագրությամբ օրենքի նախագիծը առնվազն պետք է սահմանի այն տեսչական մարմինների շրջանակը և գործունեության ոլորտները[27], որոնք փոխհարաբերվում են համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների հետ: Այդ կապակցությամբ տեսչական մարմինների գործունեության հետ կապված օրենսդրական ակտերը ևս պետք է ուսումնասիրվեն և անհրաժեշտության դեպքում համապատասխանեցվեն տեղական ինքնակառավարման ոլորտը կարգավորող հիմնական օրենքին:

[27] Տե՛ս «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքը:

13. **Միջհամայնքային համագործակցության նոր ձևաչափեր օրենքով սահմանելու հնարավոր մոտեցումները** և այլն: Սահմանադրությունը ամրագրել է կարգավորումներ միջհամայնքային միավորումների ինստիտուտի մասով, որի հիման վրա գործող օրենքը ևս առանձին գլուխ է նվիրել միջհամայնքային միավորումներին: Սակայն, հարկ է նկատել, որ Սահմանադրությամբ այլ միջհամայնքային համագործակցության ձևաչափերին անդրադարձ չկատարելը դեռևս հիմք չէ, կամ արգելք չէ օրենքով միջհամայնքային համագործակցության այլ հնարավոր եղանակներ սահմանելու համար:

Հիմք ընդունելով առաջավոր եվրոպական լավագույն փորձը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված իրավական հնարավորությունները, անհրաժեշտ է, դրանց հիման վրա նոր խմբագրությամբ օրենքի նախագծում սահմանել ոչ միայն միջհամայնքային միավորումները այլև առհասարակ միջհամայնքային համագործակցությունը: Այն հնարավորություն կընձեռի համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին լինել ավելի ճկուն, առավել մատչելի իրավական ճանապարհներով ձևավորելով և իրականացնելով միջհամայնքային համագործակցություններ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունում ջանքեր են գործադրվում անդրսահմանային համագործակցության ինստիտուտի ակտիվացման և զարգացման ուղղությամբ, հատկանշական է և կարևոր, միջհամայնքային համագործակցության համատեքստում դիտարկել նաև անդրսահմանային համագործակցության բաղադրիչը: Այս իմաստով, առաջարկվում է օրենքի նախագծում համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների համար սահմանել լիազորություններ, որոնք հնարավորություն կընձեռեն վերջիններիս նախաձեռնել, կազմակերպել և իրականացնել անդրսահմանային համագործակցություններ:

Օրենքով նման լիազորությունների սահմանում էականորեն կխթանի Հայաստանի համայնքների և գործընկեր պետությունների համայնքների միջև համագործակցությունը, ինչն իր հերթին կհանգեցնի տարածքների միջև համագործակցության զարգացմանը, որի լավագույն փորձը առկա է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման մարմինների և այլ երկրների տարածքային կառավարման մարմինների միջև:

14. **«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքին սահմանադրական օրենքի կարգավիճակ տալու իրավակիրառական անհրաժեշտությունը** (ՀՀ Սահմանադրության հնարավոր փոփոխությունների իրականացման համատեքստում): Գտնում ենք, որ օրենքի սահմանադրական օրենքի կարգավիճակ տալը ոչ միայն ինստիտուցիոնալ, այլև իրավակիրառական անհրաժեշտություն է: Սահմանադրական օրենքի կարգավիճակ ստանալու դեպքում, հարակից օրենքներով համայնքների տեղական

ինքնակառավարման մարմիններին լիազորություններ վերապահելը կդառնա ավելի դժվար, ինչը կհանգեցնի տեղական ինքնակառավարման համակարգի ինստիտուցիոնալ կայունության:

15. **Կառավարության և համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների միջև խորհրդակցական գործիքակազմերի ներդրումը**: Տեղական մարմինների հետ խորհրդակցելու անհրաժեշտությունը, որպես տեղական մարմինների իրավունք և տեղական ժողովրդավարության հիմնաքար, ամրագրված է Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի 4.6, 5 և 9.6 հոդվածներում[28]: Տեղական մարմինների այս իրավունքն իր հետագա մանրամասնեցումն է ստացել հետևյալ փաստաթղթերում.

Տեղական և տարածքային մարմինների կոնգրեսի թիվ 171(2005) հանձնարարականը Տեղական մարմինների հետ խորհրդակցության վերաբերյալ[29], որը, հաշվի առնելով, որ լավ կառավարմանը նպաստելու նպատակով տեղական մարմինների հետ խորհրդակցությունը պետք է համարվի քաղաքականությունների մշակման և վարչական գործընթացների պարտադիր մասը, հնարավոր դարձնելով տեղական մարմինների կարծիքի վերհանումը ճիշտ ժամանակին և դրանց հաշվի առնումը կենտրոնական և տարածքային մարմինների կողմից որոշումներ կայացնելիս.

Տեղական և տարածքային մարմինների կոնգրեսի թիվ 328(2012) հանձնարարականը Տեղական մարմինների՝ կառավարության տարբեր մակարդակների կողմից խորհրդակցված լինելու իրավունքի վերաբերյալ[30], որն անդամ պետություններին կոչ է անում ապահովել, որ բոլոր անդամ պետությունները ազգային, տարածքային և տեղական մակարդակներում իրականացնեն, իսկ անհրաժեշտության դեպքում՝ մշակեն հստակորեն սահմանված և թափանցիկ խորհրդակցական գործընթացներ կամ վերանայեն դրանք՝ Խարտիայի համապատասխան դրույթներում ամրագրված չափանիշներին համապատասխան, հստակեցնելով այդ խորհրդակցությունների ձևաչափը, տեղական և տարածքային մարմինների ներկայացուցիչների մասնակցության մակարդակը, խորհրդակցությունների ժամանակացույցը և վերաբերելիությունը տեղական ու տարածքային մարմինների շահերին առնչվող բոլոր հարցերին.

Տեղական և տարածքային մարմինների կոնգրեսի թիվ 347(2012) բանաձևը Տեղական մարմինների՝ կառավարության տարբեր մակարդակների կողմից խորհրդակցված լինելու իրավունքի վերաբերյալ[31], որը կոչ է անում անդամ պետությունների տեղական և տարածքային մարմիններին ժամանակին տեղեկացնել իրենց միավորումներին այն

[28] http://www.parliament.am/library/bazmakoxm/94.pdf
[29] https://rm.coe.int/09000016808b8885
[30] https://search.coe.int/congress/Pages/result_details.aspx?ObjectId=090000168071a705
[31] https://search.coe.int/congress/Pages/result_details.aspx?ObjectId=09000016807196d5

հարցերի մասին, որոնց հետ կապված իրենց կարծիքով միավորումները իրենց անունից կարող են գործել կառավարման տարբեր մակարդակների հետ խորհրդակցություններում:

Տեղական և տարածքային մարմինների կոնգրեսի թիվ 368(2014) բանաձևը[32], որը սահմանում է Տեղական մարմինների՝ կառավարման տարբեր մակարդակների կողմից խորհրդակցվելու իրավունքի վերաբերյալ ռազմավարությունը և կոչ է անում տեղական ու տարածքային մարմինների միավորումներին աշխատանք տանել ռազմավարության լավագույնս իրականացման ապահովման ուղղությամբ:

Հայաստանում կենտրոնական մարմինների կողմից տեղական մարմինների հետ վերջիններիս առնչվող քաղաքականությունների և օրենսդրական ակտերի նախագծերի վերաբերյալ խորհրդակցության մեխանիզմները, ըստ էության, իրավական կարգավորման չեն ենթարկվել: Այդ մեխանիզմների օրենսդրական սահմանումը պետք է հիմնվի Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի դրույթների, Տեղական և տարածքային մարմինների կոնգրեսի թիվ 351(2014) հանձնարարականի, ԵԽ Տեղական եւ տարածքային իշխանությունների կոնգրեսի եւ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միջեւ 2015թ. ստորագրված «Հետմոնիտորինգային ճանապարհային քարտեզում» ամրագրված պարտավորությունների վրա:

Հաշվի առնելով ԵԽ Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի վերը թվարկված փաստաթղթում ներկայացված հանձնարարականներն ու բանաձևերը, ինչպես նաև եվրոպական երկրների փորձը կենտրոնական և տեղական մարմինների միջև խորհրդակցական մեխանիզմների վերաբերյալ , ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման ոլորտում իրականացվող՝ ապակենտրոնացմանն ուղղված բարեփոխումների համատեքստը՝ խորհրդակցական մեխանիզմների ֆորմալիզացիան և ինստիտուցիոնալիզացիան ձեռք է բերում առաջնային նշանակություն:

Կարևորելով Հայաստանի Հանրապետության համայնքների իրավունքների պաշտպանության և ընդհանուր շահերի ներկայացման անհրաժեշտությունը պետական մարմինների հետ հարաբերություններում, առաջարկվում է օրենքի նախագծում սահմանել համապատասխան խորհրդակցական գործիքակազմեր ենթադրող իրավակարգավորումներ, որոնք հնարավորություն կընձեռեն համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին և ոլորտում գործունեություն իրականացնող ասոցացիաներին՝ պետական մարմինների հետ քննարկումների արդյունքում ձևակերպել առանձին և ընդհանրական դիրքորոշումներ՝ տեղական ինքնակառավարման բնագավառում մշակվող քաղաքականության վերաբերյալ:

[32] https://search.coe.int/congress/Pages/result_details.aspx?ObjectId=0900001680718a05

16. **Համայնքային ծառայողների վերապատրաստման համակարգի ներդրում ինստիտուցիոնալ մակարդակում:** Օրենքի նախագծի մշակման ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել համայնքային ծառայության վերապատրաստման համակարգի ներդրման իրավական անհրաժեշտությունը, որն ըստ էության պետք է իրականացվի հարակից օրենքներում, մասնավորապես՝ «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով: Նման օրենսդրական կարգավորումների սահմանումը հնարավորություն կընձեռի առավել կազմակերպված և կանոնակարգված մոտեցում ցուցաբերել համայնքային ծառայության վերապատրաստումների կարևոր ենթահամակարգին, որն տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքապետարանների կարողությունների զարգացման տեսանկյունից ունի կարևոր նշանակություն:

Միաժամանակ, առաջարկվում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը նոր խմբագրությամբ շարադրելու դեպքում անդրադառնալ համայնքապետարանների հաստիքացուցակների մշակման, սահմանման և հաստատման գործող օրենսդրական կարգավորումներին, նպատակ ունենալով ազատակացնել համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների ինքնուրույնությունը, նախադրյալներ ստեղծելով վերջիններիս սեփական պատասխանատվությամբ մոտենալու այդ հարցերին՝ աշխատակազմերի ձևավորման հարցերում:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը նոր խմբագրությամբ շարադրելու համատեքստում անհրաժեշտություն է առաջանալու անդրադառնալու հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու իրավական և կիրառական անհրաժեշտությանը, ինչը բխում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համակարգմամբ իրականացված մի շարք իրավական և իրավահամեմատական վերլուծությունների արդյունքներից:

Նշվածից ենթադրվում է, որ «Տեղական ինքնակառավարման մասին» նոր խմբագրությամբ օրենքի նախագիծը ունենալու է բավականին ընդգրկուն հարակից օրենքների նախագծերի փաթեթ, որով փորձ է արվելու այլ օրենքներում առկա հակասական իրավակարգավորումները համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման մասով ընդունելի դարձած մոտեցումներին, ՀՀ Սահմանադրության և Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի կարգավորումներին և իհարկե՝ «Տեղական ինքնակառավարման մասին» նոր խմբագրությամբ օրենքի նախագծի կարգավորման առարկային, սկզբունքներին, բնույթին և էությանը:

«Տեղական ինքնակառավարման մասին» նոր խմբագրությամբ օրենքի նախագծից զատ, հարակից օրենքներում լայնամասշտաբ փոփոխությունների իրականացումը բխում է համայնքների և դրանց տեղական

ինքնակառավարման մարմինների իրավունքներից և օրինական շահերից, որոնց մասով ՀՀ ներպետական օրենսդրությունը սահմանել է համապատասխան սահմանադրական և օրենսդրական երաշխիքներ:

«Տեղական ինքնակառավարման մասին» նոր խմբագրությամբ օրենքի նախագծի մշակման ընթացքում, անհրաժեշտություն է առաջանալու համալիր կարգով, անդրադառնալ նաև «Տեղական տուրքերի և վճարների մասին», «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքներում և տեղական ինքնակառավարման ոլորտը կարգավորող այլ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելուն: Ընդհանուր առմամբ, նշված օրենքներում նախատեսվող փոփոխությունները և լրացումները պետք է իրականացվեն նոր խմբագրությամբ օրենքի նախագծի մշակման աշխատանքներին զուգահեռ, կամ դրա արդյունքում:

Առաջարկվում է ՀՀ կառավարությանը, ի դեմս տեղական ինքնակառավարման բնագավառի պետական լիազոր մարմնի, ինչպես նաև ՀՀ Ազգային Ժողովի տեղական ինքնակառավարման հարցերով գլխադասային հանձնաժողովին, սույն հոդվածում ներկայացված մոտեցումները հաշվի առնել նոր խմբագրությամբ օրենքը շարադրելու ընթացքում: Դրանում ներառված եզրահանգումներն ու առաջարկությունները կարող են ունենալ հիմնարար նշանակություն «Տեղական ինքնակառավարման մասին» նոր խմբագրությամբ օրենքի նախագծի մշակման գործընթացներում:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հոդվածը նվիրված է տեղական ինքնակառավարման ոլորտը կարգավորող հիմնական օրենքի՝ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի ինստիտուցիոնալ և իրավակիրառական հիմնախնդիրներին, օրենքը նոր խմբագրությամբ շարադրելու և ընդունելու իրավական անհրաժեշտությանը: Հոդվածի նպատակն է, Հայաստանում տեղի ունեցած վարչատարածքային և ընտրական բարեփոխումների համատեքստում, ուսումնասիրել, բացահայտել և վեր հանել տեղական ինքնակառավարման ոլորտը կարգավորող ներպետական օրենսդրության խնդիրների հիմնական շրջանակը, իրավակիրառական պրակտիկան, ներկայացնելով համապատասխան առաջարկություններ, որոնք կարող են դիտարկվել որպես «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը նոր խմբագրությամբ շարադրելու հայեցակարգային դրույթներ և մոտեցումներ:

Հիմնաբառեր. միջհամայնքային համագործակցություն, համայնքային ծառայող, իրավական հսկողություն, մասնագիտական հսկողություն, հաշվեքննություն, տեսչական ստուգումներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. ՀՀ Սահմանադրություն (2015թ. փոփոխություններով), (www. arlis.am)
2. «Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիա», ընդունվել է 15.10.1985թ., (www. arlis.am)
3. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ընդունվել է 05.05.1998թ., (www. arlis.am)
4. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, ընդունվել է 07.05.2002թ., (www. arlis.am)
5. «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք
6. «Հայաստանի Հանրապետությունում լիազորությունների ապակենտրոնացման հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի 2023 թվականի նոյեմբերի 7-ի N 1111-Ա որոշում
7. ՀՀ քաղաքացիական դատավարություն, դասագիրք/Ռ.Գ.Պետրոսյան, Չորրորդ հրատարակություն.-Երևան, Ոսկան Երևանցի հրատարակչություն, 2012թ.:
8. ՀՀ մունիցիպալ իրավունք, ուսումնական ձեռնարկ, ընդհ. խմբ. Գ.Դանիելյանի, Երևան, ԵՊՀ հրատարակություն 2015թ.
9. Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածքային մարմինների կոնգրեսի թիվ 368(2014) բանաձևը
10. Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածքային մարմինների կոնգրեսի թիվ 347(2012) բանաձևը Տեղական մարմինների՝ կառավարության տարբեր մակարդակների կողմից խորհրդակցված լինելու իրավունքի վերաբերյալ:

ПРАВОВАЯ НЕОБХОДИМОСТЬ СОСТАВЛЕНИЯ ЗАКОНА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ "О МЕСТНОМ САМОУПРАВЛЕНИИ" В НОВОЙ РЕДАКЦИИ И СИСТЕМАТИЧЕСКИЕ ПОДХОДЫ К ЕГО ПРИНЯТИЮ

Петросян Ваагн

Статья посвящена институционально-правовым вопросам применения основного закона, регулирующего сферу местного самоуправления, «Закона о местном самоуправлении», правовой необходимости разработки и принятия закона в новой редакции. Цель статьи - в контексте произошедших в Армении административно-территориальных и избирательных реформ изучить, выявить и осветить основные рамки проблем отечественного законодательства, регулирующего сферу местного самоуправления, юридической практики, представляющей соответствующие рекомендации, которыми можно считать Закон РА «О местном самоуправлении» в новой редакции. Концептуальные положения и подходы изложены.

Ключевые слова: межобщинное сотрудничество, общественные работы, юридический надзор, профессиональный надзор, проверки.

LEGAL NECESSITY FOR DRAFTING THE LAW OF THE REPUBLIC OF ARMENIA "ON LOCAL SELF-GOVERNMENT" IN A NEW EDITION AND SYSTEMATIC APPROACHES TO ITS ADOPTION

Vahagn Petrosyan

The article is devoted to the institutional and legal issues of application of the basic law regulating the sphere of local self-government, the "Law on Local Self-Government", the legal need for the development and adoption of the law in a new edition. The purpose of the article is, in the context of the administrative-territorial and electoral reforms that have taken place in Armenia, to study, identify and highlight the main framework of the problems of domestic legislation regulating the sphere of local self-government, legal practice, presenting relevant recommendations, which can be considered the RA Law "On Local Self-Government" in the new edition . Conceptual provisions and approaches are outlined.

Keywords: intercommunity cooperation, public works, legal supervision , professional supervision, inspections.

Ներկայացվել է՝ 14,.10.2023 թ.
Ընդունվել է՝12.11.2023 թ.

PECULIARITIES OF ENTREPRENEURSHIP

Shaik Adil Reaz
MBM Student, Northern University
adilreaz@gmail.com

Abstract

This research consists of extensive literature review conducted since 2000 on the peculiarities of entrepreneurship. Firstly, the main peculiarities like the Big-5 model, innovativeness, point of control and self-efficacy. Many fields, such as the relationship between entrepreneurial peculiarities and business success, are poorly understudied and have the potential to make significant strides when the right cross-disciplinary components are brought together. Later the risk attitudes, goals and aspirations are discussed to compare the outcomes of such peculiarities in new and old entrepreneurs. This body of research demonstrates both consensus and divergent viewpoints, illustrating the diverse character of entrepreneurship.

Key Words: *Entrepreneurs, peculiarities, characteristics, Big-5, risk attitudes, success, goals, self-efficacy, innovativeness*

Introduction

Everyone is fascinated by the business owners who launch new companies and initiatives. There is constant, rigorous study being done on novel approaches to forming new enterprises, from the United States to China. Naturally, there has always been a fascination with entrepreneurs. Research on what motivates them and whether their characteristics affect the success of their business' dates to the 18th century. The literature currently covers a wide range of topics and has introduced several ideas and techniques for analyzing entrepreneurial traits. These studies have frequently concentrated on high-growth environments where entrepreneurs face a high likelihood that their ventures will fail, a very low likelihood of extremely favorable outcomes, and a potentially low average return on the time and money they invest in their ventures.

Research results

In a seminal piece published thirty years ago, Gartner (1988) argued against the focus on entrepreneurial personality traits and in favor of examining the emergence of organizations. Gartner preferred to concentrate on a definition of entrepreneurship that stressed the functional creation of new organizations and disapproved of the various definitions being used. To identify the "ideal" personality for entrepreneurial success, Gartner also questioned the methods of gathering characteristics of entrepreneurs through surveys.

This study is focused on three main goals (1) the peculiarities of entrepreneurship, (2) the attitude of entrepreneurs and (3) the goals and targets entrepreneurs' exhibit. These goals allow for the identification of common concerns across seemingly distinct research streams, while also covering most of the main theoretical contributions to the literature on entrepreneurial peculiarities, which is quite diverse.

Personal peculiarities

Who is an entrepreneur? Why do they do it? What distinguishes them? The first few decades were fraught with conceptual difficulties as scientists worked to establish reliable theoretical frameworks and suitable measurement instruments. Due to the contradiction in the literature, some researchers concluded that personality and entrepreneurship had no relationship in the 1980s (e.g., Brockhaus and Horwitz, 1986; Gartner, 1988). However, the entrepreneurial personality literature has experienced a resurgence and convergence towards an increasingly consistent set of theoretical frameworks, with significant insights towards innovation policy and business education, since the beginning of the twenty-first century and with the notable rise in public and intellectual fascination with startup culture. Most recent research aims to address two primary questions: (1) Do characteristics influence someone's probability of starting their own business? (2) Do certain characteristics influence an entrepreneur's probability of attaining "successful" results? To find the answers, researchers investigate the personality traits that entrepreneurs have more often than people in other demographics. They also examine how these traits relate to entrepreneurial performance factors like business growth and survival (e.g., Baron, 2004).

Big-5 model

A psychological research model known as the Big Five personality (extraversion, agreeableness, conscientiousness, emotional stability, and openness to experience) focuses on a particular tendency reflected by individual psychological characteristics. According to John et al. (2008, p. 138), the five "macro traits" encompass a unique set of attributes:

- Conscientiousness: describes socially prescribed impulse control that supports task- and goal-oriented behavior.
- Extraversion: implies an energetic approach towards the social and material world and includes traits like sociability, activity, assertiveness, and positive emotionality. Openness to experience describes the breadth, depth, originality, and complexity of an individual's mental and experimental life.
- Neuroticism: contrasts negative emotionality, such as feeling tense, sad, anxious, or nervous, with positive emotionality, such as emotional

stability and even-temperedness. Agreeableness includes qualities like altruism, tendermindedness, trust, and modesty.



Figure 1 Big-5-Model [6]

Researchers have shifted their focus towards developing a multidimensional 13 personality framework that incorporates additional qualities like self-efficacy, innovativeness, locus of control, and need for achievement. They are frustrated by the limitations of the Big-5 framework in describing a coherent portrait of the entrepreneur.

Self-Efficacy and Innovativeness

According to Cassiar and Friedman (2009), self-efficacy is a person's "belief that he/she can perform tasks and fulfil roles, and is directly related to expectations, goals, and motivation." Either generalized self-efficacy or domain-specific Entrepreneurial Self-Efficacy (ESE) are the two levels of specificity at which self-efficacy is measured. The ESE measure, which is more situation-relevant, is the focus of most research. Cassar and Friedman (2009) confirm in a longitudinal study that individuals with high ESE are more likely to be early adopters and successful founders. It is important to acknowledge the limitations of this literature. This is a significant caution that needs to be addressed given the high potential for endogenous ESE.

Locus of control

Rotter (1954) first introduced the concept of LOC in his theory of social learning. Individuals with internal locus of control (LOC) feel that their own abilities, efforts, or skills can affect results rather than external factors dictating these results. LOC is regarded as a characteristic that depends on culture. According to Caliendo et al. (2014), one of the personality traits that most accurately predicts an entrepreneur's decision to enter or leave the business is internal LOC. However, Lee and Tsang (2001)

point out that in their sample, personality traits are not as significant in explaining firm growth as industrial and managerial experience and skills are. In general, there is a lot of support for the LOC personality trait, which is fairly consistent among different kinds of entrepreneurs.



Figure 2: General Model of Entrepreneurship [12]

Need for Achievement

The need for achievement is the drive within a person to accomplish noteworthy tasks, gain proficiency in new abilities, and reach difficult objectives. A person's drive for notable accomplishment, skill mastery, and reaching difficult objectives is referred to as their "need for achievement." However, Frank et al. (2007) contend that environmental resources and numerous "process configurations" (such as the collection of management functions including planning, organisation, and human resource practises) are far more relevant in explaining how entrepreneurs succeed than the need for achievement along with additional personality characteristics.

Moderating traits and environment

Scholars across all fields often report how personality traits interact with or are moderated by other personal characteristics (like gender or education) and environmental factors (like industry dynamics or city characteristics). In surveys about autonomy, risk propensity, and LOC, techno-entrepreneurs from the United Kingdom performed better than techno-entrepreneurs from Switzerland in terms of achievement need, tolerance for ambiguity, innovativeness, and confidence. The rate of unexpected change within a particular industry is how the researchers define

environmental dynamism, drawing on the theories of Dess and Beard (1984) and Sharfman and Dean (1991). Scholars in certain fields (economics, comparatively infrequently) go beyond examining interactions to create "a complex process model of the entrepreneur," wherein the connections between these variables are delineated and ultimately determine the success of the venture. To demonstrate this procedure, the diagram that follows is taken from Frese (2009) and Brandstätter (2011).

Risk Attitudes

Risk and entrepreneurship have long been discussed. Knight (1921) suggests that what sets entrepreneurs apart from others is their keen ability to recognise and seize opportunities in the face of uncertainty and risk. Every application of the idea aims to address the question of whether a person's personality makes them more likely to accept the hazardous circumstances of entrepreneurship and what effect this trait has on results. Because they like competitive environments or because they overestimate their own abilities in comparison to competitors, entrepreneurs may enter markets that are highly competitive and have little chance of success. Interestingly, Holm et al. (2013) take a similar approach and discover that, even if they do not place first, Chinese entrepreneurs are more likely to participate in skill-based competitions. This finding suggests that, regardless of overconfidence, entrepreneurs may be more generally drawn to competition. In summary, research offers specific theories explaining why overconfidence and optimism are common among entrepreneurs, as well as why these characteristics may be detrimental to their effectiveness.

Overall, this area of the literature is more developed and cohesive than many other areas of the research on entrepreneurial characteristics, even though there is still much room for additional investigation and the refinement of findings.

Goals and aspirations

However, when launching and running their businesses, different entrepreneurs have very different objectives, and this will affect many of the choices made and results encountered. The work to investigate non-financial motivations ("be my own boss") for starting businesses has seen a surge of influential activity within the economics literature, which is a bright spot, if controversial.

Conclusion

The study of entrepreneurs' personalities and psychological peculiarities is crucial for understanding entrepreneurship in a variety of contexts, such as determining factors that influence career choice (entrepreneurship vs. paid work), predicting entrepreneurial success, assessing the impact of entrepreneurship policies, and developing and evaluating various entrepreneurship education programmes. Studies on the personalities of entrepreneurs

are mixed, which is not surprising since they are a very diverse group of people. It is also more difficult to have a linear, chronologically progressive research dialogue due to the sheer number of journals publishing research on entrepreneurial characteristics and the stark differences in academic field and quality among them. It's not always clear from the literature whether people who possess a certain set of personality traits are predisposed to become entrepreneurs or if those traits emerge naturally after becoming entrepreneurs.

References

1. Baron, R.A. (2004). The cognitive perspective: A valuable tool for answering entrepreneurship's basic “why” questions. Journal of Business Venturing, 19(2), 221-239.
2. Brockhaus, R.H. & P.S. Horwitz. (1986). The psychology of the entrepreneur. In D. Sexton & R. Smilor (Eds.), The Art and Science of Entrepreneurship. Ballinger Publishing Company, Pensacola, FL, 25-48.
3. Caliendo, M., F.M. Fossen & A.S. Kritikos. (2009). Risk attitudes of nascent entrepreneurs–new evidence from an experimentally validated survey. Small Business Economics, 32(2), 153-167.
4. Caliendo, M., F.M. Fossen & A.S. Kritikos. (2010). The impact of risk attitudes on entrepreneurial survival. Journal of Economic Behavior and Organization, 76(1), 45-63.
5. Caliendo, M., F.M. Fossen & A.S. Kritikos. (2014). Personality characteristics and the decisions to become and stay self-employed. Small Business Economics, 42(4), 787-814.
6. Cassar, G. & H. Friedman. (2009). Does self-efficacy affect entrepreneurial investment? Strategic Entrepreneurship Journal, 3, 241–260.
7. Dess, G.G. & D.W. Beard. (1984). Dimensions of organizational task environments. Administrative Science Quarterly, 52-73.
8. Frank, H., M. Lueger & C. Korunka. (2007). The significance of personality in business startup intentions, startup realization and business success. Entrepreneurship & Regional Development, 19(3), 227- 251.
9. Frese, M. (2009). Towards a psychology of entrepreneurship: An action theory perspective. Foundations and Trends in Entrepreneurship, 5, 437-496.
10. Gartner, W.B. (1985). A conceptual framework for describing the phenomenon of new venture creation. Academy of Management Review, 10, 696-706.
11. Gartner, W.B. (1988). Who is an entrepreneur? Is the wrong question. American Journal of Small Business, 12(4), 11-32.
12. Holm, H.J., S. Opper & V. Nee. (2013). Entrepreneurs under uncertainty: An economic experiment in China. Management Science, 59(7), 1671-1687.

13. John, O.P., L.P. Naumann & C.J. Soto. (2008). Paradigm shift to the integrative big five trait taxonomy: history, measurement, and conceptual issues.
14. Knight, F. (1921). Risk, Uncertainty, and Profit. Houghton Mifflin Co., Boston, MA.
15. John, R.W. Robins & L.A. Pervin (Eds.). Handbook of Personality: Theory and Research. Guilford Press, New York, 114-158.
16. Rotter, J.B. (1954). Social Learning and Clinical Psychology. Prentice Hall, Englewood Cliffs, NJ
17. Lee, D.Y. & E.W. Tsang. (2001). The effects of entrepreneurial personality, background and network activities on venture growth. Journal of Management Studies, 38(4), 583-602.
18. Sharfman, M. P., & J.W. Dean. (1991). Conceptualizing and measuring the organizational environment: A multidimensional approach. Journal of Management, 17(4), 681-700.

ԱՐԴԻ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Շեյք Ադիլ Ռեյազ
Կառավարման մագիստրոս, Հյուսիսային համալսարան
adilreaz@gmail.com

Հետազոտությունը հիմնված է 2000 թվականից ի վեր ձեռնարկատիրության առանձնահատկությունների վերաբերյալ հրատարակված գրականության ուսումնասիրությունների վրա՝ հատկապես թիրախավորելով ձեռնարկատիրական առանձնահատկություններ, առնչվող Big-5 մոդելին, նորարարություններին, վերահսկման կետին և ինքնաարդյունավետությանը: Գործնականում հաճախ են հանդիպում իրավիճակներ, երբ խորը դիտարկումների չի ենթարկվում ձեռնարկատիրական յուրահատկությունների և բիզնեսի հաջողության միջև կապը: Այս առումով, հոդվածում քննարկվում են ձեռնարկատիրության նկատմամբ ռիսկային վերաբերմունքը, նպատակներն ու ձգտումները՝ համեմատելով դրանք ստեղծարար ձեռներեցների ավանդական գործարարների շրջանում: Հատկապես մեկնաբանվում են Big-5 մոդելի բաղադրիչները, ընդգծելով արդի ժամանակահատվածում ձեռնարկատիրական գործունեության առանցքային առանձնահատկությունները:

Հիմնաբառեր - ձեռնարկատերեր, գործարարության բնութագրիչներ, Մեծ-5 մոդել, ռիսկային վերաբերմունք, գործարարության հաջողություններ, նպատակներ, ինքնարդյունավետություն, նորարարություն

ХАРАКТЕРИСТИКИ СОВРЕМЕННОГО ПРЕДПРИНИМАТЕЛЬСТВА

Шейк Адиль Раяз

Магистр менеджмента, Северный университет
adilreaz@gmail.com:

Исследование основано на обзоре литературы по предпринимательским характеристикам с 2000 года, в частности, ориентированной на предпринимательские характеристики, связанные с моделью «большой пятерки», инновациями, контроля и само эффективностью. На практике часто встречаются ситуации, когда связь между предпринимательскими качествами и успехом в бизнесе не подлежит глубокому наблюдению. В связи с этим в статье рассматривается отношение к риску, цели и стремления к предпринимательству, сравнивая их с традиционными бизнесменами и креативными предпринимателями. Особо трактуются компоненты модели «Большой пятёрки», выделяя ключевые особенности предпринимательской деятельности в современный период.

Ключевые слова: предприниматели, характеристики бизнеса, модель «Большой пятерки», отношение к риску, успех в бизнесе, цели, само эффективность, инновации.

Ներկայացվել է՝ 13,.11.2023 թ.
Ընդունվել է՝ 25.11.2023 թ.

Ընկերոջս հիշատակին

Ասում են՝ լիարժեք ընկերությունը տևում է մի ամբողջ կյանք՝ համերաշխ հարաբերությունների և քաղցրաբույր հաղորդակցումների զուգորդումներով: Բայց իմ և Մանթաշ Մակիչյանի ընկերության պարագայում այդպես չեղավ: Զարմանալիորեն ընկերություն էինք անում «փոխադարձ մեղադրանքներով»՝ մշտապես բանավիճելով մանթաշյան չափից դուրս մեծահոգության և ճուղուրյանական եսասիրության թեմաների շուրջ: Ցավոք, այս յուրօրինակ ընկերությունը ընդհատվեց Մանթաշի անժամանակ մահով, սակայն գոնե ինձ համար այդ բանավեճը մինչ այսօր դեռ շարունակվում է: Ընկերություն էր, որը համեմված չէր հաշտ շփումներով և ականջահաճո բառապաշարով. այլ լեցուն էր «մանթաշական կսմիթներով», որոնք մեղվի խայթոցի պես ժամանակ առ ժամանակ ցավեցնում էին ինձ, սակայն անչափ օգտակար էին կյանքիս ընթացքին…

Այնպես ստացվեց, որ երիտասարդ տարիներին Մանթաշ Մակիչյանը դարձավ իմ ուսանողը: Մեր ընկերությունն սկսվեց «Ժողինստիտուտի» լսարաններից: Տարիքային տարբերությունն այնքան էլ մեծ չէր. Մանթաշը, թեև փոքր-ինչ ամաչելով, բայց իրեն հատուկ հանդգնությամբ հանդիմանում էր ինձ, երբ փորձում էի շրջանցել բարեվարքության կանոնները. ասենք՝ դասի ժամանակ կոնֆետ ուտել կամ լսարանում փողոցային անեկդոտներ պատմել:

Տարիներ անց Մանթաշի հետ սկսեցի աշխատել Հյուսիսային համալսարանում, որտեղ շարունակվում էին մեր անկեղծ շփումները, իհարկե, արդեն պրոռեկտոր-դասախոս հարթակում. շարունակվում էին նաև Մանթաշի կողմից մատուցվող կյանքի դասերը: Գուցե ընկերոջս «կսմիթներն» այդ պահերին ինձ այնքան էլ հաճելի չէին, բայց հաստատ օգտակար էին: Եվ զարմանալին այն էր, որ ամեն անգամ մեծահոգի այդ հսկայից ստանալով «կսմիթներ», ոչ թե վիրավորվում, այլ մտորումների դաշտ էի տեղափոխվում՝ փորձելով հասկանալ դրանց խորությունը:

Իր մահվանից մեկ շաբաթ առաջ աշխատակիցներով և ուսանողներով Երևանից մեկնեցինք Դսեղ՝ թումանյանական աշխատաժողովի: Այնտեղ մեզ միացան Հյուսիսային համալսարանի Ալավերդու բաժանմունքի ուսանողները: Էլ ինչ Լոռի՝ առանց բնության գրկում աղ ու հացի: Միասին բարձրացանք Դսեղի հայտնի լճերը, սեղաններ բացեցինք անտառի փեշին, կերանք-խմեցինք, ու վերադարձին, առանց որևէ մեկի կարծիքը հարցնելու, սկսեցի սեղանից ինչ-որ բաներ վերցնել՝ մտածելով, թե պետք կգա դեպի Երևան տանող երկար ու ձիգ ճանապարհին: Տեսնելով դա՝ Մանթաշը նախատեց ինձ . «Էս ի՞նչ եք անում, պարոն Ճուղուրյան. մենք գնում ենք, իսկ ալավերդցի ուսանողները դեռ մնում են.

ամեն ինչը թողեք երեխեքին, իսկ մենք ճանապարհից կվերցնենք՝ ինչ պետք է »:

Իրոք, Մանթաշ Մակիչյանը մեծահոգի էր շրջապատի հանդեպ: Նրան սիրում էին բոլորը՝ ուսանողներից մինչև դասախոսներ, բուհի աշխատակազմից մինչև ծնողներ: Սիրում էին անգամ այն պարագայում, երբ դաստիարակչական «կսմիթներ» էր շաղ տալիս, որոնք միշտ ընդունելի էին բոլորի կողմից և զարմանալիորեն ցավոտ չէին: Եվ դա նրանից էր, որ մեծ սիրտ ուներ ու որևէ մեկին ցավեցնելու ցանկություն չուներ: Մանթաշը ցավեցրեց մեզ ընդամենը մեկ անգամ. երբ հեռացավ շատ անսպասելի, շատ անժամանակ, շատ անհավատալի…փոխարենը թողեց լուսավոր հետք, բարի համբավ, ջերմ ու հաճելի հիշողություններ…

Հյուսիսային համալսարանի դասախոս՝
պրոֆեսոր Արմեն Ճուղուրյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Պարույր Սևակ - 100

Վալերի Միրզոյան	Պարույր Սևակի սոցիալ-փիլիսոփայական դիտարկումները……..	8
Արմեն Ճուղուրյան Սաթեն Ալավերդյան	Աշխարհընկալումը սևակյան ութնյակների դիտանկյունից……	42

Մանկավարժություն

Լեյլի Կարապետյան	«Խաղս լինելը»՝ ստեղծագործ գոյակերպի հիմնարար խթան…….	53
Мария Вартанян	**Сотрудничество семьи и вуза как фактор успешной социализации личности……**	63
Artyom Davtyan	**The bases of technical training among young wrestlers in the multi-year process…….**	68

Իրավագիտություն

Վահե Հովհաննիսյան	Փաստաբանության ինստիտուտը՝ որպես իրավական պետության կայացման պարտադիր պայման և հրամայական……	74
Լիաննա Հակոբյան Լիլիա Յոլչյան	Կրթության (նախադպրոցական, արտադպրոցական) ոլորտում ՏԻՄ-երին վերապահված լիազորությունները և դրանց կիրարկման հիմնախնդիրները ՀՀ-ում…….	85
Վահագն Պետրոսյան	«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը նոր խմբագրությամբ շարադրելու իրավական անհրաժեշտությունը և դրա ընդունման հայեցակարգային մոտեցումները……..	101

Երիտասարդ հետազոտողի ամբիոն

Shaik Adil Reaz	**Peculiarities of entrepreneurship……**	116

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ «ՀՅՈՒՍԻՍԱՓԱՅԼ»-Ի ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Հյուսիսափայլում» տպագրության ներկայացվող հոդվածների տեխնիկական պահանջները.

- Տպագրության ներկայացվող հոդվածները պետք է գրված լինեն Word տեքստային խմբագրի օգնությամբ:
- Հոդվածները ներկայացնել հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն լեզուներով:
- Հոդվածի շարվածքը լինի Unicode-ով (հայերեն հոդվածների դեպքում՝ նաև Sylfaen տառատեսակով), տառաչափը՝ 11, միջտողային հեռավորությունը՝ 1.5, թղթի ֆորմատը՝ A 4:
- Հոդվածի սկզբում գրել վերնագիրը՝ մեծատառերով, հաջորդ տողում՝ հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ մեծատառերով:
- Հղումները դնել տողատակում՝ համարների աճման կարգով, նշել աղբյուրը՝ հեղինակին, վերնագիրը, հրատարակության վայրը, տարեթիվը (պարբերական հրատարակության դեպքում՝ նաև համարը) և էջը (էջերը):
- Հոդվածի վերջում գրել հայերեն, ռուսերեն և անգլերեն ամփոփագրերը՝ 50-60 բառի սահմաններում, հիմնաբառերը:
- Հոդվածին անհրաժեշտ է կցել նաև (առանձին էջով կամ առանձին ֆայլով) հոդվածի վերնագիրը և հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, ինչպես նաև հեղինակի (հեղինակների) տվյալները՝ կոչումը, պաշտոնը, աշխատանքի վայրը, հեռախոսի համարը (համարները), էլեկտրոնային փոստի հասցե (e-mail):
- Հոդվածները ներկայացնել էլեկտրոնային տարբերակով.
  - Երևանի Հյուսիսային համալսարան, խմբագրական խորհուրդ,
  - ուղարկել hyusisayin@gmail.com էլեկտրոնային փոստին:

ՀՅՈՒՍԻՍԱՓԱՅԼ

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
2023 2 (12)

ЮСИСАПАЙЛ

НАУЧНЫЙ ЖУРНАЛ
2023 2 (12)

HYUSISAPAYL

SCIENTIFIC JOURNAL
2023 2 (12)

Համարի պատասխանատու՝ Ա. Ճուղուրյան

Համակարգչային ձևավորում՝ Ի. Մարուխյան

Գիտական հանդեսի էլեկտրոնային տարբերակը տեղադրված է Հյուսիսային համալսարանի www//northern.am պաշտոնական կայքում:

Չափսը՝ 60x84 1/16
Տպագրություն օֆսեթ՝ 6.6 մամ.
Տպաքանակ՝ 120
Տպագրված է՝ Մեկնարկ ՍՊԸ-ում
Երևան-25, Աբովյան 41